



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



14 JUL 2009

D



14

11

11

1-907

15.
U-66

15
U-71

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԼՈՅՍ»

44
48
48

ԲՆԵՇՐԱԵԿԵՆԻ ՄԸ
ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐԸ

45



ԱՏԼԱՆՏԻԿԱՆ ՏՊԱՐԱՆ
Atlantic Press
Boston, Mass.
1905

ՆԵՐՆՉԻՆ

Ներչնչման անսպառ աղբիւր մըն է Բնաշրջման վարդապետութիւնը: Անհուն կարելիութեանց աշխարհներ կը պարզուին մեր առջև երբ անոր պայծառ լուսոյն տակ դիտենք բնութիւնն ու մարդկային կեանքը: Գրքոյկիս մէջ ամփոփուած գրութիւններու այս շարքին նպատակն է Հայ հասարակութեան ներկայացնել մի քանին այս վսեմագոյն ներչնչումներէն զոր բնաշրջման վարդապետութիւնը կուտայ մեզ մարդկային կենաց նկատմամբ:

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ



4174 85

ԻՏԷԱԼԻՆ ԾՆՈՒՆԴԻ

1

Ամենէն նշանակալից քայլն էր որ առաւ
մարդկային սեռը իր բնաշրջական վերելքին մէջ,
երբ սկսաւ յարաբերութիւններ գտնել արտաքին
աշխարհէն իր ստացած ազդեցութիւններուն մի-
ջեւ: Ձգայարանաց միջոցաւ իր ուղեղին վրայ
տպաւորուող ազդեցութեանց միջեւ յարաբե-
րութիւններ գտնելու այս կարողութիւնն էր որ
անհուն անջրպետ մը հաստատեց մարդուն եւ
կենդանեաց բոլոր միւս սեռերուն միջեւ, որ Բա-
նական Էսկը ստեղծեց Մարդ - Անասունին մէջ,
եւ այսպէս ընդունակ ըրաւ զանիկա իտէալներ
կազմելու եւ իտէալներէ գրաւուելու:

2

Լուսարանենք վերի պտրբերութեամբ ար-
տայայտուած ճշմարտութիւնը:

Դուրս կը նայիմ պատուհանէս, եւ կը տես-
նեմ տուներ, բլուրներ, ծառեր, ծաղիկներ, թռ-
չուններ, կառքեր և ուրիշ բազմաթիւ արտաքին
իրողութիւններ: Լուսոյ ճառագայթներ կը ցո-
լանան բոլոր այս առարկաներէն եւ կը թափան-
ցեն աչքիս: Տեսողական ջիղերու միջոցաւ դէ-
պի ուղեղս կը յառաջանան ասոնց արտագրած
ազդեցութիւններուն հոսանքները ու կը տպա-
ւորուին անոր վրայ: Արտաքին աշխարհն զգա-

յարանաց սեւէ միոյն միջոցաւ ուղեղին հասնող ազդեցութիւնները իրենց համապատասխան ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ (impression) կը գրոշմեն անոր վրայ: Այսպէս զանազան գոյներու տպաւորութիւններ կ'ստանամ ուղեղիս վրայ, երբ դաշտանկար մը դիտեմ. բուրումներու տպաւորութիւններ, երբ հոտոտեմ պարտէզին ծաղիկները. ճաշակելեաց տպաւորութիւններ, երբ ծծեմ քաղցր կամ լեղի հեղուկ մը. շօշափելեաց տպաւորութիւններ, երբ մուշտակ մը քսուի երեսիս. տաքի կամ պաղի տպաւորութիւններ, երբ տաք կամ պաղ ջուրի մէջ թաթխեմ ձեռքերս: Իրենց համապատասխան ՁԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ (sensation) յառաջ կը բերեն մտքիս մէջ՝ ուղեղիս վրայ գրոշմուած այս տպաւորութիւնները. ինչ որ տպաւորութիւն մըն է լոկ ուղեղին կողմէն դիտուելով, զգայութիւն մըն է մտքի կողմէն դիտուելով. նոյն իրողութեան տարբեր կողմերն են ասոնք: Զգայութիւն մըն է զգայարանաց սեւէ միոյն միջոցաւ մեր մտքին ներկայացող ամէն բան. զգայութիւններ են, այսպէս, ձայն, գոյն, հոտ, համ, տաքութիւն, կարծրութիւն, եւ այլն:

Արդի հոգեբանութիւնը հաստատած է թէ անորոշ, խառնաշփոթ ու ընդհանուր են մանկան մը ունեցած զգայութիւնները: Զգայարաններէն ներս հոսող բազմատեսակ ազդեցութիւնները գունազան ու պղզացող խառնաշփոթութիւն մը միայն յառաջ կը բերեն անոր մտքին մէջ: Գոյներու եւ ձայներու, համերու եւ հոտերու, եւ ուրիշ զգայութեանց այս խառնաշփոթութիւնն է ահա անոր ամբողջ տիեզերքը: Գոյութիւն

չունին իրեն համար անջատ անջատ զգայութիւններ: Խառնիխուռն եւ անճանաչելի զգայութեանց քառս մըն է իր միտքը: Այն ատեն միայն կ'սկսի ճանչնալ իր ունեցած զգայութիւնները, երբ պատեհութիւն ունենայ անցեալ փորձառութիւններու հետ բազդատել զանոնք: Հաճոյք կ'զգայ, զորօրինակ, լոյսի ու կաթի առթած զգայութիւններէն, եւ ապերջանիկ կ'զգայ ինքզինքը ժամանակ մը անոնցմէ զրկուելով: Այսպիսի փորձառութեամբ մը կը կարողանայ զատել իր ընդհանուր զգայութեանց քառսէն լոյսի եւ համի զգայութիւնները, ու կը ճանչնայ զանոնք երբ կրկին ներկայանան իր մտքին: Փորձառութեան շնորհած այսպիսի վերլուծումներու շնորհիւ անջատ անջատ զգայութեանց տիեզերքի մը կը վերածուի տակաւ մանկան մտքին մէջ տիրող խառնաշփոթութիւնը: Ասկէ կը ծնանի ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ. առանց ներկայ զգայութիւնները անցեալ փորձառութեանց հետ հակադրելու կարողութեան՝ չկայ գիտակցութիւն: Ներկայ զգայութեանց տիեզերքի մը մէջ միայն սպրող արարածը չկրնար երբեք գիտակցութիւն ստանալ:

§

Բայց արտաքին աշխարհի ազդեցութեանց միջոցաւ մեր մտքին մէջ ծնունդ առնող զգայութիւնները իրարմէ զանազանելով տարբեր տարբեր յատկութիւններու միայն կրնանք գիտակից ըլլալ, եւ ոչ թէ առարկաներու կամ անձերու, որչափ ատեն որ յարաբերութիւններ չենք հաստատած այդ զանազան զգայութիւններուն:

միջեւ: Պայծառութեան զգայութիւն մըն է լուկ
 ճրագը մանկան համար, ե ոչ թէ լուսատու ա-
 ռարկայ մը: Կարծելի համ մըն է կաթը, եւ
 ոչ թէ հեղուկ մարմին մը: Հաճոյաութ ներ-
 գործութիւն մըն է մայրը, եւ ոչ թէ անձ մը:
 Մտքին մէջ տիրող մեծ խառնաշփոթութիւնը
 վերլուծելով եւ իր բաղկացուցիչ մասերուն վե-
 րածելով կ'ստանայ մանկիկը գոյնի, ձայնի, շարժ-
 ման, ձեւի, քաղցրութեան, ծանրութեան, ջեր-
 մութեան զգայութիւնները, կը ձանձնայ բազ-
 մաթիւ յատկութիւններ, բայց ոչ առարկաներ
 կամ անձեր: այս վերջինները գոյութիւն չունին
 իր տիեզերքին մէջ:
 Միջոցի այս ինչ կէտէն, սակայն, մէկէ ա-
 ւելի տպաւորութիւններ կ'ընդունի մանկիկը նոյն
 վայրկեանին: Կը նայի սեղանին վրայ դրուած
 վառ ճրագին, եւ պայծառութեան զգայութիւնը
 կ'ունենայ: ձեռքերը կը մօտեցնէ անոր, եւ տա-
 քութեան զգայութիւնն ալ կ'աւելնայ: մատները
 կը դպնէ անոր բոցին, եւ այրելու զգայութիւնն
 ալ կը միանայ միւսներուն: Այսպիսի փորձա-
 ութիւններով յաջորդաբար կ'ստանայ նաեւ ըզ-
 գայութիւններ անոր ծանրութեանը, մեծու-
 թեանը, ձեւին եւ ուրիշ յատկութեանց մասին:
 Կրկնակի փորձառութիւններով տեւական կապակ-
 ցութիւն մը կը գտնէ այս զանազան զգայու-
 թիւններուն միջեւ, այնպէս որ երբ ճրագին պայ-
 ծառութիւնը միայն տեսնէ՝ գիտէ թէ տաքու-
 թիւն, այրելու կարողութիւն, կարծրութիւն
 եւ ուրիշ առանձնայատկութիւններ եւս գոյու-
 թիւն ունին անոր հետ: Միջոցի ու ժամանակի
 երկու դերձաններովը խուրձ մը կը կազմէ իրա-

ռու հետ տեւականօրէն կապակցուած այս զգայու-
 թիւններէն ու կը դնէ մտքի գրպանին մէջ:
 Զգայութիւններու այս ամբողջական խուրձն է
 ահա որ ճրագին գիտակցութիւնը կուտայ ման-
 կան, որ կարելի կ'ընէ անոր համար ձանձնալ
 ճրագը իրբեւ առարկայ մը, եւ ոչ թէ զգայու-
 թեանց խառնուրդ մը լուկ: Տեւականօրէն իրա-
 րու հետ կապակցուած զգայութիւններու խուրձ
 մըն է ինչ որ իր կամ անձ կը կոչենք: խուրձ
 մը կազմող զգայութիւններէ՝ ուեւէ մին խոր-
 չրդանշանը կը դառնայ իր մնացեալ ընկերներուն,
 այնպէս որ զանոնք ալ կ'արթնցնէ մտքին մէջ
 երբ ինքը միայն յառաջ գայ արտաքին ազդե-
 ցութեան մը միջոցաւ: Ելեքտրակառքի մը ամ-
 բողջական մտապատկերը կը յայտնուի իսկոյն
 մտքիս մէջ, երբ անոր փողոցէն անցնելու ձայնը
 միայն լսեմ: որովհետեւ ձայնի այդ մասնաւոր
 զգայութիւնը կը քաշէ երեւան կը բերէ նաեւ
 իր մնացեալ ընկեր—զգայութիւնները որոնք
 խուրձ մը կը կազմեն իրեն հետ:—Ելեքտրակառ-
 քին մեծութեանն ու ձեւին, անոր ներքին ու ար-
 տաքին կազմութեանը, անոր շարժումին, անոր
 մէջ նստողներուն եւ զայն վարողին, ու շատ
 մը ուրիշ յատկութեանց զգայութիւններ: Ելեք-
 տրակառքը իրբեւ առարկայ մը կը պատկերանայ
 մտքիս մէջ, թէեւ դրսէն եկող ազդեցութիւնը
 ձայնի զգայութիւնը միայն առթեց մտքիս:
 Արտաքին աշխարհէն ստացուած կապակցեալ
 զգայութիւններէ այսպիսի խուրձեր կազմելու
 կարողութիւնը կամ գործողութիւնը կը կոչուի
 ըՄԲԻՆՈՒՄ (perception):

Մեր նիւթին համար խիստ կարեւոր է ըմբռնումը զանազանել Ձգայութենէն: Ծառ մը կը տեսնեմ դաշտին մէջ բարձրացած: Բայց ինչ է տեսածս իրապէս. — գոյներու անկանոն ուրուադիծ մը լուկ: Տեսողական այդ զգայութիւնը, սակայն, նշանակին է շատ մը ուրիշ զգայութիւններու, որոնք իրեն հետ միասին գտնուած են անցեալ փորձառութիւններու մէջ: Այսպէս, գոյներու խառնուրդի մը այդ միակ զգայութիւնը անմիջապէս կ'արթնցնէ մտքիս մէջ գաղափարներ ծառին ինձմէ ունեցած հեռաւորութեանը, անոր հաստութեան ու բարձրութեանը, անոր տաքութիւն արտադրելու թագուն կարողութեանը, կացինի մը հարուածներուն տակ անոր արձակելիք ճարձատիւնին, անոր շուքին արձակած զովութեանը, դաշտանկարին վրայ անոր աւելցուցած գեղեցկութեանը, անոր իբր վառելանիւթ ունեցած դրամական արժէքին, անոր արտադրած պտուղներուն, անոր կազմական մասնայատկութիւններուն կամ բուսաբանական դասակարգմանը, եւ անոր ունեցած շատ մը ուրիշ յատկութեանցը մասին: Գոյներու խառնուրդ մը կը տեսնեմ ես, բայց ծառ մը կ'ըմբռնեմ: Տեսողական զգայութիւն մը միայն կ'ստանամ դրսէն, բայց անոր պատկանած խուրձին միւս ընկեր-զգայութիւններն ալ յայտնուելով՝ առարկայ մը կը ձեւակերպեն մտքիս մէջ: Իր ծնած օրէն իվեր երկար տարիներ շարունակ մութ սենեակի մէջ փակուած անձ մը, Գասբար

Հաւզէր, պայծառ առաւօտ մը երբ բաց պատուհանը տարուեցաւ առաջին անգամ, չկրցաւ տեսնել տուներու, աշտարակներու, բլուրներու, ծառերու եւ դաշտերու աշխարհ մը. այլ տեսաւ միայն խառնաշփոթ ու անորոշ զանգուած մը գոյներու, զոր նկարչի մը պնակին մէջ խառնուած գոյներուն նմանցուց շատ վերջ: Առարկաներ գոյութիւն չունէին անոր համար, որովհետեւ իր մտքին մէջ դեռ չէին կազմուած իրարու հետ տեւականօրէն կապակցուած զգայութիւններու խուրձեր: Պատուհանէն առաջին անգամ դուրս նայելու պահուն կ'ստամար անբազմաթիւ զգայութիւններ, բայց զուրկ էր ըմբռնումէ: Գոյնի ու ձայնի, համի ու հոտի բարեխառնութեան եւ ծանրութեան տիեզերքի մը միայն կը ծանօթացնեն զմեզ մեր զանազան զգայութիւնները. ըմբռնումն է որ կը կազմակերպէ ծաղկի ու տունկի, աստղի ու վտակի, բլուրի ու տան, թռչունի ու ծովի, առարկաներու եւ դէպքերու տիեզերքը: Միջոցի մէջ իրարու կապակցեալ զգայութիւններու միացումէն կ'ունենանք առարկայից ըմբռնումներ, իսկ ժամանակի մէջ իրարու կապակցեալ զգայութիւններու միացումէն՝ դէպքերու ըմբռնումներ: Մեր զգայարանաց ունէ միոյն վրայ ազդող առարկայի մը մէջ այնչափ բան միայն կը գտնենք որչափ բան որ արդէն իսկ գոյութիւն ունի մեր մտքին մէջ, որչափ բան որ չաճած ենք մեր անցեալ փորձառութիւններէն, դիտողութիւններէն, ուսումներէն ու խորհրդածութիւններէն: Ասոր համար է որ իրարմէ շատ տարբեր կրնան ըլլալ մեր ըմբռնումներ

զանազան առարկայից ու դէպքերու մասին, թէև նմանօրինակ զգայութիւններ ընդունինք անոնցմէ այսինչ պահուն. նմանօրինակ ազդեցութեամբ մը կը ներգործէ ծառը խումբ մը գիտողներու տեսողական զգայարանաց վրայ, բայց որչափ կրնան տարբերիլ ասոնց նոյն պահուն կազմած ըմբռնումները. բուսաբանը կ'ըմբռնէ անոր հրաշալի կազմն ու կեանքի գործունէութիւններ, արուեստագէտը՝ անոր ընծայած գեղեցկութիւնը, վաճառականը՝ անոր շուկայի արժէքը, պարտիզպանը՝ անոր արգիւնարեքումը, փայտահատը՝ անոր ճարճատիւնը կացինի առջեւ, աշխատաւորը անոր զովացուցիչ շուքը, և այլն: Այսպէս, ներսէն կուգան յաւէտ ուէ վայրկեանի մէջ մեր ունեցած տեսութեանց ամենամեծ մասը քան թէ դրսէն: Գիտունի մը, արուեստագէտի մը, սուրբի մը կամ մարգարէի մը տիեզերքը անհունապէս կը տարբերի տղու մը կամ տգէտի մը տիեզերքէն, որչափ ալ նմանօրինակ զգայութիւններ ընդունին ա սոնք որոշեալ ժամանակի մը մէջ, որովհետեւ առաջիններուն մտացը մէջ կը գտնուի ըմբռնումներու անհունութիւն մը որմէ գուրկ են վերջինները, որովհետեւ այդ որոշեալ վայրկեանին դրսէն ստացուած իւրաքանչիւր զգայութիւն անցեալ ու հեռաւոր շատ աւելի բազմաթիւ զգայութիւններու խորհրդանշան մըն է առաջնոյն համար քան թէ վերջնոյն: Մեր մտքին մէջ կազմուած տիեզերքին ցոլացումն է որ կը տեսնենք դուրսը. և ըմբռնումներէ ձեւակերպուած է ան:

Անշուշտ զգայութիւններէ կ'արտադրուին

մեր բոլոր ըմբռնումները, ինչպէս բամպակէ կ'արտադրուին բոլոր կտաւեղէնք: Առանց ըզգայութեան չկրնար գոյութիւն առնել ըմբռնումը, ինչպէս առանց բամպակի չկրնար գոյութիւն առնել կտաւեղէնը: Բայց իմացական կարողութիւն մը կամ գործունէութիւն մը անհրաժեշտ է որ ըմբռնումներու վերածէ զանազան զգայութիւններ, ինչպէս հորեր, ճախարակներ ու կտաւագործներ, անհրաժեշտ են բամպակը կտաւի վերածելու համար: Յաւի տեսնապէս անգործ պիտի մնար մեր իմացական մեքենայութիւնը եթէ զգայութիւնք նիւթ չը մատակարարէին իրեն, ինչպէս ոչինչ պիտի կրնային ընել հորերն, ճախարակներն ու կտաւագործներ եթէ բամպակ չհայթայթուէր իրենց: Ասկէ բնաւ չհետեւիր, սակայն, թէ ինքնաբերաբար ըմբռնումներու կը վերածուին մեր զգայութիւնները: Մինչեւ որ նիւթապաշտութիւնը չյաջողի ապացուցանել մեզ թէ ինքնիրեն կը մանուի, կը հիւսուի ու կտաւի կը վերածուի բամպակը, չպիտի կրնայ համոզել զմեզ թէ ինքնիրենց ըմբռնումներու կը վերածուին արտաքին աշխարհէ ստացուած զգայութիւնները, և թէ այդ գործը կատարող իմացական կարողութիւն մը, միտք մը, գոյութիւն չունի մարդուս մէջ:

Զգայութեան մը ծնունդ կուտայ զգայարանաց միջոցաւ ուղեղին վրայ գործմուող մէն տպաւորութիւն, բայց միտքն է, աննիւթ կարողութիւն մը, որ կապակցութիւններ կամ յարաբերութիւններ կը գտնէ այդ զգայութեանց միջեւ ու այսպէս ըմբռնումներու կը

վերածէ զանոնք: Մէկէ աւելի զգայութիւն կ'ենթադրէ ամէն ըմբռնում, բայց ոեւէ ըմբռնում չենթադրեր զգայութիւնը: Աշխարհս կազմող տարրերու եւ կամ լեզուի մը բառերը կազմող գրերուն եթէ նմանցնենք զգայարանաց միջոցաւ յառաջ եկող զգայութիւնները, այն ատեն աշխարհի բաղադրեալ մարմիններուն եւ կամ լեզուի մը բառերուն նմանցնելու ենք մտքին մէջ կազմուող ըմբռնումները: Ոչ մէկ ըմբռնում պիտի կրնար ծնունդ առնել զգայութենէ զուրկ ոեւէ արարածի մէջ, ինչպէս ոչ մէկ բաղադրեալ մարմին եւ կամ ոչ մէկ բառ պիտի կրնար կազմուիլ եթէ գոյութիւն չունենային նախ տարրերն ու գիրեր: Բայց ըմբռնելու մտաւոր կարողութենէ զուրկ էակի մը մէջ կրնայ գոյութիւն ունենալ բազմաթիւ զգայութիւններու անհունութիւն մը, ինչպէս կրնայ գոյութիւն ունենալ բաղադրեալ մարմիններէ զուրկ քառս մը անթիւ տարրերու: Եւ կամ բառեր չկազմող հսկայ դէզ մը գիրերու: Զանազան զգայութիւններ միայն կ'առթէ մեզ արտաքին աշխարհը. մարդկային միտքն է որ կ'ստեղծագործէ ասոնցմէ առարկաներու, երևոյթներու եւ դէպքերու տիեզերքը՝ այնպէս ինչպէս կ'երեւի մեզ:

5

Մարդկային միտքը ոչ միայն կարող է առարկաներ ըմբռնել, այլ եւ կարող է յարաբերութիւններ ըմբռնել տարբեր առարկայից ունեցած զանազան յատկութիւններուն միջև:

Կնքամոմ մը ու գրչիս ծայրը սրբելու համար պատրաստուած լաթի կտոր մը կը գտնուի առջեւս: Փոփոխակի կը նայիմ այդ կնքամոմին ու սրբիչին, եւ ուշադրութիւնս կը գրաւուի սախողութեան թէ նմանութիւն մը կայ անոնց ազդած մէկ զգայութեանը միջեւ, այսինքն թէ իրարու նման են անոնց գոյները: Գոյնի այս նմանութիւնը ըմբռնելու գործողութեանս ատեն, այդ երկու տարբեր առարկայից ազդած զանազան զգայութիւններէն գոյնի մասնաւոր զգայութիւնը գերակայութիւն մը կ'ստանայ մտքիս մէջ, ու երկրորդական գիրքեր կը գրաւեն միւս զգայութիւնները: Այսինքն, միտքս շատ աւելի կը գրաւուի այդ առարկաներու գոյնովը քան թէ ձեւովը, մեծութեամբը կամ ուրիշ ոեւէ յատկութեամբ. մինչեւ անգամ կրնայ ըլլալ որ ուշադրութենէս բոլորովին վերիպին այս առարկաներուն երկրորդական յատկութիւններէն ոմանք: Կարմիր կողքով գիրք մըն ալ կը գտնուի սեղանիս վրայ, բայց տարբերութիւն մը կը գտնեմ կնքամոմին և այս վերջին առարկային ունեցած գոյներուն միջեւ. առաջինը բաց-կարմիր է, իսկ վերջինը մթագոյն: Արդ ըմբռնելու կարողութեանս շնորհիւն է որ նմանութիւններ կամ աննմանութիւններ կրնամ գտնել տարբեր առարկայից յատկութիւններուն միջեւ: Այսպէս, կ'ըմբռնեմ կնքամոմին ու սրբիչին ունեցած գոյներուն նմանութիւնը, ինչպէս նաև ասոնց ու գրքի կողքին ունեցած գոյներուն աննմանութիւնը: Յայտնի է թէ տարբեր առարկայից ունեցած յատկութիւններուն յարաբերութիւններն է որ կ'ըմբռնենք, ու ոչ

Թէ բուն իսկ յատկութիւնները: Զգայութեամբ գիտակից կ'ըլլանք առարկայից յատկութիւններուն, բայց ըմբռնմամբ յարաբերութիւններ կը հաստատենք անոնց միջեւ: Կնքամոմին ու սրբիչին կամ գրքի կողքին գոյները միայն կուտայ մեզ զգայութիւնը, իսկ ըմբռնումը գիտակից կ'ընէ զմեզ այդ գոյներուն ունեցած նմանութեանը կամ աննմանութեանը: Երկու տարբեր զգայութիւններ կ'ունենամ երբ յաջորդաբար լսեմ երկու ձայներ. այն ատեն միայն կրնամ ըմբռնել այդ ձայները երբ բաղդատեմ զանոնք իրարու հետ ու նմանութիւններ կամ աննմանութիւններ գտնեմ անոնց միջեւ. երբ գտնեմ, զոր օրինակ, թէ մին միւսէն աւելի բարձր է կամ աւելի հեշտալուր: Զանազան զգայութիւններ միայն կ'ունենամ երբ յաջորդաբար ճաշակեմ մեղր ու շաքար, կամ հոտոտեմ վարդ ու մանուշակ, եւ կամ տեսնեմ ծաղիկներ, թռչուններ ու մարդկային դէմքեր. այն ատեն միայն ըմբռնումներ կը կազմուին մտքիս մէջ երբ իրարու հետ բաղդատեմ այդ զանազան զգայութիւնները, ու կարենամ որոշել թէ այսինչ զգայութիւնը աւելի հաճելի կամ նախընտիր է քան ուրիշ մը: Զգայութեան մը ծնունդ կուտայ զգայարանաց միջոցաւ ուղեղին վրայ դրոշմուող ամէն տրպաւորութիւն, իսկ ըմբռնում մը կը կազմուի այդ զգայութեանց միջեւ յարաբերութիւններ գտնող մտաւոր ամէն գործնէութեամբ: Ըմբռնելու կարողութեամբ օժտուած միտքն է այսպէս որ կ'ստեղծագործէ յարաբերութեանց անթիւ կապերով հիւսուած տիեզերք մը:

Անգիտակից յիշողութիւն մը կ'ենթադրէ ամէն ըմբռնում: Ճիշդ այս պահուս գոյներու խառնուրդ մը լոկ կը տեսնեմ հեռին, բայց ծառ մը կ'ըմբռնեմ, որովհետեւ տեսողական ներկայ զգայութեանց ազդեցութեամբը անմիջապէս ու անգիտակցօրէն կը յիշեմ նաեւ կարգ մը ուրիշ զգայութիւններ՝ զորս անցելոյն մէջ ունեցած եմ գոյնի այդ մասնաւոր զգայութեան հետ միասին: Բացարձակապէս անկարելի է լստի ըլլար մարդկային մտքին համար ըստ նեւ ուէէ բան՝ առանց անգիտակցօրէն յիշելու այսպէս կարողութեան մը:

Բայց գիտակից յիշողութիւնն է որ կուգայ ազատել զմեզ ներկային նեղ բանտէն, եւ առաջնորդել անցեալ ընդարձակ աշխարհներուն մէջ: Գիտակից յիշողութենէ զուրկ միտքը պիտի կրնար ըմբռնումներ կազմել անմիջական զգայութեանց ազդեցութեամբ, բայց չպիտի կրնար երբեք վերսրտագրել իր անցեալ ըմբռնումները: Առջեւ տարածուող դաշտանկարի մը վերայ նայելով կրնամ ես ըմբռնել ծառեր ու ծաղիկներ, մարդազետիւններ ու առուակներ՝ առանց գիտակից յիշողութեան մը պէտք ունենալու, բայց չեմ կրնար վերստանալ ըմբռնումները այն ծառերուն ու ծաղիկներուն, այն մարդազետիւններուն եւ առուակներուն զորս տեսայ անցեալ օր կամ անցեալ տարի: Յիշողութիւնն է որ հաւատարմաբար կը պահպանէ

մեր անցեալ զգայութիւններն ու ըմբռնումներ, մեր փորձառութիւններն ու ժառանգութիւններ, մեր տառապանքներն ու երջանկութիւններ, ամբողջ մթերքը մեր մտքին ու սրտին: Անոր շնորհիւ կրնամ մտքիս առջեւ պատկերացնել ծաղիկ մը զոր տեսած եմ տարիներ առաջ, և կամ եղանակ մը որուն ունկնդրեցի անցեալ շաբթու: Արտաքին այդ գոյութիւնները չեն ազդեր այժմ իմ զգայարաններուս վրայ, ոչ կը տեսնեմ այդ ծաղիկը ու ոչ ալ կը լսեմ այդ նուազին ձայնը, բայց անցելոյն մէջ տեսողական ու լսողական զգայարանացս միջոցաւ տպաւորուած են անոնք ուղեղիս վրայ և յառաջ են բերած իրենց համապատասխան զգայութիւններ մտքիս մէջ. անցեալ զգայութիւններն են ահա եւ անոնցմէ կազմուած ըմբռնումները որ կը վերակենդանանան կրկին յիշողութեամբ: Զգայական-Քաղափար (Sense-idea) կը կոչուին մտաց մէջ վերարտադրուող բոլոր անցեալ զգայութիւններ: Կրնանք պարզապէս «Քաղափար» կոչել զանոնք, ինչպէս նաև անցեալ ըմբռնումներու վերարտադրութիւնները:

Քաղափարաց անհուն աշխարհ մը կը գտնուի այժմ մտքիս մէջ. աշխարհ մը՝ անցեալ բիւր զգայութիւններու, ըմբռնումներու, եւ փորձառութիւններու. աշխարհ մը՝ անհունապէս աւելի ճոխ, աւելի լայնարձակ ու աւելի խորհրդաւոր քան այն զոր զգայարաններս կրնան երբեք ներկայացնել ինձ: Անցեալ զգայութեանց և ըմբռնմանց յիշատակները եղող այս գաղափարներն եւս կրնամ բաղդատել իրարու եւ ներկայ զգայութեանց ու ըմբռնմանց հետ, կը-

նամ նմանութիւններ և աննմանութիւններ գտնել անոնց միջեւ, եւ կրնամ անոնցմէ մին նախընտիր համարել միւսէն: Ուրիշ բառերով, կրնամ ըմբռնել այդ գործնականապէս անթիւ գաղափարաց յարաբերութիւնները իրարու եւ ներկայ փորձառութեանց հետ: Չափազանցութիւն չպիտի ըլլայ ըսել թէ այս յարաբերութեանց ըմբռնումէն կախում ունին մեր բոլոր խորհուրդներն ու իմացական ծանօթութիւններ:

7

Կրկին կը նայիմ սեղանին վրայի կնքամոմին ու սրբիչին. կրկին կ'ըմբռնեմ անոնց գոյներուն միջեւ գտնուող նմանութիւնը, ու գըրատան դարակներուն դարձնելով աչքերս, կը տեսնեմ կարգ մը գիրքեր՝ հոս ու հոն՝ որոնց կողքերը նմանօրինակ կարմիր գոյն մ'ունին: Կը փակեմ աչքերս, և մտաւոր տեսողութեանս առջեւէն կարգաւ կ'անցնեմ կնքամոմին, սրբիչին ու կողքերուն գաղափարները: Գոյնն է ամէնէն ազդեցիկ տարրը այս գաղափարներուն մէջ: Մտքիս առջեւ շարուած այդ գաղափարներուն ներկայացուցած բոլոր միւս յատկութիւնները՝ ձևի, մեծութեան, ծանրութեան, եայլնի՝ կը վրիպին նկատողութենէս և ամբողջ ուշադրութիւնս կը դառնայ ամէնուն ալ հասարակ եղող կարմիր գոյնին: Աստիճանաբար կարմիր գոյնի գաղափարը միայն կը դրաւէ մտաւոր տեսութեանս ամբողջ դաշտը՝ անհետացնելով բոլոր միւս յատկութեանց գաղա-

փարները: Բազմաթիւ առարկաներէ ստացուած տարբեր տարբեր մտապատկերներու հասարակաց մէկ յատկութիւնը ներկայացնող այսպիսի գաղափար մը կը կոչուի «վերացական գաղափար»: Վերացական Գաղափար մը ձեւակերպել կարենալու համար անհրաժեշտ է նախ՝ ԸՆԴ-ՀԱՆՐԱՅՆԼ կարգ մը մտապատկերներու ուշագրաւ յատկութիւնները, երկրորդ՝ ԸՄԲՈՒՆԵԼ այս յատկութեանց միջեւ գտնուող նմանութիւնը, ու երրորդ՝ մնացեալ բոլոր յատկութիւններէն զատել վերցնել ըմբռնուած այս ընդհանուր յատկութիւնը: Այս կերպով կրցի կազմել, զոր օրինակ, կարմրութեան վերացական գաղափարը: Նախ՝ ընդհանրացուցի կնքամոմին, սրբիչին ու գրքի կողքերուն գոյները, այսինքն անոնց ամէնուն ալ գոյներուն դարձուցի ուշադրութիւնս: Երկրորդ՝ ըմբռնեցի այս տարբեր առարկայից ունեցած գոյներուն միջեւ գտնուող նմանութիւնը: Երրորդ՝ նոյն առարկայից միւս յատկութիւններէն զատեցի վերցուցի ըմբռնուած այս հասարակաց գոյնը, կարմրութիւնը, անտեսելով անոնց ձեւը, մեծութիւնը, ծանրութիւնը և կամ ուրիշ ուել մէկ յատկութիւնը: Այս գործողութեամբ կարմրութեան լոկ գաղափարը մնաց մտքիս մէջ՝ անջատ իրեն ծնունդ տուող առարկաներէն: Կարգ մը առարկայից հասարակաց յատկութիւններէն վերացական գաղափար մը կազմելու կարողութիւնը կամ գործողութիւնը կը կոչուի Յղացում (conception):

Յղացմամբ կը կազմեն մարդիկ կարմրութեան, մեծութեան, ծանրութեան, տաքութեան,

Handwritten notes:
 ը
 85-89-67/15

մաքրութեան, գեղեցկութեան, ճշմարտութեան, բարութեան, կամ առաքինութեան ու սրբութեան վերացական գաղափարները: Հայերէնի «թիւն» վերջաւորող բառերէն իւրաքանչիւրը, արդարեւ, նշանակն է վերացական գաղափարի մը: Մասնաւոր առարկայ մը կամ անձ մը չպատկերանար մեր մտքին առջեւ երբ վերացական գաղափար մը կ'ունենանք, այլ կը պատկերանայ ընդհանուր մէկ յատկութիւնը բազմաթիւ առարկաներու կամ անձերու: «Ծանրութիւն» ըսելով չենք հասկնար ծանր առարկայ մը, ինչպէս «Առաքինութիւն» ըսելով չենք հասկնար առաքինի անձ մը: Բայց մտնալու չենք թէ առարկաներու և անձերու մէջ գոյութիւն ունեցող հասարակաց յատկութիւններն ըմբռնելով և ուրիշ յատկութիւններէ անջատելով է որ կը կարողանանք կազմել մեր վերացական գաղափարները: Անկարելի պիտի ըլլար մեզ համար կազմել մեծութեան, գեղեցկութեան, առաքինութեան կամ սրբութեան վերացական գաղափարները, եթէ գոյութիւն ունեցած չըլլային մեծ կամ գեղեցիկ առարկաներ, եւ առաքինի ու սուրբ անձեր: Իրերու եւ անձերու ըմբռնումներն են որ հիմը կը կազմեն բոլոր մեր վերացական գաղափարներուն: Ինչպէս չկրնար ըլլալ ըմբռնում առանց Զգայութեան, նոյնպէս չկրնար ըլլալ Յղացում առանց Ըմբռնման: Զգայութենէ կ'ստանանք տարրերը մեր բոլոր ըմբռնումներուն և Յղացումներուն:



Կրաւորական գործողութիւն մըն է ըմբռնումը: ուզենք չուզենք կ'ըմբռնենք երբ տեսնենք կամ լսենք: Չմրան առաւօտ մը, զոր օրինակ, կ'ըմբռնեմ ամպամած երկինք մը, յորդահոս տարափ մը, լերկ ծառեր, անձրեւէ թրջած մարդիկ, և այլն: Չեմ կրնար այս տըհաճոյ ըմբռնումները չունենալ, որչափ ատեն որ անոնց ծնունդ տուող ազդեցութիւններ ներս կը թափանցեն աչքերէս ու ականջներէս: Մեր ըմբռնումները կրաւորաբար կը թելադրուին միշտ արտաքին աշխարհի անմիջական ազդեցութիւններէն. ներկայ զգայութեանց գերիններն են անոնք: Միջավայրի ներկայ ազդեցութեանց համեմատ կ'ըմբռնեմ ես հոս ինծի խոփոռող դէմք մը, հոն մահացու ախտի մը ճիրաններու տակ հեծեծող հիւանդ մը, ասդին անգութ հարուածներու տակ ճչող մանկիկ մը եւ անդին ալ արիւնալից կռիւ մը: Չէ կարելի ապրիլ հարստահարութեան, ապականութեան, մոլութեան ու տառապանքի զաղափարներ թելադրող զգայութեանց աշխարհի մը մէջ, ու նոյն ատեն ըմբռնել աշխարհ մը մաքուր ու աղնիւ, արդար ու երջանիկ:

Յիշողութեամբ եւս օժտուած միտքը գերին է զգայութեանց և ըմբռնմանց: Յիշողութիւնը կը պահպանէ միայն մեր անցեալ զգայութիւններն ու ըմբռնումներ, առանց ունէ կերպով փոփոխելու զանոնք: Յիշողութեան մէջ

պահպանուած ամէն զաղափար անփոփոխ կը մնայ միշտ, ու միօրինակ ազդեցութիւն մը կը բանեցնէ մեր վրայ: Եթէ բարի են եղած իմ անցեալ փորձառութիւններս ու ենջանկառիթ, յիշողութիւնը կը մշտնջենաւորէ զանոնք և կարելի կ'ընէ ինձ համար ամբողջ կենացս մէջ ունէ ատեն կրկին վայելել անցեալին այդ բարի ու երջանկառիթ փորձառութիւնները. իսկ եթէ չար են եղած ու վշտառիթ, յիշողութիւնը զանոնք ու միմիայն զանոնք կրնայ կրկնել իմ կեանքիս մէջ ունէ ատեն: Անկողմ նակալ է անիկա. աւելի եւս կ'երջանկացնէ երջանիկը՝ անոր մտքին առջև պատկերացնելով անցեալ երջանկութեանց յիշատակներ. իսկ աւելի եւս կը թշուառացնէ թշուառը՝ անոր անցեալ թշուառութիւններուն յիշատակներն ալ բարդելով իր ներկայ թշուառութիւններուն վրայ: Յիշողութիւնը կուտայ միշտ հաւատարիմ ու տևական «օրինակ»ները մեր փախչող զգայութիւններուն և ըմբռնումներուն: Աշխարհի մէջ չկայ մեծագոյն շարիք մը կամ տառապանք մը քան գերին ըլլալ տանջող յիշողութեան մը, որովհետեւ վշտառիթ զգայութիւններն ու ըմբռնումները վայրկենապէս միայն կրնան տիրել մեր մտքին մէջ: Յարափոփոխ միջավայրի մը զանազան ազդեցութիւններուն համեմատ կը յայտնուին անոնք ու կ'անհետան կրկին. իսկ վշտառիթ յիշողութիւնը անփոփոխելիօրէն կը մնայ միշտ տանջելու մեր հոգին:

Բայ կայ կարողութիւն մը մեծէն բարձր ու ամէնէն արդիւնալից կարողութիւնը մարդկային մտքին, որ կուգայ ազատել զմեզ ըզ-

գայութեան, ըմբռնման ու յիշողութեան կաշկանդիչ կապանքներէն, կարողութիւն մը որ կ'առաջնորդէ զմեզ իտէպլական յափշտակիչ բնագաւառներու մէջ: «Երեւակայութիւն» կը կոչուի այդ ամենօրհնեալ կարողութիւնը: Ներկայ և կամ յիշողութեան մէջ ամբարուած ըզգայութիւններու և ըմբռնումներու անհուն աշխարհին մէջ նոյն պաշտօնն ունի անիկա գորունի արուեստագէտը բնութեան բիւրազան իրերուն ու երևոյթներուն մէջ. — Ընտրել ինչ որ հաճելի է իրեն՝ մերժելով մնացեալը, եւ իր ընտրածներէն ստեղծագործել աշխարհ մը, նոր ու հրաշագեղ: Նոր զգայութիւններ կամ նոր ըմբռնումներ չտար մեզ երեւակայութիւնը, ոչ նոր առարկաներ ոչ ալ նոր դէպքեր, բայց կը զատէ անոնց մէջէն ընտիրը, արժանաւորը, գեղեցիկը ու հաճելին, և նոր ու ինքնատիպ շարքով մը կը ներկայացնէ մեր մտքին առջեւ: Յիշողութիւնը կուտայ մեզ անփոփոխ մէկ պատկերը մեր անցեալին, առանց ռեէ խտրութիւն դնելու հաճելին ու տհաճելին, գեղեցիկն ու տգեղին, բարին ու չարին միջեւ. իսկ երեւակայութիւնը կը զտէ անցեալ զգայութեանց և ըմբռնմանց խառնիխուռն զանգուածէն ինչ որ հաճելի կ'երեւի ու գեղեցիկ, և զայն միայն կը պատկերացնէ մեր առջեւ: Երեւակայելու կարողութեամբ օժտուած միտքը գերին չէ այլեւս զգայութիւններու և ըմբռնումներու, այլ անոնց տէրն է և իշխանը: Կը մշտնջենաւորէ վայրկենական գեղեցիկն ու բարին, և կ'ընդհանրացնէ մասնաւոր գեղեցիկն ու բարին: Այս մոգական կարողութեամբ կը

նայ ապրիլ մարդ աշխարհի մը մէջ ուր մշտնջենաւորուած և ընդհանրացած են գեղեցիկը, բարին ու ճշմարիտը, թէև վայրկենական ու մասնաւոր պարագայից մէջ միայն նոյնօրինակ փորձառութիւններ վայելել առանձնաշնորհուած ըլլայ անոր:

Սենեկիս մէջ նստած եմ առանձին. բայց կ'երեւակայեմ ծառազարդ բլրակ մը, ծաղկահիւս բուրաստան մը, քաղցրադայլայլ թռչուններ, վճիտ առուակ մը ու ջինջ երկինք մը, ծիծիփուն լճակ մը եւ ծով մը անծայր: Յիշողութեանս մէջ գոյութիւն ունեցող գործնականապէս անթիւ առարկաներէն ու երևոյթներէն կ'ընտրեմ կը զատեմ ինծի համար հաճելի ու գեղեցիկ երեւցող այս մասնաւոր առարկաներն, եւ նոր ու ինքնատիպ կերպով մը կը միացնեմ զանոնք իրարու հետ: Բլրակին կողերուն վրայ կը տարածեմ բուրաստանը, որուն մէջէն օձապտոյտ կը սողոսկի ապառաժի մը կուրծքէն հոսող վտակը ու կ'երթայ միանալ վարը դաշտավայրին մէջ գտնուող լճակին: Դայլայլող թռչուններու մէկ մասը կը զետեղեմ լճակին քով բարձրացող ծառերուն վրայ, միջդեռ միւս մասը կը սաւառնի երկնից կապոյտին մէջ, իսկ հեռուն կը պարզեմ ծովուն անհուն տարածութիւնը: Ըզգայութեանց եւ ըմբռնմանց հայթայթած նիւթերէն ստեղծագործուած այս երեւակայական աշխարհին մէջ կը բնակեցնեմ բարի ու երջանիկ ժողովուրդ մը: Երեւակայութեամբ կրնամ, այսպէս, մտքիս առջեւ պատկերացնել անցեալ փորձառութեանս սահմաններուն մէջ

գտնուող այն ամէն իրերն, անձերն ու դէպքեր որոնք գեղեցիկ են եղած, ճշմարիտ ու բարի, և կրնամ աշխարհ մը շինել անոնցմէ: Արուեստագէտը, նմանապէս, կրնայ երեւակայել գեղեցիկ տեսարաններ. բարեկարգիչը կրնայ երեւակայել ընկերութիւն մը ուր արդարութիւնը կը տիրապետէ գերիշխան, և ուր պատեհութիւն կը գտնէ ամէն անհատ իր խկատիպ արտադրութիւնները նուիրելու քաղաքակրթութեան: Քրիստոնեան կրնայ երեւակայել «Նրկինից Թագաւորութիւնը», ուր սէրն ու երջանկութիւնը կը բնակին յաւիտեան: Երեւակայութիւնը կը շնորհէ մեզ գիւցազուներու եւ սուրբերու, յաւերժահարսերու եւ հրեշտակներու, Եղիւսեան դաշտերու եւ դրախտներու աշխարհներ. մոգիչ աշխարհներն՝ երաժշտութեան ու նկարչութեան, բանաստեղծութեան ու վիպագրութեան:

9

Արտաքին ազդեցութեանց համեմատ յառաջ եկող զգայութիւններն ու ըմբռնումներ իրենց համապատասխան Յուզումներ (emotion) կ'արթնցնեն մեր մէջ: Այսպէս, ուրախութիւն կ'զգամ երբ լսեմ անոյշ նուագ մը, երբ հոտոտեմ հեշտաբոյր ծաղիկ մը, երբ դիտեմ գեղեցիկ տեսարան մը, երբ վայելեմ համեզ ճաշ մը, կամ երբ գտնուիմ բարեկամներու շրջանակի մը մէջ: Կը սոսկամ երբ լսեմ ամպերուն գոռումը կամ երբ տեսնեմ ճամբուս վրայ հսկայ օձ մը: Կը տրամիմ երբ գրկուիմ ինձ

հաճոյք պատճառող ոեւէ բանէ: Կը բարկանամ երբ ապտակ մ'իջեցնէ մէկը երեսիս եւ կամ անարգալից խօսք մ'ուղղէ ինձ: Զգայուն քրնարի մը նման շարունակ կը թրթռայ բընութեանս այն մասը որ «սիրտ» կը կոչուի առ հասարակ: Բնութեան և ընկերութեան բիւր ձայներուն արձագանգները կ'անդրադառնան միշտ անկէ իբր զանազան յուզումներ. — իբր վախ կամ բարկութիւն, զմայլանք կամ արհամարանք, սէր կամ ատելութիւն: Երկու լըրացուցիչ կողմեր ունի, այսպէս, մարդկային բնութիւնը. — Միտք և Սիրտ: Մտքին մէջ գոյութիւն առնող զգայութիւններն և ըմբռնումներ իրենց համապատասխան յուզումներ յառաջ կը բերեն սրտին մէջ:

Սրտի յուզումներն ալ կը խառնուին մեր մտքի զգայութիւններուն և ըմբռնումներուն հետ: Տեսողական պատկեր մը չէ լուկ ինձ համար հովտին մէջ սարսուացող ծաղիկը, սեղանին վրայ դրուած մեզրը կամ ինձ ժպտող դէմքը, այլ աղբիւր մը նաեւ զմայլանքի, հաճոյքի կամ սիրոյ: Սրտիս յուզումներովն են գունաւորուած մտքիս առջեւ պատկերացող զգայութիւններ ու ըմբռնումներ: Եւ յիշողութեան ատեն անցելոյն մէջ մեր տեսած առարկաներուն կամ անձերուն, մեր կամ ուրիշներուն կատարած գործերուն ոչ միայն մըտապատկերները կը ներկայանան գիտակցութեան առջեւ, այլ նաեւ անոնց առթած յուզումները. — հաճոյք կամ տհաճութիւն, վախ կամ բարկութիւն, ատելութիւն կամ սէր, երջանկութիւն կամ վիշտ, գոհունակութիւն կամ գիղջ:

Երեւակայութեամբ կ'ընտրենք կը զատենք մեր անցեալ փորձառութիւններէն այն իրերն ու անձեր, այն տեսարաններն ու ընկերակցութիւններ, այն գործունէութիւններն եւ այն յղացումներ որոնք մեր սիրտը գրաւած են, որոնք հաճոյք ու երջանկութիւն առթած են մեզ, որոնց վրայ սքանչացած ենք եւ զորս սիրած ենք: Կը բաղձանք այդ պահուն կրկին վայելել անցելոյն այդ երջանկառիթ փորձառութիւնները: Կը բաղձանք ապագայի մէջ մշտնջենաւորել ինչ որ վայրկեանական է եղած անցելոյն մէջ, իւրացնել ինչ որ ուրիշներուն վրայ տեսած ենք սիրելի ու բարձր, կը ջանանք մեր անհատական ու ընկերական կենաց մէջ մարմնացնել ինչ որ բարձր ու ազնիւ յղացում մըն է եղած մեր մտքին մէջ, եւ ընդհանրացնել ինչ որ առաքինական մէկ յատկութիւնն է եղած պատմական կամ ժամանակակից անձնաւորութեան մը: Ներկայ զգայութիւնն որ վայելքները կը զոհենք այդ բարձրագոյն ու ազնուագոյն վայելքները ձեռք բերելու համար, փոքրագոյն բարին կը զոհենք մեծագոյն բարին իրականացնելու համար մեր կեանքին եւ ուրիշներուն կենացը մէջ, ամենավեհ գաղափարներու եւ սկզբունքներու գործադրմանը համար՝ առանց արտաքին ստիպման՝ կը զրկուինք մեր բնագոյային կարգ մը հաճոյառիթ գործունէութիւններէն. ԵՒ ԱՀԱ. ԿԸ ԾՆԱՆԻ ԻՏԷԱԼԸ: Իտէալ մըն է Յիշողութեան ամբարած անհուն աշխարհէն Երեւակայութեան ընտրած ու մեր մտքին առջև ներկայացուցած ռեւէ առարկայ, անձ, գործունէութիւն կամ

յղացում, զոր կը բաղձանք իւրացնել, որուն կը ջանանք նմանիլ, զոր կը փափաքինք կրկնել կամ տեւականօրէն մարմնացնել մեր նըկարագրին մէջ: Այսպէս, շատ մը իտէալներ կը տիրեն այժմ մտքիս եւ սրտիս վրայ, ու գործունէութեան կը դրդեն զիս. իտէալներ զանազան առարկաներու՝ որոնց տիրանալ կը փափաքիմ, իտէալներ զանազան անձերու՝ որոնց հետ հաղորդակցելու եւ որոնց նմանելու կարօտը կը քաշեմ, իտէալներ ընտանեկան ու ընկերական կազմակերպութիւններու՝ որոնց մէջ ապրիլ, գործել ու երջանիկ ըլլալ կ'երագեմ, եւ իտէալներ ամէն տեսակ վերացական գաղափարներու՝ զորս մարմնացնել կը ճգնիմ իմ կեանքիս եւ ուրիշներու կենացը մէջ:

Իտէալին ծնունդը կարելի ընող անհրաժեշտ պայմաններ են մարդուս ըմբռնելու, յիշելու եւ երեւակայելու կարողութիւնները. բայց բաւական պայմաններ չեն բնաւ: Իտէալ մը չէ մտքի ուէ մէկ ըմբռնումը, յղացումը կամ երեւակայութիւնը, հոգ չէ թէ որչափ ուղիղ ըլլայ ան ու բարձր, որչափ ատեն որ առարկան չէ եղած սրտի բաղձանքներուն: Մտքին ու սրտին միացեալ գործակցութենէն է միայն որ իտէալը կը ծնի. առանց առաջնոյն գործակցութեանը բարի կամ չար դրդումներ միայն կրնայ ունենալ մարդ, իսկ առանց վերջնոյն գործակցութեան՝ գաղափարներ լոկ անգոյն ու անկենդան: Կրնայ մէկը վերացական շատ ուղիղ ու բարձր գաղափարներ կազմած ըլլալ գեղեցկութեան, արդարութեան, բարութեան ու ճշմարտութեան վրայ, կրնայ

իր մտքին մէջ գոյութիւն ունեցող այս չափանիշերուն հետ բաղդատելով մասնանիշը ընել մեզ գեղեցիկ իրերն ու երևոյթներ, արդար գործերն ու յարաբերութիւններ, կամ բարի ու ճշմարիտ անձեր. եւ նոյն ասեմն զուրկ ըլլալ գեղեցկութեան, արդարութեան, բարութեան և ճշմարտութեան իտէալներէն: Սրուեստագէտը չբաւականանար շատ մը գեղեցիկ տեսարաններ դիտելով և գեղեցկութեան մասին վերացական բարձր գաղափարներ յղանալով, այլ մանաւանդ կը բաղձայ կտաւի մը կամ արձանի մը, նուազի մը կամ տաղի մը մէջ մարմնացնել իր յղացած այդ գաղափարները ու ստեղծագործած երեւակայութիւններ, և կը ջանայ գործադրել իր այդ բաղձանքը. գեղեցկութեան իտէալը կը բնակի արուեստագէտին մէջ: Քրիստոնեան չբաւականանար Քրիստոսի կեանքը ուսումնասիրելով և անոր վրայ զմայլելով, այլ կը բաղձայ մանաւանդ Անոր նըմանիլ, ու կը ջանայ իր մէջը և ուրիշներուն մէջ մարմնացնել Անոր կեանքը. Քրիստոնէին իտէալն է Քրիստոս: Անշուշտ գեղեցկութեան իտէալը ունենալու անհրաժեշտ նախաքայլն է գեղեցիկ տեսարաններ դիտել և վերացական գաղափարներ կազմել անոնցմէ, ինչպէս գրիստոս իտէալ ունենալու անհրաժեշտ պայմանն է Անոր կեանքը ուսումնասիրել նախ. բայց միայն այսչափը բաւական չէ, բաղձանք ու ջանք ալ անհրաժեշտ են իտէալներու վերածելու համար մտքին մէջ կազմուած գեղեցկութեան յղացումներ և Քրիստոսի անձին մասին կազմուած ըմբռնումներ: Այն անձը

միայն տիրացած է բարութեան, արդարութեան ճշմարտութեան ու սրբութեան իտէալներուն, որ անկեղծօրէն կը բաղձայ գործնականացնել իր մտքին մէջ գոյութիւն ունեցող վերացական այդ գաղափարները. — որ կը ջանայ իր ըմբռնումներուն համեմատ բարիք գործել, արդարութիւն ընել, ճշմարտութիւնը խօսիլ ու գործադրել, և սուրբ կեանք մը վարել: Բաղձանք ու ջանք կ'ենթադրէ միշտ իտէալը. բաղձանք ու ջանք անհատին մէջ գոյութիւն ունեցող լաւագոյն ըմբռնումներն եւ յղացումները գործադրելու:

10

Հիմա կրնանք ըմբռնել թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ մարդկային սեռին ու կենդանական բոլոր ուրիշ սեռերու միջև զտնուող ամենամեծ տարբերութիւնը:

Տարակոյս չկայ թէ արտաքին աշխարհի ազդեցութիւնները տարբեր տարբեր զգայութիւններ յառաջ կը բերեն բարձրագոյն կենդանիին մէջ: Անիկա ալ կը տեսնէ, կը լսէ, կը ճաշակէ, կը հոտոտէ ու կը շօշափէ արտաքին իրականութիւնները, և, հետևապէս, կ'ունենայ գոյներու, ձայներու, համերու, հոտերու և բարեխառնութեան զգայութիւններ: Տարակոյս չկայ դարձեալ թէ առարկայից ըմբռնումներ եւս կազմելու կարողութիւնն ունին բարձրագոյն կենդանիք: Դրսէն քայլափոխի մը ձայնը միայն առնելով դրան ետեւ հաջող շունը մարդու մը մտապատկերը ունի հաւա-

նօրէն իր առջեւ, և շէնկոցի մը ձայնէն դէպի մառանին մէկ անկիւնը փութացող կատուն ալ մուկի մը մտապատկերը: Գիտակից յիշողութենէ ալ զուրկ չեն բարձրագոյն կենդանիք: Մասնաւոր ամանէ մը զատ ուրիշ ամէն ամանէ ուտել մերժող շունը անտարակոյս այդ մասնաւոր ամանին մէկ մտապատկերը պահած ըլլալու է իր յիշողութեանը մէջ:

Բայց կենդանին շունի յարաբերութեանց ըմբռնումներ: Չկրնար, զոր օրինակ, ըմբռնել թէ նոյն գոյնը, համը կամ հոտը ունին այսինչ առարկաները, թէ մարմարիտէն աւելի ճերմակ է ձիւնը, թէ երէկուան իր ճաշակած մէկ պտուղը աւելի համեղ էր քան այսօրուան ճաշակածը, թէ այսինչ ծաղիկէն աւելի անուշահոտ է այնինչ ծաղիկը, և այլն: Աւելորդ է ըսել թէ յարաբերութիւններ ըմբռնելու կարողութենէն զուրկ էակի մը համար բացարձակապէս անկարելի է ընդհանուր վերացական գաղափարներ յղանալ: Նոյնպէս անկարելի է այսպիսի էակի մը համար նոր ու ինքնատիպ կերպով մը իրարու միացնել իր յիշողութեանը մէջ ամբարուած անցեալ հաճոյառիթ փորձառութիւնները, այսինքն երեւակայել: Բարձրագոյն կենդանիք, ուրեմն, զուրկ են յարաբերութիւններ ըմբռնելու և իրապէս երեւակայելու կարողութենէն:

Մարդուս նման կենդանին եւս կ'ունենայ յուզումներ արտաքին աշխարհի զանազան իրերէն ու երեւոյթներէն կրած իր ազդեցութիւններուն համեմատ: Ան ալ կը վախնայ, կը բարկանայ, կ'ուրախանայ, կ'ատէ, կը նախանձի,

կը սիրէ, ու կը համակրի: Անշուշտ կը վախնայ ու կը սարսափի գառնուկը գայլի մը երևոյթէն, անշուշտ կը բարկանայ կատուն երբ իր պոչը քաշենք, անշուշտ հաճոյք կ'զգայ մեղուն երբ տեսնէ ու հոտոտէ այսինչ գոյնն ու բոյրը ունեցող ծաղիկներ, եւ անշուշտ սիրոյ յուզումներով կը տոգորուի մայր—թուչունը երբ դիտէ իր փոքրիկ ձագուկները: Յուզուելու կարողութեան ինչպէս նաեւ զգայութեան կողմանէ առաջնակարգ դիրք մ'իսկ չգրաւեր մարդս կենդանական թագաւորութեան մէջ: Բայց չկրնար կենդանին յարաբերութիւններ ըմբռնել իր ունեցած յուզումներուն միջեւ, ինչպէս չկրնար յարաբերութիւններ ըմբռնել արտաքին իրականութեանց միջեւ: Կատուն, զոր օրինակ, չըմբռնէր թէ իր այսօրուան ըզգացած բարկութիւնը, աւելի բուռն էր քան երէկուան զգացածը. մեղուն չըմբռնէր թէ այսինչ ծաղիկին գոյնը կամ բոյրը աւելի հաճոյք առթեց իրեն քան ուրիշ ծաղիկի մը գոյնն ու բոյրը, և ոչ ալ թուչունը կ'ըմբռնէր թէ քանի մը ժամ առաջ իր մէջը յուզուող սէրը աւելի բուռն էր քան հիմակուանը:

Քիչ առաջ յիշեցինք թէ արտաքին աշխարհի ազդեցութիւնները բարձրագոյն կենդանեաց մէջն ալ յառաջ կը բերեն համապատասխան յուզումներ, ինչպէս մարդուս մէջ: Բայց պէտք է հոս աւելցնել թէ առարկաները միայն չեն որ իրենց համապատասխան յուզումներ յառաջ կը բերեն, այլ նաեւ այդ առարկայից յատկութիւններուն միջեւ գտնուող յարաբերութեանց ըմբռնումները: Իր կազմած յարաբե-

րութեանց ըմբռնումներուն, յղացումներուն ու երեւակայութիւններուն համապատասխան յուզումներ կը գտնուին մարդուս մէջ, որոնցմէ զուրկ են կենդանիք: Սոխակը, զոր օրինակ, իր սիրահարին դայլայլը կազմող ձայնի զատ զատ ալիքներէն է միայն որ հաճոյք կը քաղէ, և ոչ թէ այդ յաջորդական ալիքներուն յօրինած ներդաշնակութենէն: Անկարող է սոխակը յարաբերութիւններ ըմբռնել իրարու յաջորդող ձայնի այդ ալիքներուն միջեւ, այսինքն չկրնար ըմբռնել թէ ձայնի այսինչ ալիքն աւելի ուժգին էր կամ բարձր իր նախորդէն, և անկարող է զգալ այն մասնաւոր հաճոյքը որ կը քաղէ մարդ տարբեր ուժգնութեամբ, տարբեր բարձրութեամբ ու միջանկեալ դադարներով իրարու յաջորդող ձայնի ալիքներուն կազմած ներդաշնակութենէն: Ծաղկահիւս դաշտավայրի մը վերեւ թռչտող միջատին համար գոյութիւն չունի այլազան առարկայից գոյներու և ձեւերու միասնաբար յօրինած գեղեցկութիւնը. առանձին առանձին առարկաներ միայն կ'ըմբռնէ անիկա, և ոչ թէ անոնց միջեւ գտնուող այնքան զմայելի ու ներդաշնակ յարաբերութիւնները, եւ, հետեւապէս, զուրկ կը մնայ գեղեցկագիտական այն բարձրագոյն հաճոյքներէն զոր կրնայ վայելել մարդ այսպիսի տեսարանէ մը: Յարաբերութեանց ըմբռնումներէ՝ եւ վերացական գաղափարաց յղացումներէ ծնունդ կ'առնեն մարդուս ամենէն բարձր ու ազնիւ զգացումները, եւ ոչ թէ զգայութիւններէ եւ առարկայից լոկ ըմբռնումներէ: Այսպէս են մեր կրօնա-

կան, բարոյագիտական ու գեղեցկագիտական զգացումները, որոնցմէ յաւիտենապէս զուրկ մնալու դատապարտուած են կենդանիք: Ու երբ նկատի կ'առնենք նաեւ Երեւակայութիւնը, որ ինքնաստեղծ յարաբերութիւններով իրարու հետ կը զուգորդէ ամենէն գեղեցիկ, ամենէն բարի եւ ամենէն երջանկառիթ իրերն, անձերն ու գործունէութիւններ, որ զգայութեանց եւ անմիջական ըմբռնմանց նեղ բանտէն ազատ կ'արձակէ մարդկային միտքը ու կ'առաջնորդէ զայն դիւթական աշխարհներու լայնարձակութեանցը մէջ, որ Ապագան կը բանայ անոր առջեւ, յոյսերու և ակնկալութեանց, բաղձանքներու և ձգտմանց բեղմնաւոր ապագան, երբ նկատի կ'առնենք մարդկային անհատին ու ընկերութեան առջեւ՝ միշտ հեռին ու բարձրը՝ կատարելութեան վսեմ իտէալը պարզող երեւակայութիւնը, այն ատեն աղօտակի կ'ըմբռնենք մեծութիւնը անջրպետին՝ որ կը զատէ զմարդ իրմէ ստորնագոյն բոլոր կենդանի էակներէն:

11

Իտէալներ կազմելու ընդունակութիւնն է որ անանցնելի անջրպետով մը կը զատէ զմարդ կենդանական բոլոր ուրիշ սեռերէն: Իտէալներ կազմելու ընդունակ էակ մըն է մարդս: Կ'զգօք արդեօք նշանակութիւնը այս իրողութեան. Իտէալներ կ'ազմելու ընդունակ էակ մըն է մարդս: Այս ընդունակութեան մէջ կը գտնուի ահա գաղտնիքը մարդկային ամէն

տեսակ յառաջդիմութեանց: Որովհետեւ ինչ են մեր այսօրուան ունեցած ընտանեկան, կրօնական, քաղաքական, առեւտրական ու ընկերական ամէն տեսակ կազմակերպութիւնները, եթէ ոչ մարմնացումները այն իտէալներուն զոր ունեցած են մեր նախնիք անցելոյն մէջ: Ինչ են արդի կենաց մէջ տեղի ունեցող այնքան բուռն ու բարդ գործունէութիւնները, կրթական այնքան փառալից յեղաշրջումները, ընկերական այնքան հրաշալի կատարելագործումները, աշխարհի թշուառութիւնը մեղմացնելու եւ երջանկութիւնը աւելցնելու համար կատարուած բոլոր ջանքեր. — ինչ է արդի ամբողջ քաղաքակրթութիւնը, կենդանի ու աճեցուն, եթէ ոչ իրենց ներկայ իտէալները իրագործելու համար մարդկութեան ներկայացուցիչ անդամներուն կատարած ճիգը: Եւ ինչ բան է այն որ կը ձգտի անասնական կեանքի մը ճիրաններէն փրկել մարդկութիւնը, որ կը լայնցնէ ու կը գեղեցկացնէ հոգին, որ նշանակութիւն և արժանիք կ'ընծայէ մարդկային կենաց ինչ է այն որ կ'ստեղծէ աճեցուն նկարագիրը՝ ամենաթանկագին արտադրութիւնն ու ժառանգութիւնը մարդկային կենաց, եթէ ոչ իտէալը:

Իտէալն է պատճառն ու վախճանը մարդկային կենաց:



ԻՏԻԱԼԻՆ ՉԱՐԳՆՅՈՒՄԸ

1

Մեր զգայարանաց միջոցաւ նմանօրինակ տպաւորութիւններ կ'ստանանք ամենս ալ արտաքին իրականութիւններէ, բայց որչափ կրնան տարբերիլ մեր կազմած դատողութիւնները անոնց գեղեցկագիտական կամ բարոյական արժանեացը մասին: Կը տեսնենք հովտին մէջ բողբոջող ծաղիկ մը կամ պատէն կախուած նկար մը, կը լսենք նուագ մը, կը կարդանք բանաստեղծութիւն մը կամ վէպ մը, հանդիսատես կ'ըլլանք անհատի մը կատարած մէկ գործին. զգայական նմանօրինակ տպաւորութիւններ կ'ստանանք ամենս ալ այս զանազան արտաքին ազդեցութիւններէն, բայց որչափ տարբեր տարբեր դատողութիւններ կը կազմենք անոնց իւրաքանչիւրին մասին: Հովտին մէջ բողբոջող այդ ծաղիկը այնչափ գեղեցիկ չերևի ինծի որչափ կ'երևի ուրիշի մը: Պատէն կախուած այդ նկարը արուեստական շատ ստորին արտադրութիւն մը կ'երևի դիտողներէն ոմանց, մինչդեռ շատեր զմայլանօք կը յառին անոր ու գեղեցկութեան հրաշակերտ մը կը նկատեն զայն: Ինչ որ կոչտ եղանակ մըն է երաժշտական վարժ ականջներ ունեցողին՝ հաճոյքի ամենամեծ աղբիւր մը կը դառնայ ճա-

չակէ զուրկ ունկնդրին, եւ առաջնոյն գնահատած ամենէն հոգեհմայ թրթռումները տաղտուկ կ'ազդեն վերջնոյն: Նոյն բանաստեղծութիւնը կամ վէպը, որ դրական խիստ արժէքաւոր արտադրութիւն մը կ'երևի անմշակ միտք ունեցող հազարաւոր ընթերցողներու, կրնայ ընթերցման իսկ անարժան բան մ'ըլլալ կարող քննադատներու դատումով: Բարոյագիտական տեսակետէ որոշակի գոհակ ու չար երեւցող գործ մը կրնայ բարի հուշակուիլ շատերու կողմէն, եւ շատեր կրնան ձգտիլ իրենք եւս կատարելու այդ նոյն գործը:

Մեզմէ իւրաքանչիւրը, իր ունեցած անցեալ փորձառութիւններուն համեմատ, յղացած է գեղեցկութեան ու բարոյականի բազմաթիւ վերացական գաղափարներ որոնց հետ բազդատելով կը չափորոշէ իր ստացած ներկայ զգայութիւններուն եւ կազմած ներկայ ըմբռնումներուն արժանիքը, այսինքն դատողութիւններ կը կազմէ անոնց գեղեցկագիտական կամ բարոյական արժանեացը մասին: Բազմաձեւ ու բազմատեսակ ծաղիկներ տեսած եմ ես անցեալ կեանքիս մէջ, եւ ծաղիկի գեղեցկութեան վերացական գաղափար մըն եմ կազմած իմ ունեցած այս անցեալ փորձառութիւններէս: Արդ, որչափ նմանի ծաղիկ մը իմ մտքիս մէջ գոյութիւն ունեցող այդ իտէալ ծաղիկին այնչափ աւելի գեղեցիկ կը գտնեմ զայն: Դիտողներէն մէկուն համար արուեստական շատ ստորին արտադրութիւն մը կ'երեւի պատէն կախուած այդ նկարը, որովհետեւ բազմաթիւ տիպար նկարներու խնամոտ գննութեանց ու բազդատութեանց մի-

ջոցաւ իր մտքին մէջ գոյացած գեղեցկութեան գաղափարականին չհամապատասխաներ ան. իսկ զմայլանքի արժանի գեղեցիկ գործ մը կ'երեւի այդ նոյն նկարը անոնց որ զուրկ են նկարչական այսպիսի բարձր գաղափարականներէ: Երաժշտական ընտիր կտորներ վայելելու փորձառութեանէն զուրկ անձը աւելի կը խանդավառի թմրուկի ու փողի խլացուցիչ գոռում գոչումներով քան թէ վարպետ երաժշտի մը մէկ հրաշակերտովը, որովհետեւ առաջինը վերջինէն շատ աւելի կը մօտենայ իր ունեցած երաժշտական գաղափարականին: Բարոյագիտական սկզբունքներու տեսակէտէն որոշակի ստորին ու չար գործեր իրապէս կը գնահատուին շատերու կողմէն, որովհետեւ կը համաձայնին անոնք իրենց մտքին մէջ գոյութիւն ունեցող բարոյագէտ շար ու ստորին իտէալներուն հետ: Բնութեան նոյն երևոյթը, գեղարուեստական նոյն արտադրութիւնը, կեանքի նոյն գործը տարբեր արժանիք մը կ'ստանայ տարբեր անհատներու, տարբեր երկիրներու եւ տարբեր ժամանակաց մէջ, որովհետեւ կը տարբերին ասոնց գեղեցկագիտական ու բարոյական ըմբռնումներն և վերացական գաղափարներ:

2

Անդիմադրելի ներքին դրդում մը կը գտնուի մարդկային ամեն անհատի մէջ ուրիշներուն հաղորդել իր ունեցած յուզումներն, յղացումներն, դատողութիւններն կարծիքներն ու իտէ-

ալներ: Հովտին մէջէն անցնելու պահուս կը դբդուիմ ես ընկերակիցներուս ուշադրութիւնը հրաւիրել ծաղկի մը վրայ եւ բացազանչել, «Ի՛նչ գեղեցիկ ծաղիկ մըն է այդ» եւ կամ «Քիչ մը անդին մեր տեսածէն աւելի գեղեցիկ է սա ծաղիկը»: Չեմ կրնար պատին վրայ կախուած նկարի մը մասին զգացած հիացումս զսպել. կը մղուիմ ուրիշներուն հաղորդել զայն: Նուազածութեան մը առթիւ կը դբդուիմ յայտնել իմ անձնական դատողութիւններս կամ կարծիքս երաժշտական կտորներու մասին: Ընկեր մը կը փնտռեմ անոր առջեւ թափելու համար դեռ նոր կարդացած մէկ վէպիս իմ մէջս արթնցուցած յուզումները, եւ կամ կեանքի այն իտէալները զոր ներշնչեց ինձ բանաստեղծական կտորի մը ընթերցումը: Ձգուանք կը յայտնեմ կատարուած գործի մը մասին որ ունեցած բարոյական սկզբունքներուս համեմատ որոշակի գոհակի է ու չար. իսկ կը գովեմ ինձի բարի ու ազնիւ երեւցող գործերը:

Անհատական արժէք մը լոկ ունին բոլոր այն դատողութիւններ որ չեն արտայայտուած դեռ ուրիշին, բայց ընկերական մեծ ոյժեր կը դառնան անոնք արտայայտուելէ վերջ: Ոեւէ իրողութեան մասին ուրիշին արտայայտած կարծիքը կրնայ ազդել իմ վրաս ու եղանակաւորել նախապէս ունեցած կարծիքներս, և, փոխադարձաբար, նմանօրինակ ազդեցութիւն մը կրնան գործել իմ արտայայտած կարծիքներս ուրիշներուն վրայ: Անհատներու առանձին առանձին կազմած գաղափարները այսպէս արտայայտուելով եւ իրարու հետ բաղդատուելով կրնան եղանակաւորել զի-

րար, ուղղել ու բարեփոխել, եւ գոյացնել հասարակաց դատողութիւն մը՝ ընդունելի մեծամասնութեան: Այս կերպով ծնունդ կ'առնէ Հանրային կարծիքը որ՝ իր կարգին՝ կը դառնայ ռազմիքան ընկերական կեանքը կառավարող ամեն տեսակ սովորութեանց ու քաղաքական օրէնսդրութեանց:

Ընկերութենէն կ'ստանայ ամեն անհատ իր ըմբռնումներուն և գաղափարներուն ամենամեծ մասը: Չափահաս անձի մը մտքին մէջ գոյութիւն ունեցող անթիւ ըմբռնումներուն և գաղափարներուն բաղդատաբար խիստ աննշան ու անկատար մասը միայն արդիւնք է անձնական փորձառութեան, մնացեալ ամենասճիս ու ամենազարգացեալ մասը իւրացուած է ուրիշներուն արտայայտած գաղափարներէն: Փոքրիկ տղան կը լսէ շարունակ իր ծնողաց, իր ընկերներուն եւ իր ուսուցիչներուն խօսքերը, կը կարդայ զանազան թերթեր ու գիրքեր, եւ աստիճանաբար կ'իւրացնէ այսպէս ուրիշներու փորձառութեանց արդիւնքն եղող բազմաթիւ գաղափարներ ու տեսութիւններ: Մշտնջենապէս բարբարոսական ըստորնագոյն վիճակի մը մէջ մնալու դատապարտուած պիտի ըլլար մարդ, եթէ ընդունակ չըլլար իւրացնելու իր նախորդներուն եւ ժամանակակիցներուն արտայայտած խորհուրդները: Անձնական փորձառութեան շնորհիւ չէ այնչափ որ կը զարգանան մեր ըմբռնումներն եւ կ'ուղղուին մեր դատողութիւններ, այլ ուրիշներու արտայայտած ըմբռնումներուն եւ դատողութիւններուն շնորհիւ մանաւանդ՝ զորս կ'իւրացնենք: Այս կերպով է միայն որ կը տիրանանք քաղաքակր-

Թուօթեան, այսինքն հոգեկան բոլոր այն զարգացումներուն զոր մարդկային սեռը կրցած է ձեռք բերել իր դարաւոր մաքառումներէն ու ճիգերէն: Դաստիարակութեան մէջ փնտռելու ենք յաւէտ մարդկային անհատին իմացական ամեն զարգացումներուն գաղտնիքը, քան թէ անձնական փորձառութեան: Եւ դաստիարակութիւն ըսելով կը հասկնանք հոս բոլոր այն ազդեցութիւնները զոր անհատը կ'ստանայ իր ընկերական միջավայրէն. - ընտանիքէն ու դպրոցէն: գրականութենէն ու արուեստէն, եւ ընկերական զանազան կազմակերպութիւններէ:

3

Բայց իտէալ մը չէ՛ ոեւէ գաղափար կամ խորհուրդ ցորչափ զայն իրագործելու բաղձանքը չգտնուիր անհատին մէջ: Կրնամ ես շատ բարձր գաղափարներ յղացած կամ ստացած ըլլալ բարոյականութեան մասին, և մտքիս մէջ գոյութիւն ունեցող այդ չափանիչերուն համեմատ կրնամ ուղիղ կերպով մը գնահատել իմ եւ ուրիշներու կատարած զանազան գործերուն բարոյական արժանիքները, սակայն բոլոր այս վեհ գաղափարներով հանդերձ բարոյական իտէալներէ զուրկ մէկն եմ ես, եթէ բաղձանք մը չգտնուիր մէջս զանոնք իրագործելու: Բաղձանք, ձգտում ու ջանք կ'ենթադրէ ամեն իտէալ: Իմացականութեան լոկ արտադրութիւնը չէ իտէալը, այլ նաեւ զգայականութեան: Աւելի ժողովրդային բացատրութեամբ մը նոյն ճշմարտութիւնը արտայայտած կ'ըլլանք երբ ըսենք՝

մարդկային սիրտը իր տաք զգացումներէն խառնելու է մտքին արտադրած պաղ գաղափարականներուն հետ, որպէսզի այս երկուքին միախառնումէն իտէալը ստեղծագործուի: Ինքնին իտէալներ չեն այժմ մտքիս մէջ գոյութիւն ունեցող գաղափարներն ու կարծիքներ, բայց էական պայմաններ են անոնց ծննդեանը: Իտէալ մը կ'ըլլայ այդ գաղափարներէն կամ կարծիքներէն ոեւէ մին որուն իրագործմանը կը փափաքիմ ու կը ձգտիմ, եւ զոր իմ կեանքիս և ուրիշներուն կենացը մէջ մարմնացնել կ'աշխատիմ:

Միշտ բարի, միշտ բարձր ու միշտ օգտակար բան մը չէ, ուրեմն, իտէալը. բաղձանքի առարկայ դարձող գաղափարն է որ կը չափորոշէ անոր արժանիքը: Եթէ չար, ստորին կամ ֆլաստաբեր գաղափարի մը իրագործումն է առարկան մեր բաղձանաց ու ջանից, հարկաւորապէս չար եւ ֆլաստաբեր է նաեւ մեր իտէալը, հոգ չէ թէ որքան անգիտակցօրէն փարած ըլլանք անոր ու որչափ զոհողութեամբ իրագործենք զայն: Հերոս մըն է այն անհատը որ ամեն տեսակ դժուարութիւն ու վտանգ յանձն առնելով կը ջանայ գործադրել իր մէկ իտէալը, թէեւ մատնութիւն մը կամ ցճրագործութիւն մ'իսկ ըլլայ այն, բայց մատնիչ հերոս մըն է անիկա կամ ոճրագործ հերոս մը: Ամեն գովեստի արժանի է իր բնաւորութեան զգայական մասը՝ այսինքն սիրտը, բայց դատապարտելի է բարձր գաղափարներէ եւ սկզբունքներէ զուրկ միտքը: Իր ունեցած ոեւէ մէկ իտէալը գործադրել ջանալուն համար չէ որ պիտի դատապարտենք անձ մը, թէեւ մեր կարծիքով եւ ընդհանրութեան

կարծիքով վերջին ծայր գռեհիկ ու անբարոյական ըլլայ այդ իտէալը, այլ միայն այդպիսի իտէալ մը ունենալուն համար: Ամեն անհատի աւագ պարտականութիւնն է իրագործել իր ունեցած իտէալները: Իսկ ընկերութեան պարտականութիւնն է կեանքի օրինակաց, կրթութեան, գրականութեան ու գեղարուեստի միջոցաւ աստիճանաբար զարգացնել ու ազնուացնել անհատին իտէալները: Չկրնար մեղք նրկատուիլ ուէ իսէալի գործադրութիւնը, թէև ամենէն խոտելի ու կործանարար իտէալն ըլլայ այն, բայց ամենամեծ մեղքն է, միակ անքաւելի մեղքը՝ ուէէ միջոց կորսնցնել կամ ջանք խնայել զարգացած ու ազնիւ իտէալներ ժառանգելու:

Տգիտութիւնն է մայր ամենայն չարեաց ըստած է դարեր առաջ. շատ աւելի խորին համոզումով մը կրնանք կրկնել այսօր նոյն այդ դարաւոր ճշմարտութիւնը: Զարգացած խորհուրդներէ, լայն տեսութիւններէ, ուղիղ դատողութենէ, մէկ խօսքով՝ մշակուած մտքէ զուրկ եղող անձը չկրնար իրապէս բարձր ու վսեմ իտէալներ ունենալ. կրնայ անոնց արտաքին ձեւը օրինակել՝ առանց պարունակութեանը տիրացած ըլլալու, ինչպէս տղայ մը կրնայ «արդարութեան» ու «սրբութեան» նման բառեր արտասանել՝ առանց անոնց պարունակած իմաստներուն բաւականաչափ տեղեկացած ըլլալու: Մտաւոր զարգացումը անհրաժեշտ մէկ պայմանն է զարգացած իտէալներ ունենալու, թէև չըլլայ բաւական պայման մը: Մտքի զարգացումէն աւելի կախեալ է իտէալին զարգացումը

քան թէ սրտի. ժառանգականութեամբ կրնայ մէկը տիրացած ըլլալ տաք զգացումներով տաքորուած սրտի մը, բայց առանց անհատական մասնաւոր ջանքերու անկարելի է որ տիրանայ մշակուած մտքի մը: Սիրտը պատրաստ է փարիլ մտքին մէջ գոյութիւն ունեցող զօրաւորագոյն գաղափարներուն և իրագործելու ջանալ զանոնք, հետևա էս բարձրագոյն և ազնուագոյն գաղափարներու գոյացումը մտքին մէջ՝ առաջին անհրաժեշտ պայմանն է բարձրագոյն ու ազնուագոյն իտէալներու ստեղծագործմանը: Բուռն յուզումներով օժտուած սիրտ մը բոլորովին անբաւական է բարձր իտէալներ ծնանելու, մըշակուած մտքի մը բացակայութիւնը անխուսափելիօրէն ստորին իտէալներու կ'առաջնորդէ զմարդ, և ընկերական չարեաց թերևս կէսը արդիւնք է ստորին իտէալներու: Մէկը չկրնար արդարանալ իր գործած անհատական ու ընկերական չարիքներուն համար, պնդելով պարզապէս թէ ըրաւ ինչ որ լաւագոյն ու օգտակարագոյնն էր իր կարծիքով. նկատառութեան կարեւոր կէտը սա է թէ կարելի ամեն միջոց ու ջանք գործածեց այդ անձը ուղիղ դատողութիւն կամ կարծիք ստանալու այդ մասին:

Անձի մը արժանիքը պիտի կրնայինք չափորոշել եթէ գիտցած ըլլայինք անոր ունեցած իտէալներուն տեսակն ու աստիճանը, գանոնք իրագործելու համար իր զգացած բաղձանաց սաստկութիւնը, և այն ճիգը զոր կը թափէ իր այս նպա-

տակին հասնելու համար: Կրնայ, ուրեմն, մէկը
ամբողջ սրտովն ու կեանքովը նուիրուած ըլլալ
իտէալի մը իրագործմանը, և նոյն ատեն չունե-
նալ մեծ արժանիք իբր մարդ: Բուն իսկ իտէա-
լին բարձրութեան աստիճանն ալ բաժին մ'ունի,
և կարեւոր բաժին մը, այդ անձին իսկական ար-
ժանիքը չափորոշելու գործին մէջ: Նուիրուած
սիրտ միայն ունենալով չկրնար իրապէս մեծ
ըլլալ մարդ եթէ չունի նաև մշակուած միտք
մը, ինչպէս չկրնար մեծ ըլլալ իմացական ամե-
նամեծ կարողութիւններով և զարգացումներով
օժտուած անձը առանց մեծ սրտի:

Իտէալն է ստեղծիչը անհատի մը նկարագրին:
Անխզելի յարաբերութիւն մ'ունին այս երկուքը
իրարու հետ, ինչպէս մարդկային հոգին ու մար-
մինը: Հոգեկան ոյժ մըն է առաջինը, որ անդի-
մադրեկիօրէն գործի կը դրդէ զմարդ, իսկ անոր
յառաջ բերած գործնէութիւններուն մէկ ար-
դիւնքն է երկրորդը: Այնպէս որ անհատի մը ու-
նեցած իտէալներուն տեսակն ու աստիճանը
կ'որոշէ նաև անոր նկարագրին տեսակն ու աս-
տիճանը: Անկարելի է փոխել անձի մը իտէալը
առանց նոյն ատենը փոխելու նաև անոր վարքն
ու բարքը, եւ փոխադարձաբար անկարելի է փո-
խել մէկուն վարքն ու բարքը առանց նոյն ատենը
փոխելու նաև անոր իտէալները: Իտէալ և գործ
փոխադարձաբար կ'եղանակաւորեն զիրար. ոչ ոք
կրնայ յարատեւօրէն սնուցանել իր մէջ բարձր
իտէալներ արդարութեան, բարութեան, ճշմար-
տութեան ու սրբութեան նկատմամբ, եւ նոյն
ատենը այնպէս ապրիլ իբր թէ գոյութիւն չունե-
նային այս իրականութիւնները. փոխադարձաբար

նաև ոչ ոք կրնայ ապրիլ արդար, բարի, ճշմար-
իտ ու սուրբ կեանք մը՝ առանց իր փորձառու-
թիւններուն միջոցաւ ստանալու նաև համապա-
տասխան իտէալներ: Բայց տրամաբանօրէն իտէ-
ալն է պատճառը նկարագրին: Սխալ է իր կատա-
րած գործերուն եւ իր կազմած նկարագրին հա-
մեմատ միայն գնահատել մարդու մը իսկական
արժանիքը: Կարեւոր է նկատի առնել նաև այն
իտէալները զոր ունեցած է այդ անհատը եւ
որոնց իրագործմանը համար ջանքացած է առանց
յաջողութեան: Չիրագործուած իտէալն ալ կը
բարձրացնէ մարդու արժանիքը, ինչպէս գործի
ու նկարագրի մէջ իրագործուած իտէալը: Ի՞նչ
բաներու ձգտած եմ ու ի՞նչ եղած եմ, ահա այն
երկու հարցերը որոնց տրուած պատասխանները
միասնաբար պիտի կազմեն չափանիշը իմ
արժանեաց:

Եթէ նկարագրի ստեղծիչն է իտէալը, ու-
րեմն անհատական ու ընկերական կենաց զարգաց-
ման առաջին էական պայմանն է զարգացումը
անհատական ու ընկերական իտէալներու: Յիմա-
րութիւն է ընկերութեան մը մէջ գոյութիւն ու-
նեցող զանազան չարեաց նուազումը ակնկալել,
եթէ յառաջդիմական փոփոխութիւններ տեղի
չեն ունենար այդ ընկերութիւնը կազմող անհատից
իտէալներուն մէջ: Անհատական ու հանրային
իտէալներու զարգացմամբն է միայն որ պիտի
կրնայ ունէ յառաջդիմական շարժում ու գործնէ-
ութիւն ծնունդ առնել ընկերութեան մը մէջ:
Արդ, ի՞նչպէս կարելի է զարգացնել անհատի մը
ու ժողովուրդի մը իտէալները:

Մասնաւոր խնդրոց ուսումնասիրութեանը համար իրենց կեանքը նուիրող մարդիկ կը գտնուին ամեն քաղաքակիրթ ազգի մէջ: Ոմանք, զոր օրինակ, գեղարուեստի աշխնչ ճիւղին կը նուիրեն ինքզինքնին.—Նրաժշտութեան, Նկարչութեան, կամ Գրականութեան: Ներկայացուցիչ անհատներն են ասոնք այն ճիւղին զոր առարկան ըրած են իրենց բազմաշխատ ջանքերուն և որուն մէջ հասած են զարգացման բարձրագոյն մակարդակներու: Այս ներկայացուցիչ անհատներէն մէկուն իր մասնաճիւղին վերաբերեալ ուէ խնդրոյ նկատմամբ արտայայտած գաղափարներն ու դատողութիւններ աւելի մեծ կշիռ ունին քան միլիոնաւոր հասարակ անհատներու նոյն խնդրոյն մասին արտայայտած գաղափարներուն եւ դատողութիւններուն ամբողջութիւնը: Այսպիսի ներկայացուցիչ անհատներու կազմած գեղարուեստական, կրթական, քաղաքական, բարոյագիտական, կամ կրօնագիտական գաղափարներուն եւ պաշտած իտէպլներուն հետ հաղորդակցելով ու գանոնք աստիճանաբար իւրացնելով է միայն որ պիտի կրնան զարգանալ ու ազնուանալ անհատին իտէպլները: Ընկերութեան մը բոլոր անդամոց կազմած դատողութիւններուն միջինը չէ որ պիտի ընդունինք իբր չափանիշը գրական կամ բարոյական գործի մը արժանիքին, այլ դատողութեանց միջինը այն անձերուն՝ որոնք իրենց լայնարձակ ուսումնասիրութեամբը, իրենց խորին փորձառութիւններովը եւ իրենց սրաթափանց

ներքնատեսութեամբը յարմարած են այս պաշտօնին: Եւ մենք, հասարակ անհատներս, պարտինք ընդունիլ այսպիսի ներկայացուցիչ անձերու դատողութիւնները, թէեւ հակառակ իսկ ըլլան անոնք մեր անձնական դատողութեանց, ինչպէս կը պատահի յաճախ: Ամենէն քոսային, ամենէն բարբարոսական ու ամենէն գոհիկ վիճակը պիտի տիրէր այսօր ընկերական կենաց մէջ.— մեր գեղարուեստներուն եւ գրականութեանց, մեր գիտութիւններուն եւ օրէնսդրութեանց, ու մեր ընտանեկան, կրօնական, կրթական, առեւտրական ու քաղաքական ամեն տեսակ յարաբերութեանց ու գործնէութեանց մէջ, եթէ քանի մը շարաթ միայն ամեն խնդրոյ մէջ հետեւէինք ընկերութեան բոլոր անդամոց արտայայտած կարծիքներուն միջինին: Հաւասարութեան այսպիսի սխալ ու կործանարար ըմբռնումի մը գործադրմամբը իսկոյն վերջ պիտի գտնէր մեր ամբողջ քաղաքակիրթութիւնը, դարերու աշխատանաց ու տառապանաց արդիւնքը եղող այդ անգին ժառանգութիւնը:

Ներկայացուցիչ անհատներն են յառաջընթացները ընկերական ամեն տեսակ շարժմանց: Մեծ ու երկարատեւ ճիգերով կը յղանան անոնք բարձր խորհուրդներ, որոնք բարձր իտէպլներու կը վերածուին երբ գրաւեն նաեւ սիրտը: Մարդկութեան ներկայացուցիչ անհատներուն ստեղծագործած կեանքի այս վսեմ իտէպլներն են միայն որ, երբ թափանցեն նաեւ հանրութեան մտքին ու սրտին, կարող են մաքրագործել անոր կեանքը, ներշնչել զայն վսեմ տեսիլքներով ու ձգտումներով, յաջողապէս մաքառիլ անոր մէջ տիրող

ապականութեանց ու անիրաւութեանց, մոլութեանց ու մոլորութեանց դէմ եւ բնաջնջել զանոնք, քաշել անհատն ու հանրութիւնը դէպի բարի, ճշմարիտ ու կատարեալ կեանքը: Ըսէ՛ ինձ պաշտած դիւցազուններդ, կ'ըսէին նախնիք, ու ես պիտի ըսեմ քեզ թէ ի՛նչ տեսակ անձ մըն ես այժմ եւ ինչ տեսակ անձ մը պիտի ըլլաս ապագային: Նոյնպէս ալ կրնանք ըսել այսօր ամեն անհատի եւ ամեն ժողովուրդի, յայտնէ՛ ինձ քու իտէալներդ, և պիտի յայտնեմ քեզ թէ ին՛չ տեսակ կեանք մ'ունիս այժմ ու ին՛չ տեսակ նկարագիր մը պիտի ունենաս ապագային: Իւ չմոռնանք բնաւ թէ անհատական ու հանրային իտէալներու զարգացման միակ էական պայմանն է հաղորդակցիլ արժանաւորապէս ներկայացուցիչ անհատներու հետ, սնանիլ անոնց լեզուաւ, գրչով կամ կեանքով արտայայտած խորհուրդներովն ու սրտովին փարիլ անոնց:

ԻՏԷՍԷԼ ԵՒ ԴՐԴՈՒՄ

1

Մարդուս կատարած գործերէն շատեր արդիւնք են ՄԻԱԿ գաղափարի մը ազդեցութեան: Սրիկայի մը կողմէն աղջկան մը անարգուիլը կը տեսնէ բարեկիրթ երիտասարդ մը, եւ իսկոյն կը յարձակի ու ապտակ մը կ'իջեցնէ այս վերջնոյն երեսին: Այս գործը կատարելէ առաջ բնաւ չխորհրդածեց երիտասարդը. կանգ չառաւ խորհելու թէ ի՛նչ ընելու էր այսպիսի պարագայի մը տակ, շարունակելու էր իր ճամբան խոհեմութեամբ թէ իր անձին վտանգը յանձն առնելով ազատել փորձելու էր աղջիկը, և ազատելու ատեն լռելու էր բոլորովին թէ քանի մը յանդիմանական խօսքեր ուղղելու էր սրիկային կամ թէ զարնելու էր անոր: Հետեւելու մէկէ աւելի այսպիսի ընթացքներ չներկայացան բնաւ երիտասարդին մըտացը առջև որոնց մէջէն ընտրէր սրիկային վրայ յարձակելու եւ զայն ապտակելու ընթացքը. այլ առանց տարբեր տարբեր ընթացքներ մտաբերելու, զանոնք իրարու հետ բաղդատելու եւ անոնց մէջէն յարմարագոյնը ընտրելու, առանց իր կատարելիք գործին հետեւանաց վրայ անդրադառնալու՝ աղջկան կրած անարգանաց ազդեցութեամբ սրիկային վրայ յարձակելու եւ զայն ապտակելու միակ գաղափարը ունեցաւ ու անմիջապէս գործադրեց: Արտաքին աշխարհի ազդեցութեանց

միջոցաւ մտքին մէջ ծնանող սեւէ զգայութիւն կամ ըմբռնում անմիջապէս գործի կը մղէ զմարդ, եւ ԴՐԴՈՒՄ կը կոչուի հոգեկան այն վիճակը որ կ'ընկերակցի գործնէութեան մղում յառաջ բերող ջղային գրգռումներուն: Վերի օրինակին մէջ աղջկան մը անարգութիւնը տեսաւ երիտասարդը, եւ գործի մղուեցաւ իսկոյն իր մտքին մէջ այդ մասնաւոր պարագային ազդեցութեամբ ծնանող միակ գաղափարին առանորդութեամբը, այսինքն յարձակեցաւ սրիկային վրայ ու ապտակեց զայն:

Սորհրդածութեան, դատողութեան եւ ընտրութեան բացակայութիւնը բնորոշիչ մէկ յատկութիւնն է դրդման արդիւնք եղող ամեն գործի: Տարբեր կամ հակառակ ընկժացքներ թեւադրող զանազան գաղափարներու ներքին կռիւ մը չըզգար մարդ այսպիսի գործի մը ձեռնարկելու ատեն, ոչ ալ ընդդիմադիր նկատումներ կամ ձգտումներ զսպելու ճիշդ մը: Միակ գաղափարի մը առաջնորդութեամբ այնչափ անխուսափելիօրէն եւ անխտոր կը դիմէ անիկա այդ որոշ գործին անմիջական կատարմանը որչափ անխուսափելիօրէն եւ անխտոր որ դէպի բեւեռ կը դառնայ մագնիսական ասեղը: Ննջասենեակէն բանի մը գետին իյնալու ձայնին հետ իր մանկան ճիշդ կը հասնի յանկարծ խոհանոցին մէջ աշխատող մօր մը ականջին, եւ իսկոյն դէպի սենեակ կը վազէ անիկա ուրիշ ամեն բան մոռնալով: Ննջասենեակէն հասնող այդ ձայները՝ իր մանկան օրորոցէն ինկած ըլլալու գաղափարը կ'արթնցնեն մօր մտքին մէջ, որուն ազդեցութեամբ անմիջապէս վազել կ'սկսի ան: Դրդման արդիւնք է

վազելու այս գործողութիւնը: Բայց դրդման արդիւնք ըլլալէ պիտի դադրէր այն եթէ վազելէ առաջ վայրկեան մ'իսկ երկմտած ըլլար մայրը, եթէ վայրկեան մ'իսկ խորհած ըլլար, գոր օրինակ, վազելէ առաջ ջերմոցին վրայ եռացող կաթը վերցնել եւ յետոյ որոշած ըլլար կաթը հոն այնպէս թողլով իր մանկան քով փութալ: Դրդման արդիւնք չպիտի ըլլար վերի օրինակին մէջ ներկայացուած երիտասարդին սրիկան հարուածելը եթէ անիկա խորհրդածէր նախ այն վտանգներուն վրայ որոնց կրնար ենթարկած ըլլալ ինքզինքը այսպիսի յանդուգն միջամտութեամբ մը, ու յետոյ ամեն վտանգ յանձն առնելով որոշէր կատարել այդ գործը:

Կենաց ամենէն հիմնական ու ընդհանուր մէկ յատկութիւնն է հակազդել միջավայրի ազդեցութեանց: Ուր որ կեանք կայ հոն անշուշտ կայ նաեւ այս յատկութիւնը: Կարելի է է երեակայել կենդանի մը որուն մէջ մարմնական գրգռումներ յառաջ չգան ջերմութեան կամ ցրտութեան, լոյսի կամ խաւարի, որսի կամ թշնամիի ներկայութեան եւ միջավայրի ուրիշ ազդեցութեանց տակ, եւ որ զանազան շարժումներով կամ գործնէութեամբ չհակազդէ անոնց: Ապրիլ կը նշանակէ շարժիլ ու գործել: Բարձրագոյն կենդանեաց մէջ մասնաւոր դրութիւն մը գոյութիւն առած եւ աստիճանաբար կատարելագործուած է միջավայրի ազդեցութիւնները ընդունելու եւ անոնց հակազդելու այս էական պաշտօնին կատարմանը համար, այսինքն ջղային գրութիւնը: Ամենափափուկ մեքենայութիւն մըն է անիկա որ պատրաստ կը գտնուի միշտ ընդունիլ իր միջա-

վայրին բիւրաւոր ազդեցութիւնները եւ անոնց համեմատ գործնէութիւններ յառաջ բերել մարմնոյ զանազան անդամներուն մէջ: Եւ հոգեկան կողմէն դիտուելով դրդում մըն է ինչ որ մարմնական գործնէութիւն արտադրող ջղային գրգռում մըն է Ֆիզիքապէս. դրդում եւ շարժիչ ջիղերու գրգռում երկու տարբեր կողմերը կը ներկայացնեն նոյն գաղտնալից իրականութեան:

Արտաքին նոյն պարագաներ կրնան իրարմէ բոլորովին տարբեր դրդումներու ծնունդ տալ տարբեր անհատներու մէջ, եւ հետեւապէս նաեւ բոլորովին տարբեր գործնէութեանց: Հրդեհի մը տեսքէն կրնան ոմանք կողոպուտի դրդուել ուրիշներ կեանք փրկելու: Թշնամիին երևումը կրնայ փախուստի դրդել այսինչ անձը իսկ ուրիշ մը յարձակման: Իր սիրելւոյն ծանր հիւանդութիւնը տեսնելով բժշկին վազել կը դրդուի մէկը իսկ ուրիշ մը քահանային: Ջղային կազմութեան ժառանգական ու ստացական տարբերութիւններէ կախում ունին արտաքին նոյն պարագայից տակ տարբեր տարբեր ուղղութիւններով գործելու դրդումներ: Բաղդաւոր է, արդարեւ, այն մարդը որ բարի դրդումներ ժառանգած է իր ծնողքէն եւ կամ ձեռք բերած է բարի գործերու շարունակական կրկնումներովը: Նկարագրի ամենէն հիմնական ու անփոփոխ մասը կը կազմեն մարդուս դրդումները: Այնչափ բնական ու անխուսափելի է բարի դրդումներու համար պտղաբերել բարի գործերով որչափ բնական ու անխուսափելի որ է որթատունկին համար պտղաբերել խաղողի ողկոյզներով:

Մարդկային սեռը իր իմացական կարողութեանց զարգացմանը համեմատ յաջողած է մասամբ դուրս ելնել դրդումի տիրապետութեան սահմաններէն, ուր կը գտնուին ուրիշ կենդանիք: Խորհրդածելու, դատելու եւ յետոյ որոշելու կարողութիւններով օժտուած է անոր միտքը: Արտաքին ազդեցութեանց տակ անիկա ալ ուրիշ կենդանիի նման ստիպողաբար կը դրդուի գործ մը կատարել, բայց անմիջապէս տարբեր տարբեր ուղղութեամբ գործնէութիւններ թելադրող գափարներ ծնունդ կ'առնեն իր մտքին մէջ, որոնց իւրաքանչիւրը գործնականանալ կը միտի արգիլելով ուրիշ ուղղութեամբ առաջնորդող բոլոր միւս գաղափարաց իրագործումները: Գաղափարաց բուռն կռիւ մը կ'սկսի այսպէս մտքին մէջ եւ կը տեսէ մինչեւ զօրաւորագունին ազդեցութեամբը չէզոքանան միւսներն ու գործնականանայ առաջինը: Այսպիսի պարագայից տակ ճիշդ թափել հարկ կ'ըլլայ զսպելու համար բոլոր այն դրդումներն, բաղձանքներն ու գաղափարներ որ կը դիմադրեն ընտրուած գաղափարին իրագործմանը, եւ կամք կը կոչուի կարգ մը ընդդիմադիր գաղափարներու մէջէն ընտրուած միակ գաղափարին կողմէն միւսներուն զսպմանը կամ չէզոքացմանը ընկերացող ներքին ջանքը: Գաղափարաց ու բաղձանաց այսպիսի կռիւի մը եւ անոնց զօրեղագունին կողմէն միւսներուն չէզոքացմանը ընկերացող ներքին ջանքի մը ներկայութիւնն է ահա որ կամքի արդիւնք եղող գրո-

ծերը կը զանազանէ դրդման լոկ արդիւնք եղող գործերէ: Վերջիններուն կատարմանը ասին գոյութիւն չկրնար ունենալ սեւէ կռիւ կամ ջանք, որովհետեւ գոյութիւն չունին մէկէ աւելի գաղափարներ: Կամքի արդիւնք են մարդուն կատարած բարձրագոյն ու յառաջդիմական գործնէութիւններ:

Բարոյական ոչ մէկ արժանիք կրնայ ունենալ դրդման արդիւնք եղող սեւէ գործ: Բարոյական արժանիք ունեցող ամեն գործ անպատճառ ըլլալու է արդիւնք ընտրողութեան ու զոհողութեան, որոնց երկուքն ալ կատարելապէս բացակայ կը գտնուին դրդման գործերէ: Արտաքուստ բարի գործ մըն է, մինչեւ իսկ հերոսութիւն մը՝ ջուրը նետուիլ խեղդուելու վտանգին մէջ եղող անձի մը փրկութեանը համար, բայց ներքնապէս և իրապէս բարոյական ոչ մէկ արժանիք ունի այսպիսի գործ մը եթէ արդիւնք է լոկ դրդման: Բարոյապէս այնչափ չէզոք է դրդմամբ ջուրը նետուիլ եւ կեանք մը ազատել որչափ գնդակ մը արձակել եւ մէկը սպաննել: Բառին իրական նշանակութեամբ առաջինը չկրնար նկատուիլ բարի կամ հերոսական գործ մը ինչպէս վերջինը չկրնար նկատուիլ չար գործ մը կամ ոճիր մը: Երկուքն ալ հաւասարապէս զուրկ են բարոյական արժանիքէ: Բաղաքակիրթ երկիրներու օրէնսդրութիւնը նկատի առնելով դրդման ու կամքի արդիւնք եղող ոճրագործութեանց միջեւ գտնուող էական տարբերութիւնը այնչափ ծանր պատիժ չսահմաներ առաջիններուն համար որչափ վերջիններուն: Մարդոց կատարած բարի գործերն ալ արժանաւորապէս գնահատելու համար ան-

հրաժեշտ է նկատի առնել թէ անմիջական դրդման արդիւնք են անոնք կամ խորհրդածութեան ու որոշման: Սքանչացման արժանի հերոս մըն է այն անձը որ ներքին բուռն կռիւէ մը վերջ հակառակող ամեն դրդումներու կամ բաղձանքներու յաղթելով կտոր մը չոր հաց կուտայ իր անօթի թշնամւոյն, եւ կամ առանց սեւէ փնաս հասցնելու կ'անցնի խոր քունի մէջ ընկղմած իր ոսոխին քովէն, իսկ հազիւ հերոս կոչուելու արժանի է այն անձը որ կը դրդուի միակ գաղափարի մը թելադրութեամբ սուրի ու գնդակի մահացու հարուածներուն ենթարկել ինքզինքը ուրիշի մը կեանքը մահուանէ ազատելու համար:

3

Այժմ կրնանք յտակօրէն ըմբռնել այն անհուն տարբերութիւնը որ կը գտնուի դրդման ու իտէալին միջեւ: Գաղափար մըն է իտէալը զոր կ'ընտրէ մարդ իր մտքին մէջ գոյութիւն ունեցող բազմաթիւ գաղափարներու մէջէն եւ զոր իրագործել կը ձգնի՝ հակառակ ֆնացեալ ընդդիմամարտ գաղափարներուն մղած բուռն կռուոյն: Հոս ներքին կռիւ կայ: Մէկէ աւելի դրդումներ ու բաղձանքներ տարբեր ուղղութեամբ կը մղեն զինքը, ձգտման ու կարօտի խիստ գրաւիչ առարկաներ կը պարզեն իր առջև, անմիջական հաճոյքներու հրապոյրներովը կը բուրբեն զինքը եւ ասոնց համապատասխան գաղափարներ կ'արթնցնեն իր մտքին մէջ. հարկ է հոգեկան բուռն պայքար մը մղել իտէալին առաջնորդող ճամբէն խոտորեցնող այս ուժերուն

դէմ եւ կորովի կամքի մը ազդեցութեամբ չէ-
զուքացնել զանոնք: Հոսս գոհողութիւն կայ:
Իտէալի մը իրագործմանը նուիրուած անձը ան-
հրաժեշտօրէն զսպելու է ուրիշ բազմաթիւ հա-
ճոյքներ ու վայելումներ, զրկուելու է շատ մը
Փիղիքական, իմացական ու հոգեկան գործնէու-
թիւններէ եւ անոնց բնկերակցող երջանկութիւն-
ներէ, որոնք աննպաստ կրնան ըլլալ այդ իտէալին
իրագործմանը: Ապագայի նախատեսութիւնը
գոյութիւն չունի բնաւ դրդման մէջ. ներկայ
ազդեցութիւններէ միայն կրնայ ծնունդ առնել
ու ներկայ գոհացումներու ծառայել: Իսկ ապա-
գայ լաւագոյն ու երջանկագոյն կեանքի մը պատ-
կերացումն է իտէալը մարդկային մտքին առջև,
յոյսերու և ակնկալութեանց դիւթական աշխարհ
մը՝ որուն հասնիլ կը ճգնի մարդ, եւ որուն
հասնելու համար կը յօժարի զոհել ներկայ հա-
ճոյքներէ շատերը: Ժառանգական կամ ստացա-
կան անցեալ կեանքի մը արտադրութիւնն է
դրդումը, ետևէն եղած մղում մը. իսկ ապա-
գայ կեանքի մը արտադրութիւնն է իտէալը,
դէպի կատարելագործում առաջնորդող քար-
շողական ոյժ մը: Իտէալն է որ մագնիսի մը
նման իր ետևէն կը քաշէ կը տանի սրտի ամենէն
վեհ տենջանքները ու կեանքի բոլոր յառաջդիմա-
կան գործնէութիւնները: Իտէալն է պատճառը,
քարշողական ոյժը մարդկային ամեն տեսակ յա-
ռաջդիմութեանց: Ներկային իտէալներուն մէջ
կը ննջեն ապագային իրականութիւնները: Անհա-
տին իտէալներուն ետին ծածկուած է ապագայ
անհատը եւ ընկերութեան տիրող իտէալներուն

ետին ծածկուած է ապագայ ընկերութիւնը: Հո-
գեկան կենաց այս ամենամեծ ճշմարտութիւնը
յայտնած ըլլալու համար է որ կ'ըսենք. «Իտէալն
է մարդկային կենաց պատճառն ու վախճանը»:
Որովհետեւ իտէալին քարշողական զօրութեանը
չնորհիւն է որ կ'արտադրուին հոգեկան կենաց
բոլոր յառաջդիմական շարժումները, և այդ նոյն
իտէալին է որ կը ձգտին անոնք:

Միլիոնաւոր տարիներու գործնէութեամբ
մեր բնութեանը մէջ արմատացած անձնասիրական
ու սեռային դրդումներն են որ ամենէն աւելի
զօրեղապէս կը տիրապետեն մեր կեանքին վրայ,
եւ ոչ թէ այլասիրական դրդումներ: Անոնք կը
մղեն զմեզ ամենէն գծուծ ու անասնական
գործնէութեանց, կը գունաւորեն անոնք մեր այ-
լասիրական ամենէն անկեղծ ջանքերը, կը քօղար-
կեն մեր աչքերէն ապագայի ամենէն յափշտակիչ
տեսիլքները, կը թեւատեն մեր երկնաթռիչ
երազներն ու տենջեր, ու կը փակեն մեր առջև
ընկերական կենաց ազնուացուցիչ գործնէութիւն-
ները: Անասունէ մը շտարբերիւ բնաւ այն մար-
դը որ դրդումներով կը կառավարուի ու կը գոր-
ծէ: Մարդկութեան բնորոշիչ յասկանիչը եղող
հոգւոյ յառաջդիմական կեանքը կը պակսի անոր
մէջ: Իտէալն է որ կուգայ աճում եւ զարգա-
ցում տալ հոգիին, արթնցնել անհատին մէջ ճշ-
մարիտ Մարդը, եւ ներկային ու անձին նեղ բան-
տէն դուրս առաջնորդել զանիկա ապագայ կարելի-
ութիւններու հրաշալի բնագաւառին մէջ: Իտէ-
ալն է որ կուգայ վերցնել ընկերական կենաց բո-
լոր թշուառութիւններուն եւ ապականութիւննե-

րուն սեւ քօղը, ու երեւան բերել սիրոյ, արդարութեան ու երջանկութեան այն գաղափարական աշխարհը որ կատարելագործուող մարդկութեան մը մէջ իրականութեան կը փոխուի տակաւ : Իտէալին քարչողական ոյժն է միայն որ յառաջ կրնայ շարժել մարդկային անհատն ու ընկերութիւնը, յառաջ դէպի ճշմարիտ, երջանիկ ու կատարեալ կեանքը :

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա. Զ. Դ. Ե. Յ. Ո. Թ. Ի. Ի. Ե. Ը. Ի.

1.

Ժողովրդեան մը կենաց բարձրացման անհրաժեշտ մէկ նախապատրաստութիւնն է անոր գրականութեան բարձրացումը : Ընթերցողին մէջ կեանքի կը փոխուին գրականութեան մը պարունակած խորհուրդներն ու զգացումներ, ինչպէս կեանքի կը փոխուին արեւուն ճառագայթները տերեւին կամ ընձիւղին մէջ : Այնքան ճշմարիտ է ըսել թէ հոգիի կը փոխուի գրութիւն մը ուշադիր ընթերցողին մէջ, որքան ճշմարիտ է ըսել թէ մարմնոյ կը փոխուի ախորժանօք կերուած հացի մէկ կտորը : Որովհետեւ ուրիշ բան չէ մարդու մը հոգին եթէ ոչ ամբողջութիւնը իր զգացումներուն եւ խորհուրդներուն, եւ ուրիշ բան չէ անոր կեանքը եթէ ոչ գործնականացումը այդ խորհուրդներուն եւ զգացումներուն, կամ գործի մէջ արտայայտումը այդ հոգիին :

Դուրսէն ներս առնուած կերակուրներն են որ կուգան աստիճանաբար նորոգել ու աճեցնել մարդուս մարմինը, նոյնպէս ալ դուրսէն ներս առնուած խորհուրդներն եւ զգացումներն են որ կուգան նորոգել եւ աճեցնել մարդուս հոգին : ձիւղ ինչպէս ոյժ կ'ստանայ մարմինը իր կերած կերակուրներէն, նոյնպէս ալ ոյժ կ'ստանայ հոգին իր ընթերցումներէն : Ուրիշ բան չէ Ֆիզիքական կեանքը եթէ ոչ կրկին դուրս ելլելը արտաքին աշխարհէն առնուած ֆիզիքական ոյժերուն, եւ

ուրիշ բան չկրնար ըլլալ հոգեկան կեանքը եթէ ոչ գործերու ձեւին տակ արտայայտուիլը դուրսէն ընդունուած խորհուրդներուն եւ զգացումներուն: Իր հեղինակին հոգեկան եւ Ֆիզիքական կենաց սպառումովը գրուած է աշխարհի մէջ գոյութիւն ունեցող ամեն գրութիւն, ու երբ կարգանք գանձիկա՝ իր հեղինակին միաքը յուզող խորհուրդները յուզուիլ կ'սկսին նաեւ մեր մտքին մէջ, անոր հոգեկան կեանքը կը վերապրի մեր հոգիին մէջ, այդ տողերը գրելու պահուն ունեցած ջղաշին ու մկանական գրգռումներուն նման գրգռումներ ծագում կ'առնեն նաեւ մեր մէջ, եւ անոր հոգին կը փոխուի այսպէս մեր հոգիին, եւ կ'արտայայտուի մեր մարմնոյն մէջէն: Կը տրամինք կամ կ'ուրախանանք, կ'ատենք կամ կը սիրենք, կուլանք կամ կը ժպտինք, չարիք կը գործենք կամ բարիք, բան մը կ'ընենք վերջապէս գրութեան մը ընթերցումին ազդեցութեամբը: Ընթերցողին մէջ հոգեկան ու Ֆիզիքական համապատասխան գործնէութիւն յառաջ կը բերէ ամեն գրութիւն: Կեանքի կը փոխուի անիկա անհրաժեշտաբար, այսինքն խորհուրդի, զգացումի ու գործի:

Իր ապագայ կենաց անսխալ մէկ մարգարէութիւնն է ժողովուրդի մ'ունեցած գրականութիւնը: Մարգարէութիւն մը լոկ ըլլալէ աւելի բուն իսկ սկզբնաւորութիւնն է այդ կեանքին, որովհետեւ աստիճանաբար կեանքի կը փոխուի գրականութիւնը ընթերցողաց մէջ:

Ատեն ատեն յափշտակիչ տեսիլքներ կը ներկայանան ժողովուրդի մը ներկայացուցիչ մէկ անհատին հոգեկան տեսողութեանը առջեւ, —

երջանկութեան ու սիրոյ ապագայ կարելի աշխարհներ, մարդկային ընկերութիւնը դէպի ձշմարիտը. Բարին ու Գեղեցիկը քաշելու սահմանուած խորհուրդներ, կատարելութեան իտէալներ: Եւ այդ սուրբ ներշնչումները, մարդկային փրկագործութեան այդ ուսովիրաները, կատարեալ կենաց այդ երկնառաք պատգամաբերները՝ վայրկենապէս միայն կրնան բնակիլ անասնական կիրքերով ու ցանկութիւններով շաղուած հոգիի մը մէջ. լուսադէմ ոգիներու նման կուգան անոնք ու կ'անցնին առանց մարմին առնել կարենալու նոյն իսկ ներշնչող այդ անհատին կենացը մէջ: Բայց իդերեւ չեն ելներ բնաւ այս օրհնեալ ներշնչումները: Եթէ չեն կրնար անոնք կերպարանափոխ ընել անհատին ամբողջ կեանքը, եթէ չեն կրնար գործի փոխուած դուրս ելնել ընկերական աշխարհի մէջ, կրնան սակայն դուրս ելնել զիրենք վայրկենապէս գոնէ հիւրընկալող անհատին գրչէն, կրնան մարմին առնել գրութեան մը մէջ ու տարածուիլ աշխարհի չորս ծայրերը ներշնչելու համար նաեւ ուրիշ հազարաւոր ու միլիոնաւոր մարդկային հոգիներ, եւ աստիճանաբար մարմնանալու անհատական եւ ընկերական կենաց մէջ: Աւանդարանն է գրականութիւնը աստուածային ամենէն սուրբ ներշնչմանց, անցքը՝ որուն մէջէն կը հոսի մարդկային կեանքը կատարելագործող եւ ընկերութիւնը բարեկարգող հոգեկան ուժերուն ամենամեծ մասը:

Գրականութիւնը, ուրեմն, չէ արդիւնքը լոկ եւ կամ պատկերացումը մարդկային կենաց, այլ յաւէտ ամենազլխաւոր մէկ ազդակը անոր զարգացման եւ կամ պատկերացումը անոր մէջ գտնուող ապագայ կարելիութեանց: Եւ ճիշդ այս իրողութիւնն է որ անհուն արժանիք մը կ'ընծայէ գրականութեան: Տեսիլք մը կը յայտնուի յանկարծ միակ անհատի մը հոգւոյն մէջ, ապագայ բաղձալի կարելիութեան մը յափշտակիչ մէկ պատկերը, եւ կ'առնէ անիկա իր գրիչը ու կը ջանայ թուղթի մը վրայ օրինակել հոգեկան այդ յափշտակիչ պատկերը: Նոր եւ բարձրագոյն կեանքի մը ստեղծագործումն է ահա որ կ'սկսի գրելու այս գործողութեան հետ: Որովհետեւ հարիւրաւոր եւ հազարաւոր հոգիներու մէջ եւս պիտի վերարտադրուի իտէալական այդ պատկերը աւելի կամ նուազ յստակ: Որովհետեւ այս վերջիններուն ալ հոգիներէն դուրս պիտի ելնէ վերարտադրուած այս տեսիլքը, այսինքն անհրաժեշտաբար պիտի արտադրուի անոնց նայուածքներուն կամ ժպիտներուն, անոնց խօսքերուն կամ գործերուն մէջէն, եւ մարմին պիտի առնէ այսպէս անոնց կեանքերուն մէջ: Որովհետեւ պիտի բազմապատկուի այս տեսիլքը բազմապատիկ ներկայացուցիչ հոգիներու մէջ եւ արտայայտուի տարբեր տարբեր ձևերու տակ, - հոս իբրեւ նկար մը, հոն իբրեւ քանդակ մը, եւ անդին ալ իբրեւ երգ մը թրթռուն: Որովհետեւ բազմատեսակ ձևերու մէջէն արտայայտուող այդ տեսիլքը կը-

կին եւ կրկին յուզուելով հոգեկան ու Ֆիզիքական կազմուածքին մէջ՝ պիտի ստանայ վերջապէս բաւական ուժգնութիւն արտայայտուելու իբրեւ գործ, եւ կազմելու տեւական մէկ մասը հազարաւոր եւ միլիոնաւոր էակաց նկարագրին: Ներկայացուցիչ անհատներու հոգիներուն մէջ ծընունդ առնող տեսիլքները, այսպէս, գրականութեան անցքէն կը հոսին կեանքի աշխահին մէջ ու կ'արտադրեն անհատական եւ ընկերական ամեն տեսակ յառաջդիմական շարժումներ, ինչպէս արեւուն ոսկի ճառագայթները տերեւային անցքերէ կը հոսին Ֆիզիքական կենաց աշխարհին մէջ եւ կ'արտադրեն անոր բոլոր գործնէութիւններ ու զարգացումներ:

Մեծ հոգիներուն իրենց ներշնչման վայրկեաններուն մէջ արտայայտած խորհրդոց ու ըզգացմանց ստեղծագործ ազդեցութեամբն է յառաջ եկած ներկայ քաղաքակրթութիւնը իր բոլոր ճիւղաւորուած կազմակերպութիւններով, ինչպէս արեւուն կենսատու ճառագայթից ազդեցութեամբը յառաջ կուգայ ծառը իր ամբողջ արմատներովն ու ճիւղերով, եւ ծաղիկներովն ու պտուղներով: Մեծ հոգիներու այս օրհնեալ ներշնչումները իր մէջ ամփոփող, զանոնք յաւիտենապէս կորսուելէ փրկող, զանոնք անմահացնող գրականութիւնը ստեղծիչն է ներկայ քաղաքակրթութեան ընկերութեան գոյութիւնը կարելի ընող եւ անոր կեանքը աճեցնող ամեն տեսակ կազմակերպութեանց. - կրօնական կամ քաղաքական, կրթական կամ բարեսիրական: Ինչ որ իրականութիւն մ'ըն է այսօր անհատական ու ընկերական կենաց բարձրագոյն աստիճաններուն մէջ, ներկա-

յացուցիչ հոգիի մը մէկ իտէպն է եղած անցելոյն մէջ, եւ ինչ որ ներշնչեալ հոգիի մը երազն է լոկ այսօր կրնայ հասարակաց մէկ իրականութիւնը ըլլալ ապագային: Իտէպականին աստիճանական մարմնացումներն են քաղաքակրթութեան ազնուագոյն արտադրութիւնները: Ինչպէս միջնորդարին մէջ սփռուած նուրբ մարմիններն են որ տերւներու մէջէն անցնելով կուգան տարուէ տարի աճեցնել ու մեծցնել ծառի մը բունը, տարուէ տարի փոխուիլ արմատի ու ճիւղի, ծաղկի ու պտուղի, նոյնպէս ալ ներկայացուցիչ անհատներու հոգեկան միջնորդարին մէջ սփռուած ազնուագոյն խորհուրդներն ու զգացումներն են որ գրականութեան մէջէն անցնելով կուգան տարուէ տարի աճեցնել ու մեծցնել մեր քաղաքակրթութիւնը, տարուէ տարի ճոխացնել ու զարգացնել մեր նկարագիրը, տարուէ տարի մարմին առնել աշխարհի երջանկութիւնն ու սէրը աւելցնող եւ մարդկային կեանքը ղէպի կատարելութիւն քաջօգ բազմասեսակ հաստատութեանց մէջ: Եթէ անհատի մը մէջէն անցնող ըզգացմանց ու խորհրդոց ամբողջութիւնն է մարդկային հոգին, ու եթէ այդ կեանքին շարունակական արտայայտումն է մարդկային կեանքը, անշուշտ բարձրագոյն կեանքի անսպառ ուլկիանոս մըն է գրականութիւնը որուն մէջն են ամբարուած աշխարհի ամենէն վեհ հոգիներուն ունեցած ազնուագոյն խորհուրդներն ու զգացումներն:

Ժողովուրդի մը կեանքը բարձրացնելու առաջին անհրաժեշտ պայմանն է գրականութեան միջոցաւ հաղորդակցութեան դնել զանիկա ներկայացուցիչ հոգիներու ունեցած ազնուագոյն

խորհրդոց ու զգացմանց հետ: Ֆիզիքական կեանքը գործարանաւորին ունեցած հաղորդակցութիւնն է իր միջավայրին հետ, նոյնպէս է նաև հոգեկան կեանքը: Ֆիզիքական ոչ մէկ կեանք կրնայ գոյութիւն ունենալ, աճիլ եւ զարգանալ առանց շարունակական հաղորդակցութիւն մ'ունենալու իր միջավայրին հետ. ոչ մէկ կենդանի կրնայ ամենափոքր աստիճանաւ մ'իսկ աճեցնել իր հասակը, մեծցնել իր անդամները կամ աւելցնել իր ոյժերը առանց սնունդ առնելու օդէն ու ջուրէն, բոյսէն ու կենդանիէն: Նոյնպէս ալ ոչ մէկ անհատ կրնայ ամենափոքր աստիճանաւ մ'իսկ զարգացնել իր նկարագիրը, ոչ մէկ ընկերութիւն կրնայ բարեկարգել իր կազմակերպութիւնները եւ աճեցնել յառաջդիմական գործնէութեանց ոյժերը առանց հաղորդակցելու հոգեկան նպաստաւոր միջավայրի մը հետ, առանց ընդունելու ազնուագոյն զգացմանց ու բարձրագոյն խորհրդոց շարունակական հոսանքներ:

?

Մեծապէս սխալած կ'ըլլանք, սակայն, երբ մարդկային կեանքը ազնուացնող ու կատարելագործող ազդակ մը լոկ նկատենք գրականութիւնը: Իր պարունակած զգացումներուն եւ խորհուրդներուն համապատասխան կեանքեր միայն կրնայ ստեղծել անիկա ընթերցողաց մէջ, եւ ապահովաբար կրնանք ըսել թէ ուրիշ ազդի ընդհանուր գրականութիւնը մեծաւ մասամբ արտայայտութիւնն է գոեհիկ զգացումներու և անճիշդ խորհուրդներու, պատկերացումը՝ իրական կենաց

տգեղ ու ապականեալ կողմերուն:

Երկար խորհելու հարկ չկայ այս խիստ տխուր իրականութեան պատճառը գտնելու համար: Աստուածային ու անասնական դրդումներու խառնուրդ մըն է մարդ էակը: Աստուած-Մարդուն հետ անոր մէջ կ'ապրի ու կը գործէ Անասուն-Մարդը: Մարդկային սրտին մէջ գոյութիւն ունեցող ամեն դրդում, գռեհիկ կամ ազնիւ, արտայայտման ելք մը կը փնտռէ ստիպողաբար: Հոգւոյն մէջ բանտարկուած չկրնար մնալ մարդկային սեւէ դրդում կամ զգացում, անշուշտ կ'արտայայտուի անիկա շարժման մը կամ նայուածքի մը, խօսքի մը կամ գործի մը մէջ: Երբ զայրացած ենք անձի մը դէմ՝ ստիպողաբար կը դրդուինք հարուածել զանիկա ձեռքով կամ ոտքով, եւ այսպէս գործի մէջ արտայայտել մեր զայրութիւնը, ինչպէս կ'ընեն սովորաբար մանուկներն ու անքաղաքակիրթ անձինք: Իսկ երբ ընկերական բարձրագոյն նկատումներ խափանեն մեր ձեռաց կամ ոտից հարուածելու միտումներուն գործնականացումը, մեր շրթներէն, մեր դէմքէն կամ աչքերէն դուրս կը ցայտէ վերջապէս այդ ներքին յուզումը իբրև բարկացող խօսք մը, դէմքի կարմրութիւն մը կամ նայուածք մը խոփոռ: Ու երբ գրիչ շարժելու վարժ են մեր մատներ, թուղթի մը վրայ եւ կը ժայթքէ այն ատեն այդ զայրութիւնը ու իբրև գրութիւն կ'երթայ հարուածել դիմացի հակառակորդը:

Իական տարբերութիւն մը չգտնուիր այսպէս իրական կենաց ու գրականութեան միջեւ: մարդուս առօրեայ կեանքը արտայայտում է իր զգացումներուն ու խորհուրդներուն, եւ գրականու-

թիւնն ալ թուղթի վրայ արտայայտումն է նոյն զգացումներուն ու խորհուրդներուն: Ասոր համար է որ ընդհանուր նմանութիւն մը կը գտնուի ժողովուրդի մը կեանքին ու անոր արտադրած գրականութեան միջեւ: Երկուքն ալ մարմնացումներն են նոյն հոգիին. սա տարբերութեամբ միայն որ շատ աւելի դիւրութեամբ ու ճոխութեամբ կրնայ մարդկային հոգին արտայայտուիլ գրականութեան մէջ քան թէ իրական կենաց, մասնաւորապէս ճշմարիտ է այս անոր բարձրագոյն ձգտումներուն՝ եւ իտէպլներուն համար:

Բայց հոգւոյ արտայայտութիւնը լիկ չէ գրականութիւնը, ինչպէս շեշտեցինք քիչ առաջ: Միակ հոգիի մը զգացումներուն ու խորհուրդներուն արդիւնքը եղող գրութիւն մը, իր կարգին, կ'ըլլայ ստեղծիչը ոչ միայն նմանօրինակ զգացմանց ու խորհրդոց հարիւրաւոր եւ հազարաւոր հոգիներու մէջ, այլ նմանօրինակ գործերու նաև: Այս իրողութիւնն է ահա որ այնքան սարսափելի անէծք մը կը դարձնէ գրականութիւնը որքան անգին օրհնութիւն մը: Գռեհիկ զգացումներ ու ապականեալ խորհուրդներ պարունակող գրականութիւն մը անսպառ աղբիւր մըն է գռեհիկ գործերու եւ ապականեալ կեանքերու: Ու երբ խորհինք վայրկեան մը թէ որչափ ընդարձակ տեղ մը կը գրաւեն մարդկային հոգւոյն մէջ ատելութեան, նախանձի, վրէժխնդրութեան, անիրաւութեան եւ յափշտակութեան նման անձնասիրական զգացումներ եւ սեռային կիրքեր ու ցանկութիւններ, երբ խորհինք վայրկեան մը թէ որչափ ուժգին դրդմամբ մը արտայայտուիլ կը

ճգնի հոգւոյ մեծագոյն մասը կազմող Անասուն Մարդը՝ այնքան գրականութեան որքան գործնական կենաց մէջ, չպիտի զարմանանք այն ատեն տեսնելով որ ախտաւոր է ոեւէ ազգի գրական արտադրութեանց մեծագոյն մասը: Ճիշդ այս է նաեւ պատճառը որ մեծաւ մասամբ ախտաւոր գրականութեան մը ծնունդը կուտան իրական կենաց անխտիր պատկերացումները: Անասնական բնաւորութիւնը շատ աւելի հիմնական տեղ մը բռնած է մարդուս մէջ եւ շատ աւելի ուժգնութեամբ կ'արտայայտուի անոր կենացը մէջ քան աստուածային բնաւորութիւնը: Մարդկութեան ամենամեծ մասը կ'ապրի ու կը գործէ տակաւին ստորնագոյն բնազդներու իշխող ազդեցութեանը տակ աւելի քան թէ բարձրագոյն իտէաններու: Մարդկային կեանքը հետեւապէս աւելի մարմնացումն է անցեալին կտակած անասնական դրդումներուն քան թէ ապագային պարգեւած ազնիւ ձգտումներուն, եւ անոր անխտիր պատկերացումներուն մէջ կարկաւորապէս աւելի ընդարձակ տեղ մը պիտի գրաւեն մոլութիւնը, ապականութիւնը, կարստահարութիւնը, ցանկութիւնը եւ ամեն տեսակ գարշելի արարքներ քան թէ առաքինութիւնը, արդարութիւնը, գթութիւնն ու սրբութիւնը:

Ախտաւոր գրականութեան մը ծնունդը տուող այս երկու պատճառներն ալ այնքան ֆլասաբեր չպիտի ըլլային բաղդատաբար եթէ աւելի զօրաւոր ուրիշ պատճառ մըն ալ չգար աւելնալ անոնց վրայ: Հաճոյք կը քաղէ մարդ իր հոգեկան վիճակին համապատասխանող գրութեանց ընթերցումներէն, եւ հետեւապէս բաղդատաբար աւելի

ընթերցողներ կը գտնեն մարդկային գոեհիկ ըզգացումներն ու կիրքերը յուզող կամ կենաց ըստորնագոյն կողմերը պատկերացնող գրութիւններ, քան թէ անոր բնութեան ազնուագոյն տարրերը գործնութեան դրդող, անոր խորհուրդներն ու իտէանները բարձրացնող, եւ կամ կենաց վերնագոյն մակարդակները պատկերացնող գրութիւններ: Դարձեալ, ոչ միայն աւելի բազմաթիւ ընթերցողներ կը գտնեն այսպիսի գրութիւններ, այլ մանաւանդ աւելի ուշադրութեամբ կը կարդացուին հասարակութեան կողմէն, և հետեւաբար աւելի կ'ազդեն անոր կեանքին վրայ: Որովհետեւ մարդու մը ոեւէ ընթերցումէ ստացած ազդեցութիւնները համապատասխան են միշտ իր անոր տուած ուշադրութեան աստիճանին: Ու երբ հաճոյք զգայ մարդ իր ոեւէ մէկ ընթերցումէն, ըսել է թէ անոր պարունակած զգացումներն ու խորհուրդները կը վերակենդանանան իր մէջ, ըսել է թէ կեանքի կը փոխուին ու կը կազմեն գործօն մէկ մասը իր նկարագրին: Որովհետեւ ուրիշ բան չկրնար ըլլալ ընթերցման մը առթած հաճոյքը, եթէ ոչ մէկ արտադրութիւնը անոր ծընունդը տուած զգացմանց ու խորհրդոց գործնութիւններուն: Ընդհանրութիւնը, ուրեմն, աւելի հաճոյք կը քաղէ գրական բաղդատաբար ստորնագոյն արտադրութեանց ընթերցումներէն քան թէ բարձրագոյն: Այս իրողութեան մէջ կը գտնուի ահա ախտաւոր գրականութեան գոյութեանն ու բազմապատկումին մեծագոյն պատճառը: Աշխարհի գրական հրապարակը կ'ողողուի շարունակ կենաց ամենէն հրէշային կողմերը անպատկառօրէն ներկայացնող վէպերով, օրա-

գրութեանց էջերը կը լեցուին շարունակ ոճրագործութեանց ու տեսակ տեսակ ցոփութեանց մանրամասն ու գրաւիչ պատկերացումներով, և շարունակ կը հրատարակուին ժողովրդային մուշտրութիւններ ու նախապաշարումներ պաշտպանող գիրքեր եւ գրութիւններ, որովհետեւ մեծ քանակութեամբ կը գնուին անոնք հասարակութեան կողմէն, որովհետեւ պահանջը կը գտնուի միշտ այսպիսի ապականիչ ու մուրեքցուցիչ գրութիւններու, եւ որովհետեւ առատօրէն կը վարձատրուին զանոնք հեղինակողներն ու հրատարակողները:

Այս պարագան չթեթեցներ անշուշտ պատասխանատուութիւնը այն անարժան հրատարակագիրներուն և գրագէտներուն, որոնք ոեւէ նկատումով կը յօժարին գոհացում տալ կոյր եւ անգիտակից հասարակութեան մը ստորնագոյն դրդումներուն: Բառին ամենէն ճշմարիտ առումովը դաւաճաններ են այսպիսիք, որովհետեւ կորստեան կը մատնեն անոնք իրենց ժողովրդեան ամենաբարձր շահերը, կ'անասնացնեն անոր բնաւորութիւնը, կը խորտակեն անոր նկարագիրը, կը քայքայեն դարերու ճիգերով ձեռք բերուած անոր հաստատութիւնները, կ'ապականեն անոր անհատական ու հանրային կեանքը, եւ կը փճացնեն անոր ապագայ յոյսերն ու ակնկալութիւններ: Ու երբ նկատի առնենք այն իրողութիւնք թէ ապագայ իտէպլական կեանքի մը յառաջանալէ որչափ աւելի դիւրաւ ետ կրնայ դառնալ ժողովուրդ մը իր անցեալ գազանային կեանքին, եւ թէ գրականութեան մէջ անոր ոեւէ մէկ ներկայացումը որչափ դիւրաւ կրնայ վերակեն-

գանացնել զայն ուշադիր ընթերցողին մէջ, այն ատեն կրնանք զգալ մեծութիւնը ոճիրին զոր կը գործեն ախտաւոր գրականութեան մը ծնունդ տուող բոլոր հեղինակները:

4

Մարդկային հոգւոյն մէջ այնքան ընդարձակ տեղ մը եթէ կը գրաւեն յարաւոր անցեալի մը թողուցած բնազգային դրդումներն, ու եթէ այնքան ուշադրութեամբ եւ հաճոյքով կը կարգայ հասարակութիւնը իր հոգւոյն ստորնագոյն դրդումները արտայայտող եւ կենաց գոհակի կողմերը ներկայացնող գրութիւններ, ու եթէ անխուսափելիօրէն կեանքի կը փոխուին ասոնք ընթերցողին մէջ. ինչպէ՞ս կարելի է, ուրեմն, աստիճանաբար բարձրացնել ազգի մը գրականութիւնը, և ինչպէ՞ս կարելի է աւելի ու աւելի բարձր գրականութեան մը հետ հաղորդակցութեան դնել ընթերցող հասարակութիւնը: Ասոնք են ահա այն երկու հարցերը, որոնց լուծումներէն կախուած է գլխաւորաբար ազգի մը փրկութիւնը:

Անօգուտ է դատապարտել այն անխիղճ գրողները որ վար կը քաշեն իրենց ընթերցողները կենաց այն բարձրութիւններէն որոնց հասնելու համար երկար դարեր մաքառած ու տառապած է մարդկային սեռը: Անօգուտ է մեղադրել անգիտակից ժողովուրդը որ այնքան ախորժանօք կը կարգայ նոյն իսկ իր կեանքը փճացնող գրութիւններ: Որչափ ատեն որ անասնական կե-

նաց տիրապետութեան տակ ապրի ժողովուրդ մը առ հասարակ, այնչափ ատեն պիտի փնտռէ իր անսանական բնութեան հաճոյք առթող գրքեր ու գրութիւններ, եւ այնչափ ատեն ալ պիտի գտնուին իր այս պահանջին գոհացում տալու պատրաստ գրողներ: Այն ատեն միայն քաջալերութիւն չգտնելով հետզհետէ պիտի պակսի ախտաւոր արտադրութեանց թիւն ու ազդեցութիւնը, երբ հասարակութեան մեծամասնութիւնը հաճոյքէ աւելի զգուանք զգայ անոնց ընթերցումներէն: Չարիքի մը առջեւը առնելու անհրաժեշտ պայմանն է անոր ծնունդ տուող պատճառները գտնել եւ գանոնք ջնջելու ջանալ նախ: Ախտաւոր դրականութեան ծնունդ տուող պատճառները կը գտնուին բուն իսկ մարդկային հոգւոյն մէջ, այդ պատճառները նախ վերցնելու ենք եւ անոնց հետ անհետացած պիտի ըլլան իրենց յառաջ բերած բոլոր ազդեցութիւնը հաճոյք քաղելէ ապականեալ գրութեանց ընթերցումներէն, եւ պիտի դադրին նաեւ անոնց հրատարակութիւնները: Թող զըզուանք զգայ հասարակութիւնը իր կեանքը անասնացնելու բնոյթն ունեցող գրութիւններէ, եւ դժուար պիտի ըլլայ գանոնք արտադրող հեղինակներ կամ տպագրող հրատարակիչներ գտնել այլեւս, որովհետեւ դրամապէս մնասուելէ զատ՝ հանրային զայրութիւն ու արհամարհանքն ալ իրենց վրայ դարձուցած պիտի ըլլան ասով:

Անկարելի է ունէ չբարիք վերցնել աշխարհի երեսէն առանց ջնջելու նախ անոր ծնունդ տուող պատճառները: Ցաւալի իրողութիւն մըն է, սա-

կայն, որ այս բանաւոր ընթացքին ճիշդ հակառակ ուղղութեամբ մը կը գործեն մարդիկ առ հասարակ: Որչափ կը յուզուինք երբ կուի, դատ, արիւնահեղութիւն, կամ ասելութեան ու վրէժխնդրութեան գործնական ցոյցեր տեսնենք մեր ժողովուրդին մէջ, որչափ իրար կ'անցնինք այսպիսի պարագայից տակ ու իբր ազգասէր ջանք մը կ'ընենք առջեւը առնելու համար այդ գայթակղալից արարքներուն: Բայց նոյն ատենը որչափ անտարբեր կը մնանք երբ այդ կուիներուն, ասելութեան ու վրէժխնդրութեան այդ գործնական ցոյցերուն ծնունդ տուող կրքոտ գրութիւններով մրտուած կը տեսնենք մեր ժողովուրդային թերթերը: Շատ աւելի մեծ զոհողութիւններ ընելու պատրաստ կը գտնուինք արդիւնքը ջնջելու համար քան թէ անոր ծնունդ տուող պատճառները: Ժողովրդեան մը բարուց մաքրագործումին համար այսպիսի անրնական ու հետեւապէս անյաջող մէթոտներու դիմող ազգասէրներ կը նմանին այն տխմար անձին որ առուի մը մէջէն հոսող պղտոր ջրերը մաքրել կ'աշխատի՝ փոխանակ այդ պղտորութեան աղբիւրը եղող ակը մաքրելու: Իրենց ժողովրդեան հարիւրապատիկ եւ կրնանք ըսել հազարապատիկ աւելի մեծ ծառայութիւն մը կը մատուցանեն այն անձինք որ բարձրագոյն գրականութեան մը հետ հողորդակցութեան դնել կ'աշխատին զանիկա, քան թէ այն անձինք որ անոր կենաց մէջ արտայայտուած գոհակի բարքերը, կուիներն ու թշնամական արարքները լոկ մէջտեղէն վերցնել կ'աշխատին: Ռոզվհետեւ ժողովուրդի մը կենաց մէջէն ապականութիւնը ջնջելու համար, անոր

հոգւոյն մէջէն ապականութիւնը ջնջել պէտք է նախ, եւ հոգւոյն մէջէն ոեւէ ապականութիւն ջնջելու անհրաժեշտ պայմանն է մաքրութիւնը նախ ներմուծել հոն: Որովհետեւ մարդկային հոգւոյն եւ հետեւապէս կենաց մէջէն Չարը արտաքսելու միակ բանաւոր ու յաջողութիւնը ստոյգ միջոցն է Բարին մտցնել հոն: Բարձրագունին ներկայութենէն ստիպողաբար խոյս կուտայ ստորնագոյնը: Վարժեցուցէք ժողովուրդը հաճոյք զգալու գրական ազնուագոյն արտադրութեանց ընթերցումներէն, եւ անընդունակ պիտի դառնայ անիկա այլեւս հաճոյք քաղելու ախտաւոր գրականութեան մը ընթերցումէն. բարձրագոյն հաճոյքներն են միայն որ կրնան սպաննել ստորնագոյն հաճոյքները: Վարժեցուցէք ժողովուրդը հաճոյք զգալու բարձրագոյն գրականութեան մը հետ ունեցած իր հաղորդակցութիւններէն, եւ ասով ճշմարտապէս ձեռնարկած պիտի ըլլաք անոր կեանքը հիմնովին բարեփոխելու օրհնեալ գործին: Բարձրագոյն գրականութեան մը պարունակած ազնիւ զգացումներն ու լուրջ խորհուրդները այնքան ստուգապէս պիտի արտայայտուին իրենցմով սնանող անձանց կեանքի գործերէն, որչափ ստուգապէս որ արեւուն ճառագայթները կ'արտայայտուին իրենցմով սնանող բուսականաց կեանքի գործնէութիւններէն: Եւ այս բարձրագոյն խորհուրդներուն, զգացումներուն եւ գործերուն ամբողջութիւնը կազմող ազնիւ նկարագիրն է միայն որ պիտի կրնայ մեռցնել անասնական գոռհիկ դրդումներու, բաղձանքներու, կիրքերու եւ գործերու ամբողջութիւնը կազմող ստորին նկարագիրը:

Բարձրագոյն գրականութեան մը հետ ընթերցող հասարակութիւնը հաղորդակցութեան դնելու գործը, այսպէս, առաջին անհրաժեշտ քայլն է ժողովուրդի մը կենաց բարձրացմանն ու ազնուացմանը, սկզբնաւորութիւնը՝ անոր յառաջիմական շարժումներուն, էական մէկ պայմանը՝ անոր գոյութեանն ու զարգացմանը:



ԱՆՏԵՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1

Որսի կենդանեաց նման ձայներ կը հանեն ու շարժումներ կ'ընեն Ամերիկեան Հնդիկները իրենց պարերուն մէջ: Քեաֆիրները, խափշիկները ու գրեթէ բոլոր նախնական ցեղերն ալ որսի կենդանեաց այսպիսի նմանութիւններ ունին իրենց պարերուն մէջ: Ի՞նչ նշանակութիւն ունի այս իրողութիւնը: Ի՞նչպէս եղած է որ զուարճութեան համար ստեղծուած գեղարուեստի այս նախնական ճիւղին մէջ մուտ են գտած որսի կենդանեաց ձայնի ու շարժումներու նմանութիւնները:

Կենդանեաց արմատական մէկ յատկութեանը մէջ փնտռելու ենք այս հարցման պատասխանը: Ոեւէ բարձրագոյն կենդանի մեծապէս կ'ազդուի իր մէկ օրինակէն կամ նմանութենէն ու անոր կը դիմէ: Այսպէս, վայրի ցուլերու ձայնի ու շարժման նմանողութեամբը կատարուած ցլապարեր կրնան ստիպել կենդանին որ որսացուելու աստիճան մօտենայ մինչեւ անգամ բանակատեղիի մը: Որսորդութեամբ պարապող նախնական ցեղեր հասկցած էին այս ճշմարտութիւնը և հետևապէս նմանողութեան այս հնարքները մտցուցած էին իրենց պարերուն մէջ: Անցելոյն մէջ այսպիսի օգտակար նպատակաց ծառայող նրմանողութիւններու որոշ հետքեր կրնանք գտնել կէս-քաղաքակիրթ ազգաց պարերուն մէջն իսկ, որոնք սակայն կորսնցուցած են իրենց նշանակութիւնը:

75

Վերը յիշուած իրողութեան նշանակութիւնը ըմբռնելէ վերջ՝ մարդկային բնութեան նմանօրինակ մէկ յատկութեանը վրայ դարձնենք մեր ուշադրութիւնը: Անվիճելի իրողութիւն մըն է է թէ ով որ հաճոյք կ'զգայ ոճրագործութիւններու, աւազակութիւններու, արիւնալից կռիւներու, դժոխային տանջանքներու եւ անառակութիւններու պատմութիւններ լսելէ, կամ զանոնք պատկերացնող վէպեր կարդալէ, եւ կամ թատերաբեմին վրայ անոնց ներկայացումները դիտելէ, անիկա աստիճանաբար կ'սկսի նաեւ հաճոյք զգալ իրական ոճրագործութիւններ, կռիւներ, արիւնահեղութիւններ ու անառակութիւններ տեսնելէ: Ոեւէ գռեհիկ զգացում, կիրք կամ ցանկութիւն արտայայտող խօսակցութենէ, ընթերցումէ կամ ներկայացումէ հաճոյք զգացող անձին մէջ անզգալարար կ'արթննայ նաեւ անդիմադրելի բաղձանք մը՝ այդ ստորին կիրքերը արտայայտող իրական գործողութիւնները տեսնելու: Եւ ոեւէ կռիւ տեսնելու հաճոյքէն, ոեւէ անձի սպաննումը դիտելու կամ ոեւէ անառակ գործի ականատես ըլլալու հաճոյքներէն աստիճանաբար կը ծնին կռուելու, սպաննելու եւ անառակութիւններ ընելու զօրաւոր բաղձանքներ: Ասկէ կը հետեւի թէ ատելութիւն, նախանձ, վրէժխնդրութիւն, կռուասիրութիւն եւ կամ ցանկութիւն արթնցնող գրուածոց շարունակական ընթերցումները աստիճանաբար՝ բայց ստուգապէս՝ կ'ընեն զմարդ ատող, նախանձոտ, վրէժխնդիր, կռուասէր ու ցանկացող:

Եթէ գրութեանս սահմանները ներէին կրնայինք թուանշաններով ցոյց տալ թէ Ամերիկայի

այն նահանգներուն մէջ բաղդատաբար աւելի ոճրագործ, անառակ, կամ ընկերութեան փնասակար ըլլալու աստիճան բարոյապէս ինկած անձեր կը գտնուին, որոնց օրաթերթերուն մէջ համեմատաբար շատ աւելի տեղ կը տրուի այդ տեսակ գայթակղալից դէպքերու նկարագրութիւններուն: Մասնագէտներու կատարած մէկէ աւելի խնամոտ ուսումնասիրութեանցը վրայ հիմնուելով է որ այս խօսքը կ'ըսենք: Ամերիկացի ընկերաբան մը փորձած էր իւրաքանչիւր նահանգի բարոյական մակարդակը չափորոշել, անոր մէջ հրատարակուող օրաթերթերուն պարունակութիւնները լոկ հաշուի առնելով: Որովհետեւ ընդհանրութեան կողմէն կարդացուող օրագրութիւն մը ոչ միայն իր ընթերցողաց հոգեկան վիճակը կը ցոյցանէ, այլ նաեւ կ'եղանակաւորէ զայն: Երբ ընկերութեան մը ամենէն զգուելի կողմերը ներկայացնելու համար ընդարձակ էջեր նուիրող օրագրութիւն մը, երբ ամենէն գայթակղալից դէպքը կամ դատաւարութիւնը շաբաթներով մանրամասնօրէն իր ընթերցողներուն ներկայացնող օրագրութիւն մը յաջողի իր գոյութիւնը պահպանել քաղաքի մը կամ նահանգի մը մէջ, երբ ամբողջ բնակչութեան մէկ մեծ մասը կը շարունակէ հետաքրքրութեամբ կարդալ զայն, ըսել է թէ հասարակութեան մէկ մեծ մասը հաճոյք կ'ըզգայ այդպիսի ընթերցումներէ, եւ թէ այդ գայթակղալից դէպքերու ծնունդ տուող գուհիկ զգացումները կարեւոր տեղ մը կը գրաւեն իր սրտին մէջ նաեւ: Որովհետեւ բուն իսկ իր զգացումներուն գոհացում տուող ընթերցումներէն միայն հաճոյք կրնայ քաղել

մարդ: Զգացման մը գոհացումն է լոկ հաճոյքը: Մարդասպանութեան ոչ մէկ նկարագրութիւն կրնայ հաճոյք առթել ինձ, եթէ մարդասպանութեան զգացումը կամ միտումը արդէն իսկ գոյութիւն չունի իմ մէջս: Սխալած չէր բնաւ Ամերիկացի ընկերաբանը. ժողովուրդի մը մէջ ամենէն բազմաթիւ ընթերցողներ ունեցող օրագրութիւնն է ճշմարիտ չափանիշը անոր բարոյական միջին բարձրութեան:

2

Գազանային վիճակ մըն է ունեցած մարդ անցելոյն մէջ: Կողոպտել, յափշտակել, անիրաւել, տանջել ու սպաննել էր նախնական մարդուն զբաղումն ու զբօսանք: Իրաւունքի ու արդարութեան ամենէն տարրական սկզբունքներն իսկ տեղ բռնած չէին դեռ նախնական ցեղերու մէջ: Անոնց օրիորդներուն համար անպատուութիւն էր ամուսնանալ երիտասարդի մը հետ, որը չէր կրցած դեռ մարդ սպաննել դրացի ցեղերէն: Մարդկային գանկերով կը զարդարէին անոնք իրենց սենեակի պատերը, ինչպէս մենք պատկերներով, եւ բազմաթիւ գանկեր ունեցող անձն էր ամենէն պատուաւորը անոնց մէջ: Պատերազմի դաշտէն գերի կիներ ու մանուկներ կը դրկէր ամուսինը իր կնոջ ու զաւակներուն, որոնց միսերէն խորտիկներ կը պատրաստուէին տօնախմբութեանց մէջ ուտուելու համար: Այսպիսի քստմնելի վիճակի մը մէջ կ'ապրէր նախնական մարդը:

Ու դեռ իբր երկու հազար տարի առաջ միայն Հռովմէական կայսր մը՝ իր ճաշը ախորժակով ուտել կրնալու համար՝ տանջանքի տեղեր շինել կուտար իր պատուհանին առջեւ, որպէսզի մահապարտներ պատառուէին հոն արիւնարբու գազանաց ճիրաններու տակ, եւ ինքը՝ ճաշի նստած՝ լսէր այդ զոհերուն աղիողորմ ճիչերը, տեսնէր անոնց կտոր կտոր յօշոտուիլը, եւ իր կերակուրն ուտէր ախորժանօք։ Դեռ իբր երկու հազար տարի առաջ միայն Հռովմէական կայսրութեան ամենէն ազնուական, ամենէն փափկասուն տիկիները անձկանօք կ'սպասէին այն օրուան, երբ պիտի կրնային կրկէսը երթալ ու հոն՝ երկրին բարձրագոյն դասակարգը կազմող պաշտօնատարներու եւ անոնց տիկիներուն հետ նստած՝ հրճուանքով դիտել դողդոջուն կիներու եւ անմեղ մանկանց նետուիլը արիւնկզակ առիւծներու առջեւ։ Մայրական սիրտ կրող այդ ազնուական տիկիները՝ փոխանակ քստմնելու՝ ծափահարութիւններով եւ ուրախութեան բարձրագոյն աղաղակներով օղբ կը թնդացնէին ամեն անգամ որ աղիողորմ ճիչ մը բարձրանար խեղճ զոհին շրթներէն, եւ կամ անոր մարմնոյն մէկ մասը յօշոտէր արիւնկզակ գազանին ճիրանացը տակ։ Դեռ քանի մը հարիւր տարի առաջ միայն կրօնի ներկայացուցիչները, Սիրոյ Աւետարանին ու Երկնից Թագաւորութեան այդ առաքեալները, սատանայական գործիքներ կը հնարէին տանջել կարենալու համար մարդկային յառաջդիմութեան արի ուժակիրները։

Այսօր ոչ մէկ քաղաքակիրթ երկրի վեհապետ պիտի կրնայ իր ճաշը շարունակել, երբ

արիւնարբու գազանի մը ճիրանացը տակ փռուած մարդկային էակ մը տեսնէ կամ անոր սրտակրտուր ճիչը հնչէ իր ականջներուն։ Այսօր ոչ մէկ քաղաքակիրթ տիկին կրնայ կենդանիի մ'իսկ ըսպանուիլը տեսնել առանց սարսուալու։ Այսօր Քրիստոնէութեան եւ ոչ մէկ ներկայացուցիչ մարմին պիտի հաճի Հաւատաքննութեան Դժոխային տանջանքներուն մէջ չարչրկել ամենէն ծայրայեղ անհաւատն իսկ։ Այսքան մեծ է եղած մարդուս հոգեկան բնաշրջումը։

Բայց ներկայ զարգացեալ մարդկութիւնն ալ շատ հեռի կը գտնուի տակաւին կատարելութեան իտէալէն։ Մարդիկ կրնան դեռ մեծ հաճոյքով դիտել երկու աքաղաղներու արիւնալից կռիւր։ Գիւղացի ժողովուրդը՝ այր ու կին, մանուկ ու ծեր հաւասարապէս՝ կրնայ խմբովին դաշտը դիմել երկու գոմէշներու հանդիսական կռիւր դիտելու համար։ Փողոցին մէջ կռուող երկու տըղայոց իրարու տուած հարուածներն ու տանջանքներ հաճոյալից տեսարան մը կրնան ընծայել տակաւին հարիւրաւոր անցորդներու, որոնք աւելի կը զրգռեն յաճախ կռիւր՝ իրենց գազանային զգացմանց գոհացում տալու համար պարզապէս։ Հաւու մը արիւնը տեսնելու ատեն մարմող ներկայ փափկասիրտ կիները տակաւին ուրախութեամբ կը դիտեն թատերաբեմին վրայ կատարուած յափշտակութիւններն, անառակութիւններ և ամենէն քստմնելի ոճրագործութիւններ։ Մըջիւնի մը վրայ կոխկէ զգուշացող մերձգայուն օրիորդները կրնան տակաւին օրերով չու տարիներով ընկղմիլ կեանքի հրէշային իրականութիւնները պատկերացնող վէպերու ընթերցմանը մէջ։ Ոճ-

րագործութենէ, ցոփութենէ ու արիւնահեղութենէ զգուող մեր քաղաքակիրթ հասարակութիւնը մեծ հաճոյք կ'զգայ տակաւին անոնց մասին գրուած պատմութիւնները կարդալով: Եղբայրասպան կռիւներէ ետ քաշուող ժողովուրդը մեծ հաճոյքով կը կարդայ տակաւին եղբայր եղբօր դէմ գրգռող յօդուածներ ու թերթեր, ու բազմութեամբ կը դիմէ ատելութիւն ներշնչող ատենախօսութիւններ, վէճեր ու խօսակցութիւններ լսելու: Քաղաքակիրթութեան մէջ բանտարկուած գերիներ ենք տակաւին: Գաղանային բնութիւն մը կը մրմռայ մեր հոգւոյն ամենէն արմատական մասերուն մէջ: Հին Մարդը տակաւին կ'ապրի մեր կրծոց տակ՝ արհամարհող, նախատող, ցանկացող, ատող, վրէժխնդիր, յափշտակող, կռուող եւ արիւն թափելու ծարաւի Հին Մարդը: Եւ անիկա է որ հաճոյք կը քաղէ այն ամեն ընթերցումներէն, խօսակցութիւններէն ու դէպքերէն, որոնք կրնան աստիճան մը գոնէ գոհացում տալ իր գաղանային բաղձանքներուն:

Այս տխուր իրականութիւնները ներկայացնելով մեր նպատակն է անջնջելիօրէն դրոշմել ընթերցողներուն մտացը վրայ թէ գաղանային սարսափարկու անցեալ մըն է ունեցած մարդկային սեռը, թէ երկար դարերու անհուն ճիգերովը հազիւ աստիճան մը միայ. կրցած է փրկել զինքը այդ անասնական բնութեան ճիրաններէն, եւ թէ իր մէջ կը տիրեն տակաւին հնութեան ստորին միտումներն ու բնագղներ, կիրքերն ու ցանկութիւններ:

Որսի կենդանիներէն շատ աւելի անդիմադրելի դրդումով մը կը դիմէ մարդ բոլոր այն բաներուն որոնց մէջ իր սեւէ մէկ զգացման նրմանողութիւնը կ'երևի: Բնութեան, արուեստի ու ընկերութեան մէջ ամեն բան որ այսինչ զգացումը գրգռելու բնոյթն ունի, անդիմադրելի ուժով մը իրեն կը քաշէ բոլոր այն անձինքը որոնց սրտերուն մէջ բաւական զօրաւոր տեղ մը գրաւած է արդէն այդ զգացումը: Այս իրողութեան մէջ փնտռելու ենք ահա՛ ախտաւոր գրականութեան ահաւոր նշանակութիւնը: Ախտաւոր է այն գիրքը, այն թերթը կամ այն գրականութիւնը, հոգ չէ թէ ինչ բարձր ու նուիրական նիւթերու վրայ կը ճառէ, հոգ չէ թէ ինչ անուրանալի իրողութիւններ կը պարունակէ, հոգ չէ թէ ինչ զեղծումներ երևան բերելու նպատակուած է, հոգ չէ այս ամենը, ախտաւոր է անիկա եթէ անցելոյն վայրենական կիրքերն ու ցանկութիւններ կ'արթնցնէ կամ կը զօրացնէ իր ընթերցողներուն մէջ, եթէ ետ դէպի անցեալը կը քաշէ անոնց սրտերը՝ որոնց անխուսափելիօրէն պիտի հետևին նաեւ անոնց գործերն ու կեանքեր, եթէ աւելի կռուասէր, աւելի արհամարհող, աւելի նախատող, աւելի ցանկացող, աւելի վըրէժխնդիր ու աւելի ընկերատեսաց կը թողու զանոնք:

Կ'ուզենք որոշակի պարզել այս կէտը: Չենք գիտեր ի՞նչ ըսել կ'ուզեն ոմանք երբ կը յայտարարեն թէ կեանքի բոլոր իրականութիւնները ան-

խտիր ներկայացնել է գրականութեան պաշտօնը, թէ մարդկային կենաց հաւատարիմ մէկ ընդօրինակութիւնը ըլլալու է բնական, և ամենէն բաց ու որոշ գոյներով պատկերացնել ջանալու է ամբողջ ընկերութիւնը՝ իր բոլոր ապականութիւններովն ու տղեղութիւններով: Ի՞նչ պիտի ըլլար արդեօք մարդկութեան ներկայ վիճակը եթէ այսպիսի ուղղութեան մը հետեւած ըլլար գրականութիւնը: Ու՞ր պիտի մնային այն ատեն մարդուս փառքն ու արժանիքը կազմող հոգեկան այնքան զարգացումներ և քաղաքակրթութեան այնքան ազնիւ արտադրութիւններ: Ո՛չ. այդպիսի պաշտօն մը երբեք ունեցած չէ գրականութիւնը ու չպիտի ունենայ յաւիտեան: Մարդկային կենաց կամ բնութեան անխտիր ընդօրինակումը չէ գրականութիւնը, ինչպէս չէ արուեստը: Մարդուս հոգեկան ամբողջ կեանքը պատկերացնել և ասով զանկա իր ամբողջութեամբը զարգացնել կոչուած չէ գրականութիւնը, ինչպէս դաստիարակութիւնը կոչուած չէ մանկան ամբողջ հոգին մարզել ու զարգացնել: Բնութեան ցիրուցան երևոյթներէն զանոնք միայն կ'ընտրէ արուեստագէտը որոնցմէ գեղեցկութեան հրաշակերտներ կրնայ ըստեղծել. մանկան հոգւոյն ազնուագոյն զգացումները միայն մարզել ու զարգացնել կը ճգնի դաստիարակութիւնը, և անոնց միայն գոհացում կամ հաճոյք առթող, զանոնք միայն գործնէութեան դրդող ազդեցութեանց ենթարկել կը ջանայ մանկան կեանքը: Ընտրողութեան տիեզերական օրէնքին հպատակելու է գրականութիւնը, ինչպէս կը ջանան հպատակիլ արուեստն ու դաստիարակութիւն:

Ճշմարտութեան դէմ դաւաճանութիւն մը պիտի համարուին անշուշտ այսպիսի խօսքեր մեր իրապաշտ բարեկամաց կողմէն: Ի՞նչ, պիտի դուչեն անոնք զարմանքով, խեղաթիւրելու կամ ծածկելու՞ ենք միթէ կեանքի իրականութիւնները: Հրապարակագիրը պարտաւոր չէ՞ միթէ ամենէն զօրաւոր գոյներով ներկայացնել ընկերութեան մէջ տիրող գարշելի ապականութիւնները: Հրեղէն գրչով մը պատկերացնելու չէ՞ միթէ վիպագիրը մարդկութեան արտին մէջ գալարող ամենէն զազիր ցանկրութիւններն ու տենջանքներ: Օրագրութիւնը ձաղկելու չէ՞ միթէ ընկերութիւնը հիմնայատակ ընելու ձգտող ամեն տեսակ խարդախ, անիրաւ, գեղծարար և բարոյապէս ինկած անհատներն ու կազմակերպութիւններ: Գրականութեան պաշտօնը եթէ չէ ցոյց տալ հանրութեան՝ իր գոյութեան հիմերը խախտող, իր ապագայ բոլոր յոյսերուն ու ակնկալութեանց ակերը ցամքեցնող բարոյական այս ահռելի չարիքները, գրականութեան պաշտօնը եթէ չէ այսպիսի հրապարակումներով գարշանք մը ըստեղծել ժողովուրդին մէջ դէպի այդ կործանարար չարիքները, եւ այսպէս զօրաւոր գործնէութիւններ յառաջ բերել զանոնք ջնջելու համար. եթէ այս չէ գրականութեան պաշտօնը, ուրիշ ի՞նչ կրնայ ըլլալ ուրեմն:

Մեր ջատագոված գաղափարը ջախջախող պատասխաններ կրնան երևիլ ասոնք հարեւանցի ընթերցողի մը համար, բայց բարեբախտաբար երևութեան է լոկ անոնց զօրութիւնը: Մենք կը պնդենք թէ անկարելի է որ ոեւէ ապականեալ վիճակէ զգուանք զգայ մարդ եւ ինքզին-

քը կամ ուրիշները ջանայ փրկել անկէ, եթէ իր մտքին մէջ նախապէս գոյութիւն չունի արդէն լաւագոյն կեանքի մը իտէալը: Մենք կը պնդենք թէ հասարակութեան խիստ ստուար մասին մէջ մարդկային ազնիւ զգացումներէն ու ձգտումներէն շատ աւելի զօրաւոր են դարաւոր անցեալի մը թողուցած անասնական բնազդներն ու դրդումներ, եւ հետեապէս կենաց դժուարեհ կամ տգեղ կողմերուն պատկերացումը զգուանք պատճառելէ աւելի հաճոյք պիտի առթէ իր ընթերցողաց մեծամասնութեան, ու ետ դէպի անասնական անցեալը քաշէ անոնց սիրտն ու կեանք: Մենք կը պնդենք թէ վանողական ուժերու արդիւնք է բնաւ մարդկութեան ազնուացումն ու կատարելագործում՝ այլ քարշողական ուժերու, թէ անասնական կեանքի մը առթած գարշանքը չէ որ զմարդ դէպի ազնիւ ու կատարեալ կեանքը պիտի վանէ, այլ իտէալական կեանքի գրաւումն է որ պիտի քաշէ զայն դէպի այդ բաղձալի վիճակը: Կը պնդենք մենք թէ բացարձակապէս ախտաւոր է այն գրականութիւնը որ մարդուս անասնական յոռեգոյն բնութեան ունէ մէկ տարրին ՀԱՃՈՅՔ կրնայ առթել: Կը պնդենք մենք թէ գրականութեան պաշտօնն է մարդուս ազնուագոյն բնութեան միայն գոհացում կամ հաճոյք տալ, ու այսպէս զանոնք միայն գործնէութեան դրդել: Ընթերցողին սիրտն ու կեանքը դէպի վեր ՔՍՃՆԼ է գրականութեան նպատակը, ու ոչ թէ դուրս մղել վարէն կամ ստորինէն:

Կ'ընդունինք թէ նոյն գրութիւնը կրնայ տարբեր տպաւորութիւններ թողուլ տարբեր հա-

սակի, սեռի կամ դասակարգի վրայ, թէ ինչ որ մէկուն համար հաճոյք կ'առթէ՝ կրնայ զգուանք պատճառել ուրիշին, ինչ որ մէկուն կիրքը կը գրգռէ՝ կրնայ ազնիւ զգացումներ արթնցնել ուրիշին մէջ: Բայց ապահովաբար կրնանք ըսել թէ ամեն մարդ իր տիրող զգացումներուն համապատասխանող գրութիւններ միայն ուշադրութեամբ կը շարունակէ կարդալ, եւ թէ ուշադրութեան աստիճանն է որ կ'որոշէ ունէ ընթերցման յառաջ բերելիք ազդեցութեանն ալ աստիճանը: Ուրեմն, ախտաւոր գրականութեան գոյութեան իրաւունքը պաշտպանելու համար յառաջ բերուած շատ տկար փաստ մըն է ըսել թէ կրնայ ան լաւ տպաւորութիւններ թողուլ այսինչ կարգի ընթերցողաց վրայ, եւ կրնայ ազնիւ ջանքեր արթնցնել անոնց մէջ՝ ներկայացուած այդ չարիքները մէջտեղէն վերցնելու համար: Գրութեան մը արտայայտած ոգին աստիճան մը իրենց մէջ կրողներն են միշտ անոր տեւական եւ ուշադիր ընթերցողները, հետեապէս նաև անկէ ամենէն աւելի ազդուողները: Տատասկէն թուզ չենք կրնար ակնկալել:

Հոգեկան բնութեան կատարելագործումն է կեանքի վերջնական նպատակը. ասոր համար է որ գոյութիւն առած են ընտանիքն ու դպրոցը, եկեղեցին ու ընկերական ամեն կազմակերպութիւն: Եւ երբ այս վսեմ նպատակին իրագործմանը ռահվիրան ըլլալու սահմանուած գրականութիւնը կուգայ մէկ հարուածով մը քայքայել հոգեկան այս շէնքը որուն կառուցմանը համար հազարաւոր սերունդներ մաքառած են ու տառապած չարաչար, արդարեւ պատճառ կ'ունենանք

սոսկալու : Ախտաւոր անհատներէն հազարապատիկ աւելի ահռելի անէծքներ են ախտաւոր գրքերն ու գրութիւններ : Ախտաւոր գրականութեամբ սնանող ժողովուրդ մը ստուգապէս պիտի այլասեռի ու կործանի :

4

Արուեստի պաշտօնը Գիտութեան պաշտօնին հետ կը շփոթեն բոլոր անոնք որ կը ջանան ճիշդ այնպէս պատկերացնել բնութիւնն ու ընկերութիւնը իրենց գրական արտադրութեանց մէջ ինչպէս որ են : Արտաքին աշխարհի իրողութիւններն ու զանոնք իրարու հետ կապակցող տիեզերական օրէնքները միայն կը փնտռէ Գիտութիւնը ու կը տեսնէ : Զանազան իրողութիւններու միջեւ խտիր դնել չգիտեր ան . հաճելի կամ ահաճելի, բարի կամ չար իրողութիւններ գոյութիւն չունին անոր համար, այլ բոլորովին անգոյն ու անտարբեր իրողութիւններ միայն . բարոյական կամ գեղեցկագիտական ոչ մէկ արժէք կրնայ տեսնել Գիտութիւնը ոեւէ առարկայի, երևութի կամ դէպքի մէջ, հետևապէս ոչ մէկ խտիր կրնայ դնել անոնց միջեւ : Արտաքին աշխարհի կմախքը լոկ կուտայ մեզ Գիտութիւնը, անկենդան կմախքը՝ զանազան օրէնքներու միջոցաւ իրարու միացած չոր իրողութիւններու : Իսկ Արուեստը կուգայ կեանք ներշնչել Գիտութեան ձեւացուցած այդ անկենդան կմախքին մէջ ու գեղեցկութեամբ հագուեցնել զայն : Սրտի տաք զգացումները կը բերէ կը դնէ Արուեստը այդ անկենդան կազմուածքին մէջ եւ

մտաց ալ ինքնաստեղծ խորհուրդներն ու երևակայութիւնները, եւ այսպէս կը փոխակերպէ զայն ապրող ու գեղեցիկ գործարանաւորի մը : Գիտութիւնը վերլուծական է, իսկ Արուեստը համադրական : Գիտութիւնը իրողութեանց տարրերու կը վերածէ մեր զգայարանաց ներկայացող իրականութեան քառասյին ամբողջը, իսկ Արուեստը կը մտնէ Գիտութեան պատրաստած իրողութիւններու անհուն դաշտին մէջ, երևակայութեան առաջնորդութեամբ կ'ընտրէ անոնցմէ մի քանին, իրարու քով կ'ը բերէ զանոնք ու նոր ամբողջ մը կ'ստեղծագործէ այսպէս, նոր ամբողջ մը՝ արուեստագէտին սրտի բաղձանքներով կենսաւորուած : Գիտութեանէ կախում ունի Արուեստը, քանի որ անկարելի է իրարու քով բերել ինչ որ անջատուած չէ արդէն . բայց Գիտութեանէ վսեմագոյն է Արուեստը, որովհետև առաջինը կ'ստորաբաժանէ միայն, կը քակտէ ու կը մեռցնէ, մինչդեռ երկրորդը կը միացնէ, կ'ամբողջացնէ ու կը կենսագործէ : Արտաքին ամեն իրականութիւն հաւատարմօրէն և անխտիր ներկայացնելու մէջ կը կայանայ Գիտութեան արժանիքն ու փառքը, իսկ ներկայացուած այդ իրողութիւններու միջեւ խտիր դնելու, անոնց բարոյական ու գեղեցկագիտական արժէքները չափորոշելու եւ ըստ այնմ զանոնք ընտրելու և միաւորելու կարողութեան մէջ կը կայանայ Արուեստին գոյութեան միակ իրաւունքն ու արժանիքը : Գիտութիւնը անանձնական է, իսկ Արուեստը կատարելապէս անձնական : Գիտական արժանաւոր գործի մը մէջ ճշգրիտ ցուացումը միայն կը գտնենք արտաքին աշխարհի, իսկ

Արուեստի մէկ հրաշակերտին մէջ կը գտնենք մանաւանդ զայն արտադրողին սիրտն ու երևակայութիւնը եւ կամ Անձը: Արուեստի բնորոշիչ յատկութիւնն է այս. նոյն ինքն արուեստագէտն է որ կ'արտայայտուի իր գործին մէջ:

Գրականութիւնը արուեստ մըն է, եւ հետեւապէս կոչուած չէ մեքենաբար ընդօրինակել բնութիւնն ու ընկերութիւնը: Այս իմաստով իրապաշտ գրականութիւն մը չկայ ու չկրնար ըլլալ. հոգեբանական անկարելիութիւն մըն է այդ: Գրագէտը ստիպողաբար իր նախագոյ բաղձանքներն, խորհուրդներն ու երևակայութիւնները կը խառնէ զգայարանաց միջոցաւ իրեն ներկայացող իրականութեանց հետ, եւ այսպիսի խառնուրդի մը արդիւնքն է իր ոեւէ մէկ գորութիւնը. ըմբռնելու եւ յիշելու գործողութիւններն իսկ ուրիշ բաներ չեն եթէ ոչ ընտրելու գործողութիւններ: Որովհետեւ ի՞նչ կը նշանակէ այսինչ առարկան ըմբռնել՝ եթէ ոչ մտաց մէջ զատել ընտրել զայն նոյն միջոցին ներս թափանցող ուրիշ բազմաթիւ անհետաքրքրական ու անկարևոր ազդեցութիւններէ, եւ ի՞նչ կը նշանակէ մանաւանդ յիշել՝ եթէ ոչ մտաց մէջ պահպանել արտաքին աշխարհէ ներս թափանցող այն ազդեցութիւնները որոնք ուրիշ անթիւ ազդեցութիւններէ աւելի կը գրաւեն մեր ուշադրութիւնը, եւ կամ ուրիշ բառերով աւելի մեծ շահեկանութիւն մ'ունին մեր սրտին համար:

Իրապաշտութեան անուևով ընկերութեան տգեղ ու յոռի կողմերը պատկերացնող մեր կարգ մը գրողները կը տեսնեն արդեօք իրենց

անձին դատապարտութիւնը հոգեբանական այս անվիճելի ճշմարտութեան մէջ: Կը գրեմ ինչ որ կը տեսնեմ բնութեան եւ ընկերութեան մէջ կ'ըսես, այնպէս չէ՞: Լաւ. բայց գիտե՞ս արդեօք թէ այն բաները միայն կրնաս տեսնել բնութեան եւ ընկերութեան մէջ. որոնց կը նայիս, գիտե՞ս արդեօք թէ այն բաներուն միայն կը նայիս որոնք ուշադրութիւնդ կը գրաւեն, եւ աշխարհի այն իրականութիւնները միայն կրնան ուշադրութիւնդ գրաւել որոնց յարակցութիւն մ'ունիս, որոնց կը համապատասխանեն հոգեկան՝ ձգտումներդ, անձնականութիւնդ կամ նկարագիրդ. ինչ տեսակ մարդ ըլլալէ՞ կախում ունի արտաքին աշխարհի մէջ ինչ տեսակ իրականութիւններ տեսնելդ. ներքին բնութեանդ համակերպ իրողութիւններն են միայն որ կրնան տեւականօրէն շահագրգռել զքեզ ու իրենց վրայ դարձնել ուշադրութեանդ հետ նաև նայուածքդ: Անկարելի է որ բնական կամ ընկերական ու է իրականութիւն արտայայտուի գրականութեան մէջ առանց եղանակաւորուելու գրագէտին հոգեկան վիճակին համաձայն: Հոգեբանութիւնը ոչ միայն բացորոշապէս կը յայտարարէ թէ գուհիկ ու ստորին սիրտ մ'ունի այն անձը որուն գրութեանց տիրող թօնը կը կազմեն մոլութիւնն ու անառակութիւնը, այլ և կը յայտարարէ թէ յիմարներ են այսպիսիք որ իրապաշտ ըլլալու հակասական ոչնչաբանութեամբ ծածկել կը կարծեն բուն իսկ իրենց սրտին մէջ տիրող գարշանքը:

Վերի ըսուածներէն չհետևիր բնաւ թէ կենաց պայծառ կողմերը միայն ներկայացնել կոչուած է գրագէտը: Ոչ երբեք: Ստուեր ալ կը գործա-

ծէ արուեստագէտը իր նկարներուն մէջ, բայց անոնց լուսաւոր մասերը աւելի յստակ ու պայծառ կերպով մը ներկայացնել կարենալու համար միայն: Կատարեալ ու երջանիկ կեանքի մը պատկերը աւելի յստակօրէն ներկայացնել կարենալու համար տխուր իրականութեանց ըստ-ուերներն ալ կրնայ նոյնպէս գործածել գրագէտը: Չարին հետ հակադրուելով աւելի գրաւիչ կը դառնայ Բարին, ինչպէս Գեղեցիկը Տգեղին հետ հակադրուելով ու ձգձարիտը Սուտին հետ: Գրագէտը իրաւունք ունի անշուշտ այսպիսի հակադրութեանց դիմել ցոյց տալու համար Բարին գերակայութիւնը Չարին վրայ, Գեղեցիկին գերակայութիւնը Տգեղին և ձգձարտին գերակայութիւնը Սուտին վրայ, բայց կը չեչտենք ուժգնօրէն, ամբողջ գրութեան տիրող թօնը ու վերջնական արդիւնքը կազմելու են միայն ու միշտ Բարին, Գեղեցիկը ու ձգձարիտը: Ախտաւոր է գրական ամեն արտադրութիւն որ ընթերցողին ուշադրութիւնը չկեղբորոնացներ բնութեան եւ ընկերութեան գեղեցիկ ու ազնիւ իրականութեանց վրայ, որուն պատճառն ու վախճանը չեն կազմեր Բարին, Գեղեցիկն ու ձգձարիտը:

Ախտաւոր հոգիներու ծնունդ են ախտաւոր գրութիւններ, եւ հարկաւորապէս պիտի ախտաւորին անոնց հետ հաղորդակցող բոլոր ուրիշ հոգիներ:

ԳՐԵԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԵՐՉՐԵՑՈՒՄԸ

1

Ժողովուրդի մը գրական ճաշակը ազնուացնելու հական պայմանն է ընտրուած գրքեր միայն պարունակող գրադարան մը հաստատել ամեն դպրոցի մէջ, եւ իմացական կարողութեանց աստիճանական զարգացումներուն համաձայն պատրաստուած ծրագրով մը առաջնորդել իւրաքանչիւր աշակերտ որ յաջորդաբար կարդայ այդ գրքերը:

Իր գլխաւոր նպատակներէն մին գործադրելէ շատ հետի կը գտնուի այն դպրոցը որուն դասընթացքին անհրաժեշտ մէկ մասը չեն կազմեր ընթերցանութեան այսպիսի կանոնաւոր վարժութիւններ: Տեսնենք ինչ կ'ըսէ այս մասին Հարվըրտ Համալսարանի Նախագահը, Տր. Էլիյըթ, որ արժանաւորապէս կրնայ նկատուիլ պետք այն բարեկարգիչներուն որոնք յեղաշրջած են ու կը յեղաշրջեն Ամերիկայի կրթական իտէալներն ու մեթոտներ: Նախագահ Էլիյըթ կ'ըսէ. «Մանկութեան շրջանին մէջ եղած ամբողջ կրթութիւնը շահեկան ու կրթիչ ընթերցանութեան մը ճաշակը արտադրելու է մանկան մէջ, որպէսզի այդ ընթերցումներէն ներշնչուի ու առաջնորդուի անոր յաջորդ տարիներու իմացական կեանքը: Նախնական կրթութեան մը գլխաւոր նպատակը

իրագործած կ'ըլլայ այն դպրոցը որ կը յաջողի առողջ գրականութեան մը ճաշակը հաստատել իր աշակերտաց մէջ, որչափ ալ անկանոն ըլլան բոլոր իր կրթական մեթոտները: Իսկ անյաջող դպրոց մըն է այն որ այսպիսի տեւական ճաշակ մը չհիմնէր աշակերտին մէջ:՝ Այս նոյն անձնաւորութիւնը ուրիշ առթիւ մըն ալ կ'ըսէ. «Մանուկներու կարգացած տափակ իմաստով գրքերուն վերագրելի է այս (Ամերիկեան) ազգին բարոյական յամր յառաջդիմութիւնը:՝

Տարակոյս չունինք թէ համաշխարհային համրաւ մը վայելող այս փորձառու դաստիարակը մեր դպրոցներուն մէջ գրական ընթերցումին բացակայութեանը պիտի վերագրէր զլլխանորաբար ընդհանուր Հայութեան բարոյական կայուն վիճակը, եւ արտասահմանի դաղթական Հայերուն ալ բարոյական յետադիմութիւնը: Տարակոյս չունինք թէ զլլխանորաբար այդ նոյն պատճառին պիտի վերագրէր նաեւ արտասահմանի դաղթականութեանց մէջ հրատարակուող թերթերու մեծ մասին անկեալ վիճակը: Մեր դպրոցներուն մէջ ոչ միայն կարեւորութիւն չտրուիր գրական ընտիր արտադրութեանց հետ աշակերտը հաճոյառիթ հաղորդակցութեան մը դնելու ամենակենսական գործին, այլ մինչեւ իսկ պէտք եղած քաջալերութիւնը չտրուիր այն աշակերտներուն որոնք ինքնաբերաբար կը դրդուին զարգացնել իրենց գրական ճաշակը, որոնք ներքին բնազդային մղմամբ մը կը փնտռեն իրենց իմացական կարողութիւններուն հաճոյք առթող գրքեր ու գրութիւններ: Չոր ու ցամաք դասագրքերէ դուրս պատեհութիւն չեն ունենար աշակերտք

ծանօթանալ գրական ընտիր արտադրութեանց. կը զրկուին անոնք իրենց հետաքրքրութեան սահմանները ընդարձակող, իրենց մտքին բազմակողմանի զարգացումներ պարգեւող եւ իրենց առջեւ ձգտման վսեմագոյն իտէալներ պարզող ընթերցումներէ: Աշակերտի մը ամբողջ կենաց ամենէն թանկագին ժառանգութիւնը յափշտակած կ'ըլլանք երբ զրկենք զանհկա իր ցեղին արտադրած բարձրագոյն գրականութեան հետ հաղորդակցելու և անկէ ներշնչուելու անգին առանձնաշնորհումէն: Իր կոչման բացարձակապէս անարժան է այն դպրոցը որ չյաջողիր ընթերցանութեան տեւական ունակութիւն մը հաստատել իր աշակերտներուն մէջ:

Դպրոցական յարկին ասկ չկրնար աւարտիլ անհատին դաստիարակութիւնը: Ժողովուրդի մը ամենամեծ մասը հազիւ հինգ վեց տարի միայն կրնայ մնալ դպրոցին մէջ, եւ հետեւապէս հազիւ կրնայ ամենէն տարրական կրթութիւն մը լոկ ստացած ըլլալ: Ամերիկայի մէջ իսկ, ուր ձրի բարձրագոյն վարժարաններ բացուած են ամեն կողմ եւ ուր ձրի կը հայթայթուի դպրոցական ամեն պիտոյք: Ամերիկայի մէջ իսկ հասարակութեան հարիւրին մէկ ու կէս մասը միայն բարձրագոյն վարժարան կը մտնէ: Աւելորդ է ըսել թէ մեր մէջ ասկէ շատ աւելի փոքր է բարձրագոյն վարժարան յաճախողներու թիւը, և ապահովաբար կրնանք ըսել թէ այսպէս պիտի մնայ դեռ երկար տարիներ: Բարեբաղդ է այն աշակերտը որ կը յաջողի իր գիւղին կամ քաղաքին նախակրթարանէն գոնէ ընթացաւարտ ըլլալ: Այս իրողութիւններէն կը տեսնուի թէ ժողովրդ-

եան ամենամեծ մասին դաստիարակութիւնը կ'սկսի միայն դպրոցին մէջ: Նախակրթարանին գլխաւոր պաշտօնն է այնպէս մը պատրաստել իր աշակերտները որ դպրոցէն դուրս կարենան անոնք շարունակել սկսուած այդ դաստիարակութիւնը, որ կարենան ինքնազարգացմամբ կատարելագործել իրենց կեանքը: Եւ այսպիսի պատրաստութեան մը անհրաժեշտ պայմանն է առաջնորդել աշակերտը գրականութեան, այսինքն ամեն ծանօթութեանց այդ շտեմարանին, ամեն նեշնչմանց այդ աղբիւրին, և կեանքի ամեն կատարելագործմանց այդ ստեղծիչ ուժին: Այսպիսի պատրաստութեան մը անհրաժեշտ պայմանն է դպրոցին մէջ վարժեցնել աշակերտը բարձրագոյն գրականութեան մը հետ հաղորդակցելու, եւ հաճոյք զգալու այդ հաղորդակցութենէն:

Գրադարան մը գտնուելու է գիւղական ամեն դպրոցի մէկ անկիւնը. ոչ թէ անուանական գրադարան մը, այլ իրական: Նախակրթարանի մը վարչութեան ամենագլխաւոր ջանքն ըլլալու է շարունակական վարժութիւններով զարգացնել աշակերտաց գրական ճաշակը, այնպէս որ դպրոցի ընթացքն աւարտելէն վերջն ալ կարօտը քաշեն անոնք ընտիր գրքերու, միտքն ու սիրտը մշակող գրքերու, այնպէս որ դպրոցի ընթացքը աւարտելէն վերջն ալ ժամանակ գտնեն անոնք ներկայացուցիչ անհատներու ազնուագոյն արտադրութիւնները ուղարկութեամբ եւ. հաճոյքով կարդալու, անոնցմէ ներշնչուելու և առաջնորդուելու, և անոնց ազդեցութեամբը քաշուելու դէպի իտէալական կեանքը: Խղճալի է արդարև

վիճակը այն պատանիին որ գործնական կենաց մէջ կը մտնէ առանց այսպիսի նախապատրաստութեան մը, որ կը մտնէ աշխարհի ապականութիւններուն, խարդախութիւններուն, զեղծումներուն և ամեն տեսակ անիրաւութիւններուն մէջ՝ առանց հաղորդակցիլ կարենալու մաքրութեան, սիրոյ, բարոյական առողջ սկզբանց այն իտէալական աշխարհին հետ որ գրականութեան բարձրագոյն մակարդակներուն վրայ միայն կը պարզուի իր ամբողջ կատարելութեամբը:

2

Ինչո՞ւ բարոյական այսքան անկեալ վիճակ մը կը տիրէ մեր երիտասարդութեան մէջ: Ինչո՞ւ սովորական դարձած են մեր մէջ ստութիւնն ու հայհոյութիւնը, ծաղրանքն ու նախատինքը: Ինչո՞ւ իմաստակութիւնը այնքան խոր արմատներ ձգել սկսած է մեր երիտասարդութեան մէջ իմաստակութիւնը որ կ'արհամարէ ամեն հեղիոնակութիւն և անընդունակ կ'ընէ զմարդ իմացական կամ բարոյական ուէ յառաջդիմութեան: Ինչո՞ւ այնքան քառսային վիճակ մ'ունին մեր հանրային գործնէութիւններ եւ ինչո՞ւ այնքան լեցուն են զեղծումներով: Հազար ու մէկ պատասխաններ կրնան տրուիլ այս հարցմանց:

Ոմանք կրնան պնդել թէ կենաց կանխագոյն շրջաններուն մէջ անհատի՞մը կրած յոռի ազդեցութիւններն են գլխաւոր պատճառները վերը յիշուած չարիքներուն, թէ տգէտ ու աննկարագիր ծնողներու ազդեցութեանը տակ մեծցող զաւակներ, իրենց աչքերուն յառջեւ վեհ ձգտում-

ներէ ու բարոյական յառաջդիմութենէ զուրկ ծնողքներ ունեցող մանկիկներ, իրենց անգիտակից բայց ամենափափուկ հասակնուն մէջ որոշակի անբարոյական խօսքեր արտասանել ու գործեր կատարել սորվող, ստել ու հայհոյել, ուրիշը չաքչրկել ու ծաղրել, ուրիշին իրաւունքը յափշտակել եւ անոր լացերովը ուրախանալ վարժուող անմեղ մանկիկներ հարկաւորապէս անազնիւ նկարագրի մը ցոյց պիտի տան իրենց չափահասութեանը ատեն, քանի որ անհատի մը ամբողջ կենացը մէջ անջինջ կը մնան մանկական ու պատանեկան ձևընկալ շրջաններուն մէջ ստացուած տպաւորութիւններ: Ընտանեկան յոռի ազդեցութիւնն է պատճառը մեր հանրային բարձրուն մէջ տիրող այս ամեն ապականութեանց:

Ուրիշներ կրնան պնդել թէ ընկերական միջավայրն է գլխաւոր պատճառը մասնաւորապէս մեր արտասահմանի երիտասարդութեան անկեալ վիճակին, թէ հայրենի երկրին բոլոր զսպիչ ազդեցութիւններէն զուրկ մնացած, օտար երկրի մը ընկերական ստորնագոյն խաւերուն մէջ ապրիլ ստիպուած, եւ քաղաքակրթութեան ամենէն վայրաքարչ բայց հրապուրիչ ազդեցութիւններով շրջապատուած անփորձ երիտասարդը բնականաբար պիտի այլասեռի, քանի որ իր միջավայրին կը համակերպի ամեն կեանք: Աննպաստ միջավայրն է պատճառը մեր հասարակութեան ունեցած բարոյական լճացեալ վիճակին:

Վերը յայտնուած երկու ճշմարտութիւններն ալ ընդունելով հանդերձ մենք կը պնդենք թէ աշակերտին մէջ գրականութեան տեւական ու

զարգացեալ ճաշակ մը արտադրելու մասին մեր դպրոցներուն ցոյց տուած անտարբերութիւնն է նախնական պատճառը բոլոր այս չարիքներուն: Որովհետեւ յոռի ազդեցութեանց վայրեր չպիտի դառնային մեր ընտանեկան յարկերը եթէ դպրոցին մէջ այսպիսի ճաշակ մը ստացած ըլլային մեր հայրերն ու մանաւանդ մայրեր: Այն ատեն շարունակ պիտի ներշնչուէին անոնք բարձր իտէալներով. լայն տեսութիւններ պիտի կրնային ստանալ մանկական ու պատանեկան կենաց անհուն նշանակութեանը եւ իրենց ծանր պարտականութեանը վրայ. ծնողական գիտակցութիւն մը պիտի կրնային անոնք ժառանգել աստիճանաբար, եւ այդ գիտակցութեամբ լուսաւորուած անձնագոհ սիրոյ առաջնորդութեամբը պիտի կրնային փրկել իրենց հոգեհատոր զաւակներուն ապագան, պիտի կրնային ազնիւ ու անեցուն նկարագրի մը հիմերն հաստատել անոնց Ֆիզիքական ու հոգեկան խիստ ձևընկալ կազմութեանը մէջ: Ընտանիքը բարեկարգելու գործը յաջողութեամբ յառաջ վարելու համար բաւական չէ նախակրթարանի, կամ մինչև իսկ բարձրագոյն վարժարանի ու գօլէճի ընթացաւարտ հայրեր ու մայրեր ունենալ, այլ մանաւանդ իրենց ամբողջ կենացը մէջ կանոնաւորապէս մտաւոր սնունդ հայթայթող դրքեր կարդացող հայրեր ու մայրեր: Անձամբ ծանօթ են մեզի շատ մը գօլէճի ընթացաւարտ Հայ երիտասարդներ որոնք հազուադէպ պարագայից մէջ միայն գիրք կը կարդան, եւ այն ալ անուշադիր կերպով մը ու կիսկատար: Սխալ չպիտի ըլլայ թերեւս ըսել թէ մեր իգական սեռին մէջ բազմատարաբար աւելի է այսպիսի-

ներուն թիւը քան թէ արական սեռին մէջ: Քիչ շատ կրթուած մայրեր կը դադրին ընդհանրապէս միտք մշակող, եւ հետեւապէս աստիճան մը յոգնեցնող գրքեր կամ գրութիւններ կարդալէ երբ մէկ երկու զաւկի հոգատարութիւնը ծանրանայ իրենց վրայ: «Կարդալու ժամանակ չեն կրնար գտնել», ինչպէս սովոր են ըսել, մինչդեռ աւելի ճշմարիտ պիտի ըլլար ըսել. «Կարդալու ճաշակ չունինք»: Ուր որ ճաշակ կայ հոն ժամանակ ալ կայ: Դպրոցը շատ մը տարրական ծանօթութիւններ տուած է անոնց, բայց զլացած է տալ ամենակենսական բանը, այսինքն առողջ գրականութեան մը ճաշակը: Զարմանալու չենք, ուրեմն, երբ դպրոցի սեմերէն ամեն տարի հազարներով դուրս ելնող Հայ աղջիկներ ու պատանիներ քանի մը տարիէն գործնակա՜նապէս մոռնան իրենց աւանդուած զանազան ծանօթութիւնները, երբ ապրին իմացական ու բարոյական յառաջդիմութեան աղբիւրը եղող բարձր իտէալներէ գրեթէ զուրկ կեանք մը, ու երբ կազմեն նոր սերնդին մէջ առողջ ու աճեցուն նկարագիր մը արտադրելու բոլորովին անյարմար ընտանիքներ: Աչակերտին մէջ գրականութեան տեական ու զարգացեալ ճաշակ մը արթնցնելու մասին մեր ցոյց տուած կատարեալ անտարբերութեանը կը վերագրենք զլիաւորաբար Հայ ընտանիքին անյառաջդիմական վիճակը, հետեւապէս նաեւ անկէ ծնունդ առնող ամեն տեսակ անհատական ու ընկերական չարիքներ:

Գլխաւորաբար նոյն պատճառին կը վերագրենք դարձեալ մեր հանրային կեանքին մէջ տիրող քաոսային վիճակը: Ծճմարիտ է թէ մեծ

ազդեցութիւն մ'ունի միջավայրը մարդուս թէ՛ Ֆիզիքական թէ՛ հոգեկան կազմութեանը, եւ հետեւապէս անոր ամբողջ նկարագրին վրայ, սակայն նոյնքան ճշմարիտ է նաեւ թէ իրեն համապատասխան միջավայր մը կը գտնէ կամ կ'ստեղծէ արդէն կազմուած նկարագիրը: Մանկական ու պատանեկան կենաց մէջ՝ ընտանեկան նպաստաւոր միջավայրի մը ազդեցութեամբ՝ կազմակերպուի թող առողջ նկարագիր մը, եւ դպրոցին մէջ ալ թող հաղորդակցութեան դուրս այդ նկարագիրը սնուցիչ գրականութեան մը հետ, եւ ստիպողաբար պիտի աճի անիկա ու կատարելագործուի, ստիպողաբար պիտի փնտռէ ու գտնէ իրեն համապատասխան առողջարար միջավայր մը: Սխալ է փոխուած միջավայրի մը ազդեցութիւնները պատճառ համարիլ մեր գաղթականութեանց մէջ տիրող ապականեալ բարքերուն: Ո՛չ. փոխուող միջավայրը առիթ միայն հայթայթած է մեր բարքերուն մէջ արդէն իսկ գոյութիւն ունեցող ապականութեանց աւելի համարձակ կերպով մը արտայատուելուն: Մեր ընտանեկան ու կրթական յարկերը չեն կրցած առողջ ու զարգացուն նկարագիր մը կազմել մեր մէջ, երբ բոլորովին իրենց ազդեցութիւններուն տակ կը գտնուէինք իբր մանուկ ու պատանի՝ աւելի կակուղ ու ձեւնկալ քան մեղրամոմը: Հոս է ահա մեր անհատական ու ընկերական կեանքին մէջ երեւող ահուելի չարիքներուն բուն պատճառը: Եթէ ընտանիքը լաւ նրկարագրի մը հիմերը հաստատած ըլլար մեր մէջ, ու եթէ դպրոցը վարժեցուցած ըլլար զմեզ կենսական հաղորդակցութիւն մ'ունենալու աչ-

խարհի մեծ հոգիներուն խորհրդոց ու գգացման-
ցը հետ, ստուգապէս պիտի կրնայինք այն ատեն:
Գտնել հոս այս փոխուած միջավայրին մէջ մա-
նաւանդ մեր նկարագրին ճոխացմանն ու ազնը-
ւացմանը նպաստող ընկերական ու գրական ազ-
դեցութեանց անսպառ աղբիւրներ:

3

Վերըյառաջ բերուած իրողութիւններ ցոյց կու-
տան մեզ թէ առողջ ու բազմակողմանի ընթեր-
ցումներու ճաշակն է որ պիտի ըլլայ ռակվիրան
մեր անհատական ու հանրային կենաց աստիճանա-
կան բարեկարգմանը: Ընտիր մատենադարան մը
հաստատուելու է ամեն դպրոցի մէջ, ծաղկոցէն
սկսեալ մինչև երկրորդական վարժարանը: Ընտիր
գրքեր ու գրութիւններ կարդալու տեսական ունա-
կութիւն մը ժառանգելու է ամեն աշակերտ իր
դպրոցէն: Բաւական չէ դպրոցի մը ծախսերը հո-
գալ. հարկ է ԲԱՐԵԿԱՐԳԵՆԸ զայն: Եւ չենք գի-
տեր բարեկարգութիւն մը որ այնքան խոստմնա-
լից ըլլայ որքան գրական կանոնաւոր ընթեր-
ցումներու մուտքը դպրոցին մէջ: Կրթական խըն-
դիրներու մասին հեղինակութիւն ունեցող անձ
մը կը յայտարարէր վերջերս թէ Ամերիկայի կըր-
թական բարեկարգումներուն ամենէն կարևորն է
եղած գրականութեան մուտքը դպրոցին մէջ:
Այս յայտարարութեան նշանակութիւնը հասկնա-
լու համար յիշելու ենք թէ վերջին տասը քսան
տարիներուս Ամերիկայի հասարակաց դպրոցնե-
րուն մէջ տեղի ունեցող բարեկարգումները ուրիշ

ոնէ դարու մէջ տեղի ունեցածներէն անհամե-
մատօրէն մեծ են եղած ու արագ: Չափազանցու-
թիւն չպիտի ըլլայ թերևս ըսել թէ այս ժամա-
նակամիջոցին մէջ քաղաքակիրթ ազգաց կրթա-
կան իտէալներն ու մեթոտներ այնչափ հիմնական
բարեփոխմանց ենթարկուած են, որչափ չէին են-
թարկուած աշխարհի վրայ դպրոցի հաստատումէն
մինչև անցեալ դարը հասնող ամբողջ ժամանա-
կաց մէջ միանգամայն:

Հարկէ աւելցնել այլ ևս թէ մեր ժողովրդային
գրականութեան բարձրացումը Կիմնովին կախում
ունի դպրոցներու մէջ անոր մուտ գտնելէն: Կար-
դալու տեսական ունակութիւն մը հաստատել ջա-
նացէք մեր նոր սերնդեան մէջ, կարելի ամեն
բանաւոր միջոցներով վարժեցուցէք զանիկա կա-
նոնաւորապէս հաղորդակցելու ընտիր մատենագ-
րութեան մը հետ, զարգացուցէք անոր գրական
ճաշակը, ընդունակ ըրէք զանիկա ՀԱՃՈՅՔ զգա-
լու գրական ազնուագոյն արտադրութեանց ըն-
թերցումներէն, և զօրեղագոյն ազդակը ստեղծած
պիտի ըլլաք մեր գրականութեան բարձրացմանն
ու ճոխացմանը: Այսպիսի ճաշակով մ'օժտուած
մեր պատանիներն ու երիտասարդներ պէտքը պի-
տի զգան բարձրագոյն գրականութեան, և այս
պէտքը պիտի կրնայ ստեղծել իրեն գոհացում
տալու կարող գրականութիւն մը, եթէ մինչև
իսկ գոյութիւն չունի այն տակաւին: Եւ ինչ հա-
մեմատութեամբ որ աճի բարձրագոյն գրականու-
թեան մը պահանջը, նոյն համեմատութեամբ պի-
տի նուազի ստորնագոյն գրականութեան պա-
հանջը, որովհետև բարձրագունին հաճոյքը
ստիպողաբար կը մեռցնէ ընթերցողին մէջ

ստորնագունին հաճոյքը, եւ հետեւապէս կը ջնջէ նաեւ անոր պահանջը: Դպրոցին մէջ խնամոտ եւ մեթոտաւոր ընթերցումներու մուտ գըտնելն է, ուրեմն, էական պայմանը մեր տոհմային գրականութեան բարձրացմանն ու ճոխացմանը, ինչպէս նաեւ գրական ստորնագոյն արտադրութեանց աստիճանական նուազմանը:



ԳՐԵԿԵՆՈՒԹԵԱՆ ՊԵՇՏՕՆԸ

1

Անգին ժառանգութիւն մըն է կեանքը: Բիւր սերունդներ մաքառած ու տառնապած են միլիոնաւոր տարիներու ընթացքին մէջ՝ արտադրել կարենալու համար մարմնական այն կազմուածքը, զոր ամեն նորածին մանկիկ կ'ստանայ իր ծնողքէն: Մարդկային միտքը անկարող է ըմբռնել արժանիքը Ֆիզիքական այս կեանքին, զոր անցեալը կտակած է ամենէն խեղճուկ աղքատին իսկ: Անհաշուելի դարերու վաստակալից աշխատութեանց արգասիքն է այն, անցելոյն ամենաթանկագին աւանդը, զոր ապագային պարտինք փոխանցել անեղծ ու անկորուստ:

Բայց հոգեկան կեանք մըն ալ ունեցած է մարդ հազարաւոր տարիներէ ի վեր: Իր սրտին ամենէն ազնիւ տարփանքներովը և կեանքին ամենէն խորին ձգտումներովը պաշտած է անիկա Գեղեցիկը, Ճշմարիտը ու Բարին: Տեսանելիէն դէպի անտեսանելին, և անցաւորէն դէպի յաւիտենականը վերթեւած են միշտ անոր ամենէն վեհ իղձերը: Արդարութեան, սիրոյ ու երջանկութեան ոսկեղնիկ երազներ տեսած է անիկա իր ամենէն թմրած շրջաններուն մէջն իսկ: Անհատական ու ընկերական բարձրագոյն կեանքի մը յափշտակիչ խտէալներովը սողորուած է անիկա, և ջանքեր է կատա-

րած շուտ հասնելու համար իտէալական այդ կեանքին: Բարոյական, գեղեցկագիտական ու կրօնական այս զգացումներն ու խորհուրդները և անոնցմէ արտադրուած գործնէութիւններն են որ մարդուս հոգեկան կեանքը կը կազմեն, այսինքն բուն մարդկային կեանքը: Ի՞նչպէս կը պահպանուի ու սերնդէ սերունդ կը փոխանցուի Ֆիզիքականէն անհունապէս մեծարժէք հոգեկան այս կեանքը: Ի՞նչպէս կը ժառանգենք դարաւոր անցելոյ մը այդ երազները, զմեզ դէպի ապագան քաշող այդ իտէալները, և մեր կենաց ամենէն սուրբ գործնէութիւնները յառաջ բերող Անհունին ու Յաւիտենականին այդ տեսիլքները: Ի՞նչպէս կը ժառանգենք հոգեկան այդ կեանքը, յաւիտենականութեան շափ երկար անցեալի մը բոլոր ջանքերուն վերջնական այդ պտուղը:

Ժառանգականութեամբ չկրնար փոխանցուիլ հոգեկան կեանքը: Մտային կարողութեանց սերմեր ու բնաւորութեանց միտումներ լոկ կուտայ մեզ ժառանգականութիւնը: Հարիւրաւոր սերունդներ Հայերէն կրնան խօսած ըլլալ յաջորդաբար, բայց նոր սերունդը ստիպուած է կրկին սորվիլ զանիկա: Լեզուն ժառանգական յատկութիւն մը է՛ եղած դեռ, ոչ ալ բարոյական, գեղեցկագիտական ու կրօնական կեանքը, այսինքն զմարդ կենդանիէն որոշող հոգեկան կեանքը: Ի՞նչ կարգադրութիւն ըրած է, ուրեմն, բնութիւնը՝ պահպանելու և սերնդէ սերունդ փոխանցելու համար այս բարձրագոյն կեանքը, առանց որուն անյաջողութեան դատապարտուած պիտի ըլլան աշխարհի դարաւոր ձգտումները:

Քաղաքակրթութիւնն է հոգեկան կենաց ա-

ւանդապահը: Արտայայտման անդիմադրելի դժբաղդում մը կը գտնուի ամեն կեանքի մէջ: Հոգեկան կենաց համար ալ անխուսափելի ստիպողականութիւն մըն է արտայայտումը: Համար չկրնար մնալ մարդ. Լեզու տալու է իր ներքին զգացումներուն ու խորհուրդներուն. արուեստներ ստեղծելու է՝ անոնցմով իր հոգեկան անտեսանելի կեանքը մարմնացնել կարենալու համար: Ստեղծագործութիւնը ամենէն հիմնական օրէնքն է մարդկային կենաց, որովհետև անով միայն գոհացում ու երջանկութիւն կրնայ գտնել հոգին, և անով միայն կրնայ կատարելագործուիլ: Այն մարդն է աշխարհի մեծագոյն տառապեալը, որ զրկուած է իր բուն զգացումները արտայայտելու միջոցներէն: Կամայ թէ ակամայ, գիտակցօրէն թէ անգիտակցօրէն, ստեղծագործ էակ մըն է մարդ: Հոգին արտայայտուիլ կը ճգնի դարերէ ի վեր և այսպէս կ'ստեղծուին ու կը կատարելագործուին բոլոր Լեզուներն, արուեստներն ու կազմակերպութիւններ: Քաղաքակրթութիւն կը կոչուի ամբողջութիւնը այս ստեղծագործութեանց:

Լեզուն է ամենէն յստակ, ազդու և տիեզերական արտայայտումը հոգեկան կենաց: Ամեն մարդ կրնայ յայտնել անով իր զգացումներն ու խորհուրդները, և ամենէն աւելի անով կրնայ հասկնալի ըլլալ իր բոլոր ընկեր արարածներուն: Լեզուն է դարձեալ որ կը մեկնէ այն զգացումներն ու խորհուրդները, զորս անցեալը մարմնացուցած է ամբողջ քաղաքակրթութեան, այսինքն գիտական, գեղարուեստական, քաղաքական ու կրօնական բոլոր արտադրութեանց մէջ: Լեզուն

է, ուրեմն, անցելոյն հոգեկան կենաց ամենէն կատարեալ մարմնացումը:

Գրականութեան կը փոխուի լեզուն, երբ ինքնագիտակցութեան աստիճանին հասնի մարդկային միտքը: Ինքնագիտակցութիւն չունեցող ցեղեր ու անհատներ գրականութիւն ալ չեն կրնար արտադրել: Ամեն ազգի մէջ բաղդատարար շատ քիչ են ինքնագիտակից անձերը, և այդ ընտրեալ հոգիներն են որ իրենց պատկանած ազգին գրականութիւնը կ'ստեղծեն: Իրենց կողմէն լոկ չեն խօսիր անոնք, այլ կը խօսին մանաւանդ իրենց ցեղին ու ժամանակին կողմէն. լեզու կուտան անոնք մարդկային անթիւ սրտերու մէջ փոթորկող համր յոյզերուն: Իր ցեղին ներկայացուցիչն է ամեն մեծ հոգի, որովհետև անոր տառապանքներովը կը տանջուի, անոր երազներովը կ'օրօրի եւ անոր խորհուրդներովը կը սնանի, ու երբ ներշնչման գերագոյն պահուն խօսք կուտայ իր անձնականութեան խորերէն բարձրացող զգացումներուն, ցեղին ձայնն է իսկապէս որ կ'արձագանգէ այդ խօսքերուն մէջէն: Յեղիմը հոգեկան բարձրագոյն կենաց մարմնացումներն են իր մեծ գրքերը: Մարդկային բիւր արարածներ կը տառապին, կը յուզուին ու կ'երազեն ամեն վայրկեան, և հանձարը կուգայ խօսք տալու սրտի այդ խուլ և անյօդ ձայներուն: Միլիոնաւոր մարդիկ համր կը մնան, որպէսզի միակ հզօր ձայն մը խօսի իրենց կողմէն:

Գրականութիւնը, ուրեմն, արտադրութիւնն է կենաց: Հարկ է լաւ ըմբռնել այս իրողութիւնը, որպէսզի կարող ըլլանք հասկնալ գրա-

կանութեան պաշտօնին անհուն կարեւորութիւնը: Կենաց արուեստական մէկ զարդը է գրականութիւնը, այլ անոր բողբոջաւորումը՝ այնքան բնական ու կենսական՝ որքան ծաղիկը կամ պտուղը բուսական կենաց համար: Այս է պատճառը որ իրապէս մեծ ազգեր մեծ գրականութիւններ ալ կ'ունենան, եւ այս է պատճառը որ սրտի ու մտքի խանդոտ գործնէութիւններ կ'ստեղծեն նաեւ գրական վերակենցաղութեան շրջաններ: Ժողովուրդի մը նկարագիրն է որ կ'արտայայտուի իր գրականութեան մէջ, այսինքն աղբիւրը իր զգացումներուն ու խորհուրդներուն, այսինքն ստեղծիչը իր պատմութեան ու իր ճակատագրին:

2

Գրականութիւնը, այսպէս, ճշմարտագոյն ու ճոխագոյն յայտնութիւնն է հոգեկան կենաց: Բայց ամեն յայտնութիւն մեկնութիւն մըն է միանգամայն: Մարդկային կենաց ամենէն հաւատարիմ մեկնիչն է գրականութիւնը, որովհետև անոր կատարելագոյն արտադրութիւնն է: Մարդկային կենաց բոլոր երևոյթներուն ետեւ գործող հոգեկան մեծ ուժերն ու ձգտումները երևան բերել և զանոնք մեկնել է գրականութեան պաշտօնը: Տեւական արժանիք չկրնար ունենալ ունէ գիրք որ չը պարունակեր իր մէջ կեանքի այսպիսի բարձրագոյն մեկնութիւններ: Տասնեկիններորդ դարու Իրապաշտ գրականութիւնը փորձեց իր Ֆիզիքական տարրերուն վերածել մարդկային կեանքը. բայց

կարճատես է այն գրականութիւնը որ կենաց ֆիզիքական մակերեսը լոկ կը տեսնէ — կոշտ ու անկապ իրականութիւններ — և չնչմարեր անոնց ետև տարածուող գեղեցկութեան, ճշմարտութեան ու սիրոյ հոգեկան աշխարհը:

Հոգեբանական գրականութիւն մը չէ այն, այլ բնախօսական. վսեմ նպատակներ չտեսներ անիկա կեանքի բոլոր շարժումներուն մէջ, չը նշմարեր փառաւոր վախճանը սրտի ամենախորին ձգտումներուն, ու չկրնար, հետեւապէս, մեկնել անհուն նշանակութիւնը մարդկային կենաց: Գրականութիւն մը որ կ'ուրանայ գոյութիւնը բոլոր այն բաներուն որոնք ամենէն աւելի պաշտելի առարկաներն են՝ դարձած ընդհանուր մարդկութեան ամենաջերմ յուսոյն ու հաւատոյն, գրականութիւն մը որ կը կապտէ բնութիւնն ու մարդկութիւնը իրենց բարձրագոյն իտէալներէն, գրականութիւն մը որ կ'ուրանայ «Բարի Աստուծոյ» մը գոյութիւնը, ինչպէս կը յայտարարէ իրապաշտ դպրոցին պետերէն Զօլա, եւ որ ցնորական երազի մը նման մէկդի կը նետէ հոգեկան կենաց կատարելագործման երկինքը, մահուան դատապարտուած է: Գրականութիւնը, ինչպէս ամեն արուեստ, սրտին արտադրութիւնն է յաւէտ քան թէ իմացականութեան: Գիտութիւնը կրնայ նիւթապաշտ ըլլալ, բայց արուեստը երբեք, որովհետեւ հաւատք, յոյս ու սէր կեանքը կը կազմեն սրտին. եւ հոգեկան իրականութիւններ են ասոնք:

Իրապաշտ մ'ըլլալու է ամեն ճշմարիտ գրա-

գէտ, այսինքն յստակօրէն տեսնելու է իրականութիւնները և հաւատարմաբար պատկերացնելու է զանոնք իր արտադրութեանց մէջ: Եւ ի՞նչ բաներ աւելի իրական են մարդկային կենաց մէջ քան սրտի երազները, յոյսերն ու հաւատքներ, քան կեանքի իտէալները, որոնց ետևէն կը քաշուին մարդկային բոլոր յառաջդիմական գործնէութիւններն ու շարժումներ: Ի՞նչ բաներ աւելի իրական են պատմութեան մէջ քան կատարելագործման այն տենջանքները, որոնց արտադրութիւններն են եղած պատմական բոլոր նշանակալից դէպքեր: Իրապաշտ չէ այն գրագէտը որ կ'անտեսէ մարդկային կենաց մէջ գործող հոգեկան այս իրականութիւնները: Տասնեկիններորդ դարու միակողմանի իրապաշտութեան սկսած է արդէն յաջորդել ճշմարիտ իրապաշտութեան մը յուսալից շրջանը: Տասնեկիններորդ դարու բերած իմացական անհուն հարստութիւնները, մասնաւորապէս բնաշրջման համապարփակ վարդապետութիւնը, որ այնքան լայն տեսութիւններ կ'ընծայէ մեզ բնութեան ու մարդկային կենաց վրայ, որ յաւիտենական նպատակներ կը նշմարէ անիկա երբ բոլոր շարժումներուն մէջ, բնաշրջման վարդապետութիւնը, կ'ըսեմ, պատրաստած է արդէն ճամբան մեծ գրականութեան մը գալստեանը: Արագօրէն կը մօտենայ նոր մեկնիչներու օրը, որոնք ազուեստի մէջ մարմնացնեն պիտի տասնեկիններորդ դարուն յայտնած գիտական նոր տեսութիւնները: Անոնք ալ իրապաշտներ պիտի ըլլան, ինչպէս եղած են անցելոյն բոլոր մեծ գրագէտները, բայց պիտի ըլլան Տանթէի ու Շէքս-

բխորի, Պալզաքի ու Կէօթէի նման իրապաշտներ, այսինքն ամեն բանի մէջ օրէնք ու իտէալ տեսնող, եւ զանոնք մեկնել ջանացողներ:

3

Գրականութիւնը կեանքի արտադրութիւնն ու մեկնութիւնը չէ լոկ, այլ մանաւանդ անոր ապագայ վիճակին մարգարէութիւնը: Ազդուօրէն շեշտել կ'ուզեմ այս կէտը: Իր արժանիքին կէսը, այն ալ փառաւորագոյն կէսը կորսնցուցած պիտի ըլլար գրականութիւնը, եթէ ապագայ կատարելագոյն կեանքի մը մարգարէութիւնները չպարունակէր իր մէջ: Առանց մարգարէութեան այս կենսական տարրին անկարող պիտի ըլլար գրականութիւնը իր ամենավսեմ պաշտօնը կատարելու: Բայց կենաց ամեն ճշմարիտ մեկնութիւն մարգարէութիւն մըն է միանգամայն: Եթէ անձի մը ներկայ տենջանքներուն եւ ձգտումներուն մէջ կը ծածկուի ապագայ մարդը, եթէ ներկային իտէալներուն մէջ կը ննջեն ապագային իրականութիւնները, անտարակոյս ընդհանուր մարդկութեան ապագայ կենաց առաքեալներն են աշխարհի մեծ հոգիները, անտարակոյս հեռաւոր ապագայի մը մարգարէութիւններն են անոնք, ինչպէս գարնան նախընծայ ծաղիկները հողին մէջ ննջող սերմերուն: Գրականութիւնը մարմնացումն է մարդկութեան այս ներկայացուցիչ հոգիներուն ունեցած ամենաբարձր զգացմանց ու խորհրդոց, հետեւապէս իր մէջ կ'ամփոփէ ապագայ կենաց ամենակատարեալ մարգարէութիւնները:

Անիրագործելի ցնորքներ պիտի ըլլային ապա-

գայ կատարելագոյն կեանքի մը բոլոր այս մարգարէութիւններ, եթէ իտէալներէ գրաւուող սիրտ մը չունենար մարդկութիւնը: Բայց յիշած ենք արդէն թէ քարշողական գիտակից ուժերու միջոցաւ կը կատարուի հոգեկան կենաց կատարելագործումը, ոչ թէ մղիչ անգիտակից ուժերու: Բնագղբ չէ որ յառաջ կը մղէ մարդկութիւնը քաղաքակրթութեան մէջ, այլ իտէալը: Եւ այս իրականութեան մէջն է որ կը կայանայ գրականութեան ամբողջ արժանիքն ու նշանակութիւնը, որովհետեւ կեանքի բարձրագոյն իտէալներ կը ներկայացնէ անիկա մարդկութեան, ու անոնցմով կրնայ գրաւել մարդոց սրտերը, կրնայ ներշնչել անոնց կեանքերը, կրնայ եռանդուն ձգտումներ ու գործնէութիւններ ստեղծել անոնց մէջ, և այսպէս կրնայ իրագործել աստիճանաբար իր ըրած մարգարէութիւնները: Ուրեմն, ապագայ բարձրագոյն կեանքի մը մարգարէութիւնը լոկ չէ գրականութիւնը, այլ մանաւանդ զանիկա իրագործող ուժը:

Մարդուս հետ կը ծնին իր բնագղները. անհատական ջանքեր պէտք չեն բնաւ զանոնք ժառանգելու համար. ինքնաբերաբար կը բղխին անոնք մարդկային բնութենէն ու գործնէութեան կը դրդեն անհատը: Այսպէս չեն, սակայն, իտէալները. ինքնաբերաբար չեն բղխիր անոնք մեր բնութեան մէջ, ամեն անհատ մասնաւոր ջանքեր ընելու է զանոնք ժառանգելու համար: Ամեն անհատի մեծագոյն պարտականութիւնն է հաղորդակցութեան դնել ինքզինքը ու հանրութիւնը աչ-

խարհի ամենէն առողջ խորհուրդներուն և ազնիւ
զգացումներուն հետ, որովհետեւ անոնցմով է
որ պիտի ստեղծուին կատարեալ ու երջանիկ
կեանքի մը հասնելու համար եղած բոլոր
գործնէութիւններ, եւ ասոնցմով է որ կարելի
պիտի ըլլայ ժառանգել հոգեկան բարձրագոյն
կեանքը:



ՆՈՒ ԿԵՆՆԻՐԸ

1

Գործարանաւոր կը կոչուին բոլոր բոյսերն ու
կենդանիներ, որովհետեւ զանազան գործարան-
ներ ունին անոնք. — արմատ ու տերեւ, սիրտ ու
ստամոքս, աչք ու ականջ և այլն: Հրպրդ
Սբէնսը կը սահմանէ կեանքը իբր գործարանա-
ւորին ունեցած հաղորդակցութիւնը իր միջավայ-
րին հետ:

Ամեն գործարանաւոր մարմին կենսական
հաղորդակցութիւն մ'ունի միշտ իր միջավայրին
հետ: Մարդս, զոր օրինակ, կը հաղորդակցի
օդին ու ջուրին, լուսոյ ու ջերմութեան, բոյսին
ու կենդանիին, ձայնի ու գոյնի, եւ բնութեան
ուրիշ անթիւ ազդեցութեանց հետ: Ներքին եւ
արտաքին զանազան գործարաններու շնորհիւ
կը կատարուի այս հաղորդակցութիւնը: Թոքերը՝
օդի, ականջը՝ ձայնի, աչքը՝ լոյսի եւ մարսողա-
կան գործարանները սնունդի հետ հաղորդակցե-
լու յարմար կազմուածք մ'ունին: Հաղորդակ-
ցութեան շարունակում կը նշանակէ կեանք, իսկ
հաղորդակցութեան խզում կը նշանակէ մահ:

Միջավայրէն կ'ստանայ ամեն գործարանաւոր
իր կազմութեան բոլոր նիւթերն եւ ոյժեր: Ապ-
րիլ կը նշանակէ շարժիլ ու գործել, եւ շարժիլ
ու գործել կը նշանակէ սպառիլ: Նիւթական
մասնիկներու եւ ֆիզիքական ուժերու հոսանք

մը դուրս կ'ելնէ իմ մարմինէս ամեն անգամ որ կը շարժեմ ոտքերս կամ ձեռքերս, ամեն անգամ որ կը խօսիմ կամ կը ժպտիմ, ամեն անգամ որ յուզումով մը կը թրթռան ջիղերս եւ կամ խորհրդով մը կ'ալեծփին ուղեղային բջիջներս: Բուն իսկ մարմինս է որ կը մաշի կը քայքայուի, կեանքս է որ կ'սպառի կը նուազի Ֆիզիքական ամենադոյզն գործնէութեան մը ատեն: Միջավայրի հետ ունեցած շարունակական հաղորդակցութիւններու շնորհիւն է որ կը նորոգուի մարմինս և կ'աւելնան կեանքիս ուժերը: Ստեղծագործ էակ մը չեմ ես: դուրսէն կ'առնեմ իմ գոյութեանս բոլոր նիւթերն եւ ուժեր: Իմ ունեցած զանազան գործարաններուս միջոցաւ փոխ կ'առնեմ բնութենէն ամեն ինչ որ անհրաժեշտ է ինձ,—իմ ամբողջ մարմինս ու կեանքի ուժերս,—կը գործածեմ զանոնք, առժամապէս ու դարձեալ կը յանձնեմ բնութեան: Միջավայրիս հետ ունեցած հաղորդակցութիւններու շնորհիւն է որ կ'ապրիմ, կը շարժիմ ու կամ: Այսպէս է ամեն գործարանաւոր մարմին:

Տարբեր գործարանաւոր մարմիններ տարբեր աստիճանաւ կը հաղորդակցին միջավայրի հետ: որչափ բազմաթիւ ու կատարելագործուած որ ըլլան բոյսի մը կամ կենդանիի մը գործարանները այնչափ աւելի ընդարձակ միջավայրի մը հետ կրնան հաղորդակցիլ անոնք: Եւ քանի որ հաղորդակցութիւն ունենալ կը նշանակէ ապրիլ, ուրեմն գործարանաւոր մը որչափ բազմատեսակ ու բազմաթիւ գոյութեանց կամ ազդեցութեանց հետ որ կարող ըլլայ հաղորդակցիլ այնչափ աւելի ընդունակ կ'ըլլայ ճոխ կեանքով մը

ապրելու: Հովտին մէջ բարձրացող ծառը իր արմատներուն բոլորտիքը տարածուող հողին, իր ճիւղերը շրջապատող օդին եւ իր տերեւներուն վրայ հանգչող ճառագայթին հետ միայն կրնայ հաղորդակցիլ: Լուսասփիւռ մթնոլորտի մը մէջ երգող թռչնոյն դայլայլը, դաշտավայրին վրայ նկարուող գեղեցկութեան մշտափոփոխ պատկերները եւ կամ ծաղկանց կուրծքէն բարձրացող անոյշ բուրումները գոյութիւն չունին անոր համար: որովհետեւ անոնց ներկայութիւնը զգալու, անոնց հետ հաղորդակցելու եւ այս հաղորդակցութեամբ անոնցմէ հաճոյք ու կեանք քաղելու համար էական գործարաններէն զուրկ է այն:

Մտէն աւելի ճոխ կեանք մ'ունի անոր տերեւներուն վրայ թառող թռչնիկը: Գոյն ու ձև, ձայն ու բոյր իրականութիւններ են թռչնոյն համար: Զգայարաններ ունի թռչնիկը արտաքին այդ իրականութեանց հետ հաղորդակցելու, անոնցմէ ազդեցութիւններ ընդունելու, եւ այդ ազդեցութեանց համեմատ կեանքի գործնէութիւններ արտադրելու: Կեանքի բիւր աստիճանաւորումներ կան այսպէս գործարանաւորաց աշխարհին մէջ, մանրադիտակային միաբջիջ բոյսէն սկսեալ մինչեւ երկնաբերձ կաղնին եւ ամիպէն սկսեալ մինչեւ մարդը:

Մարդն է Ֆիզիքական ամենաճոխ կեանք ունեցող արարածը երկրագնդիս վրայ, որովհետեւ ամենէն բարդ յօրինուածութիւնն ունեցող գործարանաւորն է այն՝ ընդունակ հաղորդակցելու Ֆիզիքական ամենաճոխ միջավայրին հետ: Մարդէն աւելի ճոխ կեանք ունեցող ոչ մէկ արարած

երևցած է աշխարհիս վրայ անցելոյն մէջ և ոչ մէկ արարած պիտի երեւնայ ապագային: Մարդն է կենաց հսկայ ծառին բարձրագոյն կատարը: Մարդկային մարմինն է Փիղիքական կատարելութեան այն վախճանը առ որ յառաջացած է Բընութիւնը անհաշուելի դարերու աշխատութիւններով:

2

Իր Փիղիքական կազմուածքովը, սակայն, լոկ կենդանի մըն է մարդ, ամենէն անելի կատարելագործուած կենդանին: Հողին տակ սողոսկող որդին մարմինը կազմող նիւթերն են որ կը կազմեն նաև մարդուս մարմինը, և անոր կեանքի գործնէութիւններն յառաջ բերող բնական ուժերն են որ կ'արտադրեն մարդուս Փիղիքական կենաց բոլոր գործնէութիւններ: Իր Փիղիքական կազմութեամբը լոկ՝ այնչափ չտարբերիր մարդ իրմէ ետքը եկող կենդանիէն, որչափ այս վերջինը կը տարբերի իր յաջորդէն:

Բայց աշխարհի թատերաբեմին վրայ մարդուն երեւնալովը նոր ու փառաւոր էջ մը բացուեցաւ գործարանաւորաց պատմութեանը մէջ, ձգտման վնեմագոյն իտէալ մը շողաց բնութեան առջեւ: Մարդուն երեւնալովը նոր կեանք մը սկսաւ աշխարհի մէջ. — Հոգեկան կեանքը, Բանական կեանքը՝ Փիղիքական կեանքը՝ Հոգեկան բանաւոր կենաց հետ միացնող օղակն է մարդէակը, կատարումը՝ անցեալ մարգարէութեան մը և յայտնումը՝ անպագայ մի վնեմագոյն մարգարէութեան: Հոգեկան կեանքն ալ իր բիւր աստիճանաւո-

րումները ունի մարդկային սեռին մէջ: Հոգեկան շատ սահմանափակ միջավայրի մը մէջ կ'ապրի վայրենին, և հետեւապէս զուրկ է ճոխ կեանքէ մը: Մարդկային ընկերութիւնը իր դարաւոր գործնէութեանց միջոցաւ ստեղծած ու ճոխացուցած է մարդուս հոգեկան միջավայրը, որ «Բաղաքակրթութիւն» կը կոչուի ընդհանուր բառով: Ընտանեկան, կրթական, կրօնական ու քաղաքական բոլոր հաստատութեանց վերջնական նպատակն է աստիճանաբար հաղորդակցութեան դնել անհատը՝ ընկերութեան դարաւոր վաստակներովը ստեղծուած այս միջավայրին հետ, պատրաստել անհատը տիրանալու այն ամենաթանկագին ժառանգութեանց զոր անցեալը կտակած է ներկային, եւ այսպէս առաջնորդել զայն ճոխագոյն կեանքի մը: Բաղաքակրթութեան արտադրութեանց հետ հաղորդակցելով եւ անոր արտադրած գործնէութիւններուն մասնակցելով է միայն որ պիտի կրնայ մարդ ժառանգել Հոգեկան ճոխ կեանքը, ճշմարտապէս մարդկային կեանքը: Այսպիսի կենսական հաղորդակցութեամբ մըն է միայն որ աստիճանաբար պիտի ճանչնայ մարդ ու սիրէ Բարին, Գեղեցիկը ու Ճշմարիտը, որ աստիճանաբար պիտի մարմնացնէ իր կենացը մէջ իրաւունքի ու արդարութեան սկզբունքները, պիտի տողորուի սիրոյ ու համակրութեան վեհ ներշնչումներովը, եւ քաղաքակրթութեան հետ հաստատուած այսպիսի կենսական հաղորդակցութեան մըն է որ պիտի ժառանգէ իր նկարագրին բարոյական բոլոր ոյժերը, իր բոլոր լաւագոյն ունակութիւնները, իր բոլոր ազնիւ ձգտումները, կատարելագործման իր բոլոր իղձերն ու ջանքեր, իր հոգեկան ճշմարիտ

ու լեցուն եւ մեծ կեանքը: Ով որ զուրկ է այս տեսակ հաղորդակցութենէ մը՝ բառին իսկական նշանակութեամբ մարդ չէ այն, այլ մարդ-անասունն է լոկ որ ուտել ու խմել, շնչել ու տեսնել միայն գիտէ:

Ի՞նչ են քաղաքակրթութեան այն գլխաւոր բաղկացուցիչները որոնց հետ հաղորդակցելով միայն պիտի կրնանք ժառանգել մեր մարդկայնութիւնը, ինչպիսի՞ հաղորդակցութիւններ հաստատելու ենք իմացական ու բարոյական կեանքի մը ճոխութիւններուն յառաջանալու համար:

3

Առաջին. Հաղորդակցութիւն ունենալու է մարդ իր գիտական միջավայրին հետ:

Աշխարհի մեծ մտքերը դարերէ իվեր խուզարկած են տիեզերքը: Հեռագիտակային թեւորով սաւառնած են անոնք միջոցի անհունութեան մէջ ու երևան բերած բոցեղէն հսկայ աշխարհներ, միլիոնաւոր շարժումներ ու թաւալումներ, յաւիտենականութեան չափ երկար ժամանակներ, եւ անսահման ովկիանոս մը եթերի՝ որուն մէջ կը լողան աստեղային բիւր դրութիւններ: Անոնք խուզարկած են երկրիս ապառաժեայ խաւերը ու գտած անոնց մէջ պահուած հնամի պատմութիւնը երկրիս, պատմութիւնը անոր անցեալ յեղաշրջումներուն, և պատմութիւնը կեանքի այն երկար թափօրին որ քալած է՝ անոր մակերեսին վրայ: Բուսական ու կենդանական աշխարհին մէջ դիտած են անոնք կեանքի փառա-

լից վերելքը, որուն կատարին վրայ կը կենայ մարդ՝ աստուածային ճառագայթներով պսակուած, ինչպէս Ալպեաններու երկնաբերձ կատարները կը թագազարդուին արեւուն ճառագայթներովը: Անոնք ուսումնասիրած են ընկերական բարդ շարժումներն ու երևոյթներ, և մատնանիչ ըրած զանոնք կառավարող ընդհանուր օրէնքներ: Գիտական այս շատ ընդարձակ միջավայրին հետ ընդհանուր հաղորդակցութիւն մ'ունենալու է մարդ՝ կենաց նշանակութիւնը հասկնալու, բնութեան եւ մարդկութեան վրայ լայն տեսութիւններ կազմելու, իմացական բարձրագոյն հաճոյքներ վայելելու եւ բարձրագոյն կեանք մը ժառանգել կարենալու համար:

Երկրորդ. Հաղորդակցութիւն ունենալու է մարդ իր գրական միջավայրին հետ:

Մարդկային հոգւոյն պատկերացումն է գրականութիւնը. անոր մէջ կը մարմնանայ ժողովրդի մը ոգին, անոր մէջ յարութիւն կ'առնէ ու կ'ապրի մարդկութեան անցեալը իր բոլոր սխրալի յիշատակներով, անոր մէջ կ'ամբարուին գիտական բոլոր ճշմարտութիւններ, գեղարուեստի արթնցուցած բոլոր փափուկ զգացումներ, կրօնական ամենավեհ ներշնչումներ եւ ընկերական կենաց բազմատեսակ արտադրութիւններ: Մէկը որ հաղորդակցութիւն չունի իր գրական միջավայրին հետ, որ չլսեր արձագանգները անցեալ ու ներկայ մեծ մարչոց ամենէն խորհրդաւոր ձայներուն, այնպիսին զրկուած է կեանքի աղնուագոյն հաճոյքներէն, զրկուած գեղեցիկ ու ճոխ կեանքի մը առաջնորդող ամենէն ներշնչող ազդեցութիւններէն:

Երրորդ. Հաղորդակցութիւն ունենալու է մարդ իր գեղեցկագիտական միջավայրին հետ: Բարեկիրթ անունը չենք կրնար տալ այսօր ունէ անձի որ զուրկ է գեղեցկագիտական ճաշակէ, որ անհուն տարփանք մը չգգար դէպի գեղեցիկը, եւ որ չպատկառիր վսեմին առջեւ: Հոգեբանական փաստերու վրայ հիմնուած կրնանք ըսել թէ պակաս բան մը կայ այդ անձին հոգեկան կազմութեանը մէջ: Բնութիւնն ու արուեստ իրարու հետ կը մրցին կարծես գեղեցկագիտական ճոխ միջավայր մը ստեղծելու համար, ուր մարդկային հոգին կարենայ երազել, յափշտակուիլ ու պաշտել, ուր մարդկային սիրտը գոնէ առժամապէս կարենայ մաքրուիլ իր գոեհիկ յոյգերէն ու կիրքերէն, եւ ճաշակել անճառելի քաղցրութիւնները գեղեցիկ կեանքի մը: Վճիտ երկնքի մը կապոյտին մէջէն ադամանդէ շողեր ցանող լուսնակը, վտակի մը արծաթկուրծքին վրայ հակող երփներանգ ծաղիկը, վարդ այտի մը վերեւ գետեղուած զոյգ մը կուսական աչեր՝ պատուհաններ երջանկութեան երկինքներու, եւ կամ սպիտակափառ ալեօք շրջանակուած դէմք մը ծերունի ուր կ'արտափայլին առաքինութիւնն ու սէր, ասոնց ամենն ալ մասերը կը կազմեն բնութեան ստեղծած գեղեցկագիտական միջավայրին: Եւ այս բնական միջավայրին հետ հաղորդակցելով է որ կրցած է մարդկային սեռը աստիճանաբար ստեղծել գեղեցկագիտական ուրիշ արուեստական միջավայր մըն ալ, այսինքն գեղարուեստը: Մէկը որ չհաղորդակցիր աշխարհի ամենէն զգայուն հոգիներուն տեսիլքներն ու երազներ, սէրերն ու

տառապանքներ իրենց մէջը թրթռացնող գեղարուեստական մեծ արտադրութիւններուն հետ, մէկը որուն համար գոյութիւն չունի գեղեցկագիտական այն դիւթիչ աշխարհը որ կը ծածկուի տաղի մը կամ նուագի մը, քանդակի մը կամ նկարի մը նիւթեղէն վարագուրին տակ, մէկը որուն սրտին մէջ արձագանգ չեն գտներ այս փափկագոյն ձայները մարդկային հոգւոյն, չկրնար հասկնալ թէ ինչ կը նշանակէ ապրիլ եւ ինչ կը նշանակէ երջանիկ ըլլալ:

Չորրորդ. Հաղորդակցութիւն ունենալու է մարդ իր ընկերական միջավայրին հետ:

Ընկերութեան մէջ միայն կրնան ծնիլ ու աճիլ մարդուս բարձրագոյն զգացումներն ու իմացական կարողութիւններ: Եթէ ընկերական արարած մը չըլլար մարդ, իր Փիզիքական տկարութեանը պատճառաւ եթէ չստիպուէր խմբով ապրելու՝ զուրկ պիտի մնար կատարելապէս բոլոր այն ազնուագոյն զգացումներէն որոնք մարդը կենդանիէն կը զանազանեն, եւ զուրկ պիտի մընար նաեւ այս զգացումները արտայայտելու համար ստեղծուած լեզուէն: Ատելութիւնն ու նախանձ, սէր ու համակրութիւն, արդարութեան եւ իրաւունքի գիտակցութիւն, եւ մարդուս հոգեկան կեանքը կազմող սրտի ու մտքի բոլոր ընդունակութիւններն ու գործնէութիւններ արդիւնք են ընկերական դարաւոր կենաց: Անցելոյն կտակած այդ թանկագին ժառանգութիւնները ձեռք բերելու համար անհրաժեշտ է որ հաղորդակցութիւն ունենայ անհատը ընկերութեան հետ, ապրի ու գործէ անոր մէջ, մաս-

նակցի անոր գործնէութիւններուն: Ընտանիքը, դպրոցը, եկեղեցին ու կառավարութիւնը գլխաւոր կազմակերպութիւններն են, որոնց մէջ միայն կրնայ պահպանուիլ ընկերական կեանքը, եւ շարժիլ ու յառաջանալ, ինչպէս բուսական կեանքը՝ ծառին Ֆիզիքական կազմութեանը մէջ: Ընկերական կենաց դարաւոր աշխատութեանց արգասիքներն են այս պատկառելի հաստատութիւններ, աւելի թանկագին քան գրականութիւնը, քան գեղարուեստը կամ գիտութիւնը: Որովհետեւ ոչ միայն անցելոյն խորհուրդներն ու իտէալներ կը մարմնացնեն այս հաստատութիւնք իրենց մէջ, այլ անոր գործնէութիւնները: Ամենէն աւելի այս հաստատութիւններուն մէջ ամբարուած է անցեալ ամբողջ մարդկութեան կեանքը: Մէկը որ պատկառանք մը չզգար մարդկային կենաց այս գլուխ գործոցներուն առջև, որ չըմբռներ անոնց անհուն նշանակութիւնը, անոնց անգնահատելի արժանիքը, եւ որ այս տեսակ պատկառոտ ըմբռնումով մը հաղորդակցութեան չմտներ անոնց հետ, անարժան է մարդ անուան: Ընկերութիւնն է որ ճոխագոյն կեանքը կրնայ տալ մարդուս, եւ այդ կեանքին տիրանալու միակ պայմանն է հաղորդակցիլ ընկերութեան հետ եւ մասնակցիլ անոր գործնէութիւններուն, այսինքն ոչ միայն կրաւորաբար ընդունել անոր ազդեցութիւնները, այլ նաեւ հակազդել անոնց, ոչ միայն ծառայութիւն ընդունիլ ուրիշներէն, այլ մանաւանդ ծառայել ուրիշներուն: Ընկերութեան մէջ մտնելու է մարդ — ընտանիքին մէջ, եկեղեցիին մէջ, զանազան կազմակեր-

պութիւններու մէջ — բաժին մ'ունենալու է անոնց գործնէութիւններուն մէջ, բան մը դնելու է անոնց մէջ իր զգացումներէն, իր խորհուրդներէն և իր ձեռքի ճարտարութիւններէն, որպէսզի ժառանգէ ճոխ կեանքը, ճշմարիտ կեանքը, կատարեալ կեանքը:

4

Երեք վայրեր կան աշխարհի վրայ տմենէն աւելի պաշտելի մեզ համար. — Զիթենեաց Լեռը, Աթէնքի Ակրոպոլիսը, եւ Հռովմի Բլրակը. Ամենէն յափշտակիչ տեսարանները կ'ընծայեն այս բարձրութիւններ խորհող անձի մը առջև: Անոնց վրայէն կը տեսնէ մարդ երեք երկիրներ որոնցմէ հոսող ազդեցութեանց արդիւնքն է մեր ներկայ փառապանծ քաղաքակրթութիւնը: Պաղեստին, Յունաստան եւ Հռովմ պատմական ամենամեծ նշանակութիւն ունեցող երկիրներ են: Առաջինը խորհրդանշանն է կրօնի, երկրորդը՝ Գեղարուեստի եւ Գիտութեան, իսկ երրորդը՝ Օրէնքի: Այս երեք հիմերուն վրայ հաստատուած է արեւմտեան քաղաքակրթութիւնը: Եւ քաղաքակրթութիւնը ամբողջութիւնն է մեր գիտական, գրական, գեղեցկագիտական, կրօնական ու ընկերական միջավայրերուն: Ճոխ կեանք ունենալ կը նշանակէ հաղորդակցիլ զմեզ շրջապատող հոգեկան այս մեծ աշխարհին հետ:

ԿԵՆՇՅ ՆՈՒՆՅՈՒՄԸ

1

Տարուին, որ իր պատանեկութեան ու երիտասարդութեան օրերուն մեծ հաճոյք կ'զգար բանաստեղծութիւններ կարդալէ, պատկերներ դիտելէ ու երաժշտութեան ունկերելէ, հետեւեալ սրտայոյզ տողերով կ'արտայատէ հոգեկան այն փոփոխութիւնը զոր կրեց ինք՝ տարամերժօրէն գիտութեան նուիրուած երկար տարիներու ընթացքին մէջ. «Այժմ երկար տարիներէ ի վեր չեմ կրնար տող մը բանաստեղծութիւն կարդալու հանդուրժել. վերջերս փորձեցի Շէյքսպիրը կարդալ եւ անհանդուրժելիօրէն տաղակալի դժտայ զայն: Գրեթէ կորսնցուցած եմ նաեւ երաժշտութեան ու պատկերներու մասին ունեցած ճաշակներս: Տեսակ մը մեքենայի կարծես փոխուած է միտքս իրողութեանց մեծ հաւաքածոներէ ընդհանուր օրէնքներ աղալու...: Եթէ արուէր ինձ կրկին ապրիլ կեանքս, կանոն պիտի ընէի շաբաթը զոնէ անգամ մը քիչ մը բանաստեղծութիւն կարդալ եւ քիչ մը երաժշտութեան ունկերել, որովհետեւ ուղեղիս մեռած մասերը կենդանի պիտի մնային թերեւս գործածութեան միջոցաւ: Այս ճաշակներուն կորուստը երջանկութեան կորուստ է, եւ հաւանօրէն

125

Ֆլասարեր ազդեցութիւն մ'ունի իմացականութեան վրայ, եւ ալ աւելի բարոյական նկարագրի վրայ՝ տկարացնելով մեր բնութեան զգայական մասը:»

Բացառութիւն մը չկազմեր Տարուին իր այս հոգետանջ փորձառութեանը մէջ: Որչափ վաճառականներ, մեքենագէտներ, փաստաբաններ, քաղաքագէտներ, գործաւորներ, ռեւէ արհեստի կամ մասնագիտութեան նուիրուած անձեր կան, որոնք կորսնցուցած են այլեւս ամեն շահեկանութիւն իրենց զբաղման նեղ շրջանակներէն դուրս գտնուող իրականութեանց մասին: Գարուններ կուգան ու կ'երթան եւ Բնութիւնը կրկին ու կրկին կը զարդարուի իր գունագեղ աեսարաններովը, գեղարուեստական նոր նոր հրաշակերտներ կ'ստեղծագործուին, խորհրդոյ նոր հորիզոններ կը բացուին մարդկային մտաց առջեւ, ընկերական նշանակալից շարժումներ ծնունդ կ'առնեն, հիմնական փոփոխութիւններ տեղի կ'ունենան իմաստասիրական ու կրթական տեսութեանց մէջ, բայց չեն շահագրգռուիր ու չեն կրնար շահագրգռուիլ ասոնք իրենց զբաղման հետ անմիջական կապակցութիւն չունեցող բոլոր այդ իրականութիւններով: Երկար տարիներ անգործութեան դատապարտած են այսպիսիք իրենց հոգւոյն շատ մը ազնիւ դրուումներն եւ ամենաթանկագին կարողութիւններ, որով մեքենացուցած են զանոնք իրենց մէջ: Պաշտօնասենեակը կամ արուեստանոցն է կարծես իրենց ամբողջ աշխարհը, եւ հաշիւներ ընել, ոսկի դիզել, մեքենաներ շինել կամ գործածել՝ իրենց կեանքը:

Անընդունակ դարձած են այսպիսիք այլևս բազմակողմանի հաղորդակցութիւն մ'ունենալու իրենց բնական եւ ընկերական միջավայրերուն հետ, եւ հետեւապէս, նաեւ ճոխ կեանքով մը ապրելու: Բնութեան անողոքելի օրէնքով դատապարտուած են այսպիսիք շատ նեղ ու միակողմանի կեանք մը վարել, ինչպէս կոյր մնալու դատապարտուած են մութ քարանձաւներու մէջ փակուելով՝ լուսոյ հետ հաղորդակցութիւն ունենալէ երկար ատեն դադրած ձուկերը:

2

Պատանեկութեան ատեն դէպի ճոխ կեանքը յառաջանալու բուն բաղձանք մը կը գտնուի մարդու սրտին մէջ: Այդ խորհրդաւոր շրջանին, երբ բնագրի մարդարէական ձայները կը բարձրանան մեր հոգւոյն խորերէն, խանդավառ սիրով մը կը դիմենք բանաստեղծութեան, երաժշտութեան եւ ամեն բանի որ գոհացում կրնայ տալ մեր սրտի բազմապիսի պէտքերէն ոեւէ մէկուն: Փափաքներու եւ ակնկալութեանց այդ բեղմնաւոր շրջանին մէջ հաղարումէկ առաջադրութիւններ կ'ընենք ապագային իրագործելու մտադրութեամբ: Կ'առաջադրենք բանաստեղծութիւնը վայելել մեր ամբողջ կենացը մէջ, աւելի եւ աւելի գնահատումով ունկնդրել երաժշտական ընտիր կտորներու, դարգացնել մեր մէջ գեղեցկին ճաշակը եւ ազնուագոյն հաճոյից ընդունակութիւնը, հաղորդակցիլ կրթական, կըրօնական, գիտական ու իմաստասիրական խոր-

հուրդներու հետ, մասնակցիլ ընկերութեան բարեկարգմանն ու երջանկացմանը համար եղած ձեռնարկներուն եւայլն: Բայց որչափ քիչերու չափահասութեանը մէջ միայն իրագործուած են պատանեկան այս բանաւոր ակնկալութիւնները: Եւ պատճառը խիստ պարզ է: Պատանեկան շրջանին մէջ ծնունդ առնող բոլոր այսպիսի բաղձանքներ ու ճաշակներ յարմար սնունդ կը պահանջեն աճելու եւ զօրանալու համար, հակառակ պարագային սասիճանաբար կը տկարանան անոնք ու վերջապէս կը մեռնին: Կեանքի այս անխախտ օրէնքին դէմ է ահա որ կը մեղանչեն մեզմէ շատեր: Բոլորովին կը թաղուինք մեր առօրեայ գործառնութեանց մէջ ու կանոնաւոր ժամանակ չե՛ք յատկացնել սրտի այդ ազնուագոյն բաղձանքներուն գոհացման համար: Պիտի կարդամ, կ'ըսենք, բանաստեղծական գեղեցիկ կտորներ, պիտի վայելեմ երաժշտութիւնը, պիտի հաղորդակցիմ ժամանակիս ամենէն առողջ խորհուրդներուն հետ, կենդանի պիտի պահեմ հոգեկան ընութեանս բարձրագոյն մասերը, պիտի մասնակցիմ ընկերական բարենպաստակ գործնէութիւններու, պիտի իրագործեմ բոլոր այս խտէլներս. բայց չենք սկսիր ԱՅՍՕՐ: Մեր ամբողջ ժամանակը եւ ուշադրութիւնը կը կեդրոնացնենք մեր ընտրած մասնագիտութիւնը կամ արհեստը կատարելագործելու եւ դրամ շինելու, խորհելով թէ այդ արհեստին կամ մասնագիտութեանը մէջ առաջնակարգ դիրք մը գրաւելէ ու նիւթական բարեկեցիկ վիճակ մը ապահովելէ վերջ պատեհութիւն պիտի ունենանք վայելելու կենաց այդ

փափկագոյն ու ազնուագոյն հաճոյքները: Եւ այսպիսի անդարմանելի ինքնախարութեամբ մը կը թողունք որ մշտնջենապէս անհետանան մեր սրտէն կեանքի կատարելագործման ուսովիրաներն եղող պատանեկան այդ բաղձանքները: Ոչ, ապագային երբեք չպիտի ունենաս ճաշակ բանաստեղծութեան կամ երաժշտութեան, երբեք չպիտի դրդուիս առողջ զաղափարաց հետ հաղորդակցելու, երբեք չպիտի մղուիս ընկերական բարենպաստակ գործնէութեանց մասնակցելու և երբեք չպիտի ջանաս կենդանի պահել հոգեկան բնութեանդ բարձրագոյն մասերը, եթէ չսկսիս այս շահեկանութեանց իւրաքանչիւրին քու մէջդ ծնանելու բարեպատեհ շրջանին մէջ ու կանոնաւորապէս չշարունակես ամբողջ կեանքիդ մէջ: Օրը տասը վայրկեան տուր բանաստեղծական ներշնչող կտոր մը կարդալու, շաբթուան քանի մը ժամը գոնէ յատկացուր միտքդ մշակող ընթերցումներու եւ ժամ մը կամ երկուք ալ երաժշտութեան ունկնդրելու, ամսուան գոնէ քանի մը իրիկունները նուիրէ ընկերական բարենպաստակ գործնէութիւններու: Ըրէ այս բաները անընդմիջաբար, եթէ չես ուզեր որ անդառնալիօրէն բաժնուին քեզմէ ճոխ կեանքի մը կարելիութիւնները, և ապագային չստիպուիս ողբալ՝ Տարուինի նման՝ մահը պատանեկան սրտիդ մէջ ծնունդ առնող այնքան խանդավառ ձգտում ներուն, այնքան հաճոյառիթ ճաշակներուն եւ այնքան օրհնեալ գործնէութիւններուն:

Հանրածանօթ իրողութիւն մըն է թէ իրենց սովորական զբաղումներէն հաճոյք չեն քաղեր մարդիկ առհասարակ: Հաճոյքի ծնունդ տուող պայմաններուն վրայ հարեւանցի տեսութիւն մը ունենալ բաւական է այս իրողութեան պատճառը հասկնալու համար: Հաճոյքը արդիւնքն է միշտ մարմնոյ մէջ ամբարուած ուժի մը գործածութեանը. որչափ մեծ քանակութեամբ ոյժ որ ամբարուած ըլլայ մարմնոյ ուրէ մէկ անդամին մէջ այնչափ ալ մեծ հաճոյք կ'առթէ անոր գործածութիւնը: Բայց ոյժի մեծ մթերք մը չկըրնար ամբարուիլ շարունակ գործածուող անդամի մը մէջ. ուժի հոսանքները դուրս կը վազեն անկէ անմիջապէս՝ նման աղբիւրի մը ջրերուն, առանց պատեհութիւն ու ժամանակ ունենալու կուտակման: Յայտնի է, ուրեմն, թէ հաճոյառիթ չեն կրնար ըլլալ ուրէ անդամի շարունակական գործածութիւնները, քանի որ ուժի ամբարուած մթերք մը չկրնար պարունակել ան իր մէջ: Ասոր համար է որ հաճոյք չեն զգար մարդիկ իրենց սովորական զբաղումներէն: Իսկ, ընդհակառակը, մեծ հաճոյք կ'առթէ մեզ ուրէ անդամի կամ զգայարանի գործածութիւնը որ բաւական ատենէ ի վեր կրցած է ուժի մթերք մը ամբարել իր մէջ, ինչպէս՝ պիտի տեսնուի յետագայ օրինակներէն:

Գարնան վերջերը այնչափ հաճոյք չենք զգար կանաչ մարգերու եւ գունազեղ ծաղիկներու ընծայած տեսարաններէն որչափ որ կ'զգանք գար-

նան առաջին օրերուն մէջ: Չմբան ձիւնապատ բլրակներն ու դաշտեր, որ այնքան հաճոյառիթ տեսարան մը կ'ընծայեն մեզ առաջին անգամ՝ կը կորսնցնեն տակաւ իրենց հրապոյրը որչափ երկար ատեն որ տեւեն: Աւելի համեզ կ'երեւի մեր սիրած մէկ կերակուրը զոր ճաշակելու պատեհութիւն չէինք ունեցած ամիսներէ կամ տարիներէ ի վեր: Հաճոյքի աւելի մեծ աղբիւրներ կը դառնան անցելոյն մէջ մեզի հաճոյք առթող փորձառութիւնները երբ կրկնուին բաւական երկար ընդմիջումներէ վերջ: Հեռաւոր երկրէ վերադարձող պանդուխտը անբացատրելի հաճոյք մը կ'զգայ երբ առաջին անգամ տեսնէ իր ծննդավայրին բլրակներն ու հովիտներ, տուններն ու փողոցներ, եւ ողջագուրէ իր ազգականներն ու բարեկամներ. բայց կարճ ժամանակի մը համար: Անընդմիջաբար տեղի ունեցող սեւէ փորձառութիւն կը դադրի այլևս հաճոյառիթ ըլլալէ, որովհետեւ այդպիսի պարագայի մը մէջ պատեհութիւն չ'մնար այլևս ուժի ամբարման: Ինչ արհեստի կամ զբաղման ալ որ հետեւիս, երաժիշտ մը ըլլաս կամ մեքենագործ, հաշուակալ կամ վաճառական, չես կրնար հաճոյք գտնել սովորական գործառնութիւններուդ մէջ: Ունակութիւն մը դառնալու է մեր զբաղումը կամ արհեստը եթէ պիտի յաջողինք անոր մէջ, եւ ունակութիւնը սպաննիչն է հաճոյքին:

Մեր առօրեայ զբաղումներէն դուրս փնտռելու ենք, ուրեմն, կեանքի հաճոյքները: Զանազանութիւն դնելու ենք մեր գործառնութիւններուն մէջ եթէ հաճոյալից կեանք մ'ունենալ կ'ակնկալենք: Ծաղիկներ ու ծառեր սիրող վաճա-

ռականը շատ աւելի մեծ հաճոյք մը կը քաղէ իր ծաղկանոցին կամ պարտէզին մէջ կարճ ժամանակ մը աշխատելէն քան թէ իր առեւտրական զբաղումներէն: Իայց տալտուկ պիտի առթէր պարտիզպանութիւնը այս նոյն անձին եթէ իրեն արհեստ ըրած ըլլար զայն: Իր պարապոյ ժամերուն դաշտերը պտտող եւ զանազան բնական տեսարաններու պատկերներն առնող անձը կրնայ խորհիլ թէ խիստ հաճոյալից կեանք մը կ'անցնէ արհեստով պատկերահանը, բայց տարբեր պատասխան մը պիտի ստանայ եթէ անոր հարցնէ: Կողմնակի զբաղումներն ու անսովոր գործնէութիւնները միայն կրնան հաճոյք տալ մարդուս: Հաճոյքի բնագաւառները առաջնորդող բազմաթիւ ճամբաներ են բոլոր այն զանազան գործնէութիւնները զորս կը վարժուի մարդ կատարել իր մասնաւոր գործէն զատ, ինչպէս են թիավարութիւն կամ ձկնորսութիւն, պարտիզպանութիւն կամ մեղուաբուծութիւն, նուագածութիւն կամ պատկերահանութիւն, ընթերցում կամ ճամբորդութիւն, ընդհանուր ծանօթութեանց հաւաքում թուշուներու, բոյսերու կամ ուրիշ հազարումէկ բաներու վրայ, եւ մասնակցութիւն ընկերական զանազան բարենպաստակ գործնէութեանց: Այն է ճոխ ու բազմակողմանի կեանքը որ, իր գլխաւոր զբաղումներէն դուրս, տարբեր ուղղութեամբ գործնէութիւններ ալ ունի. եւ մարդու մը ունեցած հաճոյից կամ երջանկութեան ճոխութիւնը համեմատական է միշտ իր գործնէութիւններուն ճոխութեանն ու բազմաձեւութեանը:

Սխալ կարծիք մըն է արմատացած ոմանց մէջ, իբր թէ մասնագիտութեան մը կամ արհեստի մը մէջ յառաջանալ ձգտող անձին համար կորուստ մըն է հաճոյքի տրուած ժամանակը: Ազիտաբեր նախապաշարում մըն է ասիկա որ բնախօսական ու հոգեբանական ամենէն տարրական սկզբունքներուն անգիտակ անձանց մէջ միայն կրնայ գոյութիւն ունենալ: Ամենասերտ կերպով իրարու միացած ամբողջութիւն մը կը կազմեն մեր մարմնոյն բոլոր անդամներն ու հոգւոյն բոլոր կարողութիւններ, որոնցմէ ոեւէ միոյն մէջ յառաջ եկած այլասերումը փնասաբեր ազդեցութիւն մը ունի մնացեալ բոլոր մասերուն վրայ: Եթէ զօրաւոր բազուկներ ունենալ կ'ուզես, բաւական չէ միայն եւ միմիայն այդ անդամին գործածութեանը հոգ տանիլ, այլ հոգ տանելու ես նաեւ ստամոքսիդ ու սրտիդ, թոքերուդ եւ զգայարաններուդ, ոտքերուդ ու սրունգներուդ ալ առողջութեանը եւ չափաւոր գործածութեանը, որովհետեւ ասոնց ոեւէ միոյն մէջ յառաջ եկած տրկարութիւնը աննպաստ կերպով մը պիտի ազդէ բազուկներուդ վրայ եւ աստիճան մը փնասէ անոնց աճումն ու զօրացումը, իսկ ընդհակառակը ասոնց մէջ տիրող ընդհանուր առողջութիւնը ու համեմատական գործնէութիւնները մեծապէս նպաստաւոր պիտի ըլլան բազուկներուդ առողջութեանը եւ ուժեղութեանը: Զօրաւոր բազուկներ ունենալ բազձացող անձի մը համար ժամանակի կորուստ չեն բնաւ մարմնոյ ներքին ու արտաքին ուրիշ

անդամոց չափաւոր գործնէութիւններուն համար յատկացուած բազդատաբար կարճ ժամանակները, այլ ընդհակառակը անհրաժեշտ պայմաններ են յաջողութեան: Այսպէս է նաեւ մարդուս հոգեկան բնութիւնը: Տարբեր տարբեր զգայութիւններէ եւ իմացական կարողութիւններէ կազմուած ամբողջութիւն մըն է անիկա, որուն ոեւէ մասին տկարացումը կամ այլասերումը փնասակար ազդեցութիւն մը կը գործէ բոլոր ուրիշ մասերուն վրայ եւս: Այս իրողութիւնը ակնարկելով է որ բանաստեղծական ու երաժշտական ճաշակներուն անհետացումը փնասակար ազդեցութիւն մը գործած ըլլալ կը համարէր Տարուին իր իմացական եւ բարոյական կենացը վրայ: Մասնագիտութեան մը մէջ յառաջանալ, արհեստ մը կատարելագործել, կամ ընկերական սոսկալի շարիքի մը դէմ մաքառիլ ձգտող անձին համար կորուստ չէ բնաւ կարճ ժամանակներ յատկացնել իր հոգեկան բընութեան զանազան պահանջներուն գոհացմանը, այլ ընդհակառակը իր հոգեկան այս անհրաժեշտ պէտքերը անտեսելով փնասած կ'ըլլայ բուն իսկ իր առաջադրած մասնաւոր նպատակին եւ դաւաճանած կ'ըլլայ իր հոգեկան կենացը դէմ:

Անոնք որ իրենց մասնաւոր զբաղումէն կարճ ժամանակներ չեն խնայեր գոհացում տալու համար սրտի ազնուագոյն պահանջներուն, կը ցամքեցնեն հաճոյքի ու երջանկութեան աղբիւրները իրենց ամբողջ կեանքէն, կը մեռցնեն իրենց բազմակողմանի միտումներն ու ճաշակներ, եւ անկարելի կը դարձնեն ճոխ կեանքի մը իրականացումը իրենց մէջ:

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԵՏՎԵՐԸ

1

Մեր հասարակութիւնը, ինչպէս ամեն հասարակութիւն, բաղդատարար աւելի լաւ ըմբռնած է հաւատքի ու գործի կարեւորութիւնը քան թէ գիտակցութեան: Գրութեանս նպատակը պիտի ըլլայ ցոյց տալ թէ ո՛չ հաւատքը և ո՛չ ալ գործն է անհատի մը կամ ժողովրդի մը ամենէն կենսական պէտքը, այլ գիտակցութիւնը:

Հաւատքի կարեւորութիւնը ուրանալու չափ յիմար չպիտի ըլլանք անշուշտ: Հաւատքն է շարժիչ ոյժը անհատական եւ ընկերական ամեն տեսակ յառաջդիմական գործնէութեանց: Չենք կրնար նաեւ ուրանալ գործի կարեւորութիւնը: Գործն է պտղաւորումը մարդկային հոգւոյն մէջէն անցնող ամեն տեսակ ղգացմանց եւ խորհրդոց: Բացարձակապէս փաստակար են բոլոր այն ազնիւ ղգացումներն ու երազներ, բոլոր այն զմայլելի իտէալներն ու հաւատքներ, որոնք աստիճանաբար մարմին չեն առներ իրենց համապատասխան գործերու մէջ: Բայց դարձեալ կը պնդենք թէ գիտակցութիւնն է անհատի մը կամ ժողովուրդի մը առաջին կենսական պէտքը: Հարկ չէ մասնաւոր ջանքեր ընել հաւատք ունե-

նալու համար, որովհետեւ հոգեկան ինքնածին ոյժ մըն է անիկա մարդուս մէջ: Բաղաքակիրթ անձի մը ունեցածէն աւելի բուռն հաւատքներ ունի ընդհանրապէս վայրենին կամ կէս-քաղաքակիրթը: Մասնաւոր ջանքերու չկարօտիք նաեւ գործը, որովհետեւ բնազդական յատկութիւն մըն է անիկա ամեն կենսաւորի համար: Գործելէն անհունապէս աւելի դժուար է չգործելը ապրող էակի մը համար: Անխուսափելիօրէն գործի կ'առաջնորդէ մարդուս մէջ ինքնաբերաբար ծնող ամեն ղգացում կամ հաւատք: Հետեւապէս անհատի մը կամ ժողովուրդի մը համար պէտքեր իսկ չեն հաւատքն ու գործը, քանի որ արդէն ինքնաբերաբար գոյութիւն կրնան առնել անոնք մարդկային ամեն արարածի մէջ:

Բայց կոյր է ինքնածին այդ հաւատքը, եւ փաստակար գործերու աւելի կ'առաջնորդէ զմարդ քան թէ օգտակար: Անհրաժեշտ է որ լուսաւորուի անիկա գիտակցութեան լուսովը: Ինչ աստիճան որ զարգացած է անհատի մը կամ ժողովուրդի մը գիտակցութիւնը, նոյն աստիճան միայն կրնան բանաւոր ըլլալ անոր հաւատքները, եւ նոյն աստիճան միայն կրնան օգտակար ըլլալ անոր արտադրած գործեր: Անհատի մը կամ ժողովուրդի մը գիտակցութեան աստիճանն է որ պիտի որոշէ անոր հաւատքներուն և գործերուն արժանիքը: Հաւատք ունենալէ եւ կամ գործ արտադրել կարենալէ շատ աւելի կը կորօտի մարդ իր արդէն իսկ ունեցած բուռն բայց անբանաւոր հաւատքները եւ անոնց արտադրած փաստակար գործնէութիւնները ՉՍՊՈՂ ուժի մը, եւ գիտակցութիւնն է այդ ոյժը: Գիտակցու-

Թեան զսպիչ ազդեցութենէն զուրկ եղող անհատի մը կամ ժողովուրդի մը կատարած գործերը փնասակար կ'ըլլան խիստ յաճախ, որովհետեւ մարդկային բնութեան մէջ տիրող կոյր ու յաճախ վայրենական զգացումներէն կը բղխին անոնք ուղղակի: Գիտակցութիւնն է որ պիտի զսպէ մարդուս անբանաւոր հաւատքները, որ պիտի արգելէ անոնց արտադրելիք փնասակար գործնէութիւնները, եւ որ պիտի ստեղծէ ու զօրացնէ օգտակար գործնէութեանց առաջնորդող բանաւոր հաւատքներ: Բայց ինքնածին կարողութիւն մը չէ գիտակցութիւնը, ու ոչ ալ կրնայ ցօղի նման երկինքէն իջնել մարդկային հոգւոյն մէջ: Աշխատալից ու տեւական ջանքերու միջոցաւ միայն կրնայ մարդ ժառանգել զանիկա ու զարգացնել: Ամեն անհատի ու ժողովուրդի ջանքը ըլլալու է, ուրեմն, գիտակցութիւն ժառանգել և ոչ թէ հաւատք կամ գործ, գիտակցութիւն զարգացնել՝ որուն միջոցաւ միայն պիտի կրնայ նաև բարձրացնել ու լայնցնել իր հաւատքները, և օգտակար ուղղութեամբ մը յառաջացնել իր կենաց բոլոր գործնէութիւնները:

2

Բաւական է մօր մը օրինակը վեր առնել ցոյց տալու համար թէ ամենէն խանդավառ հաւատքներ ու ամենէն անձնուրաց գործերն իսկ կրնան որոշակի փնասակար արդիւնքներ յառաջ բերել, եթէ չգտնուին զարգացած գիտակցութեան մը տեսչութեանը տակ: Մայրական հաւատքը զաւակին հետ կը ծնի մայրական սիրոյն

նման: Ապագայ կարելիութիւններու փայլուն տեսիլքներ կը տեսնէ մայրը իր փոքրիկ մանկան մէջ, ու անհուն զոհողութիւններով կը ջանայ իրագործել իր տեսած այդ կարելիութիւնները, եւ այսպէս բարի ու երջանիկ կեանքի մը հասցնել իր զաւակը: Կրնայ ըլլալ որ յոռի ընթացքի մը հետեւի այդ մանկիկը իր պատանեկան օրերուն մէջ, եւ կրնայ ըլլալ որ բարոյապէս փճացած մէկը փորձուին նկատել զանիկա ուրիշներ: Բայց գնա՛ ու բաց անոր մօրը սիրտը, եւ հաւատքի անհուն ուժկիւննոս մը պիտի գտնես հոն: Ո՛չ կ'ըսէ այդ մայրը, բոլորովին ինկած մէկը չը կրնար ըլլալ իմ զաւակս, պիտի կանգնի օր մը եւ բարի կեանք մը վարել սկսի: Մինչդեռ որիշներ անտարբերութեամբ կը քննադատեն այդ պատանիին յոռի ընթացքը, անդին մայր մը միջոցներ կը փնտռէ ուղիղ ճամբուն առաջնորդել կարենալու համար իր զաւակը, անդին մայր մը իր հանգիստը, իր երջանիկութիւնը ու իր կեանքը կը զոհէ՝ փրկել կարենալու համար իր զաւակին կեանքը: Մայրական այս հաւատքն է ահա որ իր արտադրած անձնուէր գործնէութիւններուն միջոցաւ կը ճգնի դէպի լաւագոյն ապագայ մը առաջնորդել անհատը՝ իր կենաց առաջին օրէն իսկ սկսեալ, եւ որ անհուն գուրգուրանքով կը հսկէ անոր ամբողջ ընթացքին վրայ: Այս հաւատքին ազդեցութեամբն է որ անձնուէր ծառայութեան մարմնացումը կ'ըլլայ մայրը, ու զօրեղագոյն ազդակը՝ մարդկային սեռին փրկութեանը վսեմ գործին մէջ: Մայր կոչուելու արժանի չէ այն կինը որ չունի այսպիսի գործօն հաւատք մը իր զաւակին վրայ:

Անձնագոհ կեանք մը յառաջ բերող մայրական այս հաւատքին առջեւ զմայլանքէ ու երախտագիտութենէ տարբեր զգացումներ չկրնար ունենալ մարդ: Բայց մայրական այս վեհ հաւատքն իսկ ու անոր արտադրած բոլոր անձնուէր գործեր այն աստիճան միայն օգտակար կրնան հանդիսանալ ինչ աստիճան որ գտնուին լուսաւորուած գիտակցութեան մը ուղղութեանը տակ: Ի՞նչպէս պիտի կրնայ այս հաւատքը առողջ ու զարգացուն վիճակի մը մէջ պահել մանկան մը մարմինը, երբ տարրական ծանօթութիւն մ'իսկ չունի մայրը այդ մանկան Ֆիզիքական կազմութեանը եւ անոր գործնէութիւնները կառավարող բնախօսական օրէնքներուն վրայ, երբ չգիտեր թէ որոնք են առողջութիւնը պահպանող նպատակները պայմաններն ու որոնք են զանիկա խանգարող աննպատակ պայմաններ, երբ չգիտեր թէ միջավայրի տարբեր ազդեցութիւններ ի՞նչ տարբեր փոխոխութիւններ յառաջ կը բերեն մարմնական այդ կազմուածքին ու անոր գործնէութեանը մէջ, երբ չգիտեր թէ ինչ պաշտօններ ունին լոյսն ու ջերմութիւնը, օդն ու կերակուրը Ֆիզիքական կեանքը աճեցնելու եւ զարգացնելու գործին մէջ, ու չկրնար մարմնոյ վիճակին ու պահանջին համեմատ զանազանել ասոնց ալ աստիճանը, տեսակը կամ քանակը: Ի՞նչ կրնայ ընել անձնագոհ հաւատքը, երբ իրեն հետ չընկերակցիր նաև Ֆիզիքական կենաց մասին պէտք եղած գիտակցութիւն մը: Մեր հիւանդները չենք յանձներ մէկու մը որ զօրաւոր հաւատք մը լոկ ունի անոր առողջանալուն վրայ, և որ պատրաստ է անձնուիրաբար դարմանել զանիկա: Մենք կը

փնտռենք մէկը որ բան մը սորված է այդ հիւանդութեան պատճառին եւ անոր դարմանումին եղանակացը վրայ, որ քննած եւ ուսումնասիրած է մարդկային մարմինը ու գիտէ թէ ինչ պայմաններ հարկաւոր են այդ հիւանդութեան անհետացմանը համար: Մենք կը դիմենք բժիշկի մը խրատներուն եւ դարմանումներուն, որ տարիներու աշխատութեամբ եւ փորձառութեամբ գիտակցութիւն շահած է այս գործին մէջ: Բայց տակաւին պէտք եղածին չափ չենք հասկցած թէ մարդուս Ֆիզիքական կազմութեանը ու անոր գործնէութեանցը մասին ընդհանուր գիտակցութիւն մը անհրաժեշտ է ամեն մօր համար որ պաշտօն ունի առողջ վիճակի մը մէջ պահել մանկան մարմինը, տակաւին չենք հասկցած թէ այսպիսի գիտակցութենէ մը զուրկ եղող մայրերուն արտադրած փնտասկար գործերուն պատճառաւ է որ շատ մը հիւանդութիւններ եւ խիտեր ծնունդ կ'առնեն մանկական կենաց փափուկ շրջանին մէջ, եւ տարուէ տարի կը խանգարեն միլիոնաւորներու առողջութիւնն ու երջանկութիւնը: Հաւատքը չէ որ կը պակսի մայրերուն մէջ ընդհանրապէս, ու ոչ ալ անձնուէր գործը, այլ գիտակցութիւն: Գիտակցութիւն տուէք մայրերուն, եւ բանաւոր հաւատքներու պիտի փոխուին անոնց բուռն ու անկեղծ՝ բայց կոյր հաւատքները: Գիտակցութիւն տուէք մայրերուն եւ միակ միջոցը տուած պիտի ըլլաք անոնց՝ ճշմարտապէս օգտակար ընծայելու իրենց անձնուէր գործնէութիւնները: Գիտակցութիւն տուէք մայրերուն, եւ կերպարանափոխ պիտի ըլլայ աշխարհ կարճ ժամանակէն ու պիտի անհետանան

չատ չարիքներ, պիտի պակսին շատ թշուառութիւններ, եւ յառաջ պիտի գան աւելի առողջ ու երջանիկ կեանքեր: Ոչ մէկ բան այնքան անդարմանելի վնասներ հասուցած է մարդկային սեռին, ոչ մէկ բան այնքան նպաստած է Ֆիզիքական զանազան տկարութեանց մարդկային կազմուածքին մէջ արմատանալուն որքան գիտակցութենէ զուրկ եղող մայրական կոյր հաւատքներէ արտադրուած գործեր: Մայրը, անհուն սիրոյ եւ անձնուիրութեան այդ մարմնացումը, որ մանկական փափուկ շրջանին մէջէն մարդկային սեռը առողջ չափահասութեան մը առաջնորդելու վսեմ պաշտօնը ունի, անոր դահիճը կը դառնայ ակամայ երբ զուրկ է իր այս պաշտօնին պահանջած գիտակցութենէն:

Երբ մարդուս հոգեկան վիճակը նկատի առնենք, աւելի եւս կը շեշտուի մայրական գիտակցութեան անհուն կարեւորութիւնը: Չկրնար արժանաւոր մայր մ'ըլլալ այն կինը որ ընդհանուր գաղափար մ'իսկ չունի իր զաւակին հոգեկան կենաց աճումը կառավարող օրէնքներուն մասին, որ չգիտեր բնաւ թէ ինչ վճռական շրջաններէ կ'անցնի մանկան մը հոգին, թէ ինչ բնական կարգով կը ծնին անոր զգացումները եւ ինչ փոփոխութիւններ կը կրեն տարիներու ընթացքին մէջ, որ չգիտեր թէ ինչ բանաւոր միջոցներով կարելի է արմատախիլ ընել մանկական հոգւոյն մէջ ինքնաբերաբար ծնունդ առնող անասնական վայրագ ու գձուձ կիրքեր, եւ ինչպէս կարելի է զարգացնել անոր ազնուագոյն զգացումները: Մայր մը որ տարրական ծանօթութիւն մ'իսկ չունի նկարագրի հիմերը կազմող հոգեկան այս

իրականութեանց մասին, բացարձակապէս անկարող է առողջ նկարագրով չափահասութեան մը առաջնորդել իր զաւակը, թէեւ իր կեանքն իսկ զոհելու պատրաստ ըլլայ անոր բարելաւութեանը համար: Հաւատք չէ որ կը պակսի մեր մայրերուն քով ու ոչ ալ գործ, այլ գիտակցութիւն: Մարդկային հոգեկան բնութեանը մասին լուսաւորուած գիտակցութիւն մը տուէք մայրերուն, եւ ստեղծած պիտի ըլլաք մարդկային նկարագրին հիմնական բարեկարգման միակ աղբակը:

3

Նոյն ճշմարտութիւնը կը պարզուի մեր առջեւ երբ կրօնական զգացման վրայ դարձնենք մեր ուշադրութիւնը: Բնազդ մըն է կրօնը, արմատական մէկ մասը մարդկային բնութեան, ինքնածին ու անդիմադրելի մէկ բղխումը մարդկային սրտին, բարձրագոյն մէկ արտայայտումը մարդկային կամքին: Բարին կը փնտռէ մարդ, Բարին կը պաշտէ և Բարին մարմնացնել կը ճգնի անհատական ու ընկերական կենաց մէջ: Եւ ո՞վ կրնայ արժանաւորապէս գնահատել Բարին փնտռող այս կամքին մարդկութեան մատուցած ծառայութիւնները: Կրօնի այս զգացումն է որ կը դրդէ զմարդ ամեն բան զոհել Բարին ժառանգելու համար, իր անձը տալ ուրիշներուն ծառայութեանը, նուիրուիլ աշխարհի փրկագործութեան վսեմ գործին, եւ աշխատիլ “Ներկնից Թագաւորութիւնը” հաստատել իր կեանքին եւ ընկերութեան կենաց մէջ: Պատկառիլ միայն կրնանք կրօնի առջեւ ու օրհնել անոր գոյու-

Թիւնը ու գործնէութիւնը ամեն դարու եւ ամեն ժողովուրդի մէջ :

Բայց կրօնքն իսկ, մարդկային կեանքը փրկող այս միակ ոյժը, ամենամեծ չարիքներու ծնունդ կրնայ տալ երբ չառաջնորդուիր լուսաւորուած գիտակցութեանէ մը: Բաւական է կրօնի պատմութեանը վրայ հարեւանցի ահնարկ մը նետել այս պնդումին ճշմարտութեանը համոզուելու համար: Ընկերութեան հիմերը խախտող ամենէն վարչելի մոլութիւններն իսկ սրբագործուած են անցելոյն մէջ եւ իբրեւ պաշտամունք կատարուած կրօնի կողմէն, ինչպէս անառակութիւնը: Ո՞վ կրնայ տարակուսիլ նախնի ու ներկայ բարբարոս ցեղերուն կրօնական անկեղծ, ջերմեռանդ ու բոլորանուէր կեանքին վրայ, եւ սակայն կրօնի ոչ միայն թոյլտուութեամբը այլ մանաւանդ հրամանովը կը ջանային ու կը ջանան անոնք ուրիշին իրաւունքները յափշտակել, գողնալ, աւարառութիւններ ընել եւ մարդակերութեամբ իրենք վըրէժխնդրութեան պապակը յագեցնել: Իբրեւ կրօնական պարտականութիւն մը չէին վարաներ ու չեն վարանիր անոնք ողջակիզել կամ ջուրը նետել իրենց անմեղ զաւակները, խոշոտել իրենց մարմինները, եւ ապրիլ մարդուս Փիզիքական ու հոգեկան կեանքը հաւասարապէս քայքայող աղտեղութեանց մէջ: Կրօնը հարկաւորապէս մոլեռանդութիւն յառաջ կը բերէ ամեն ուր որ գոյութիւն չունի մտաւոր զարգացումը, եւ որչափ աւելի ջերմեռանդ ըլլայ այնչափ աւելի կ'արգիլէ ընկերութեան բարեկարգումը ու կը խափանէ բարոյական լուսագոյն կենաց յառաջդիմութիւնը: Տգէտ բայց կրօնասէր ան-

հատներու և ժողովրդոց իւրաքանչիւրին կեանքը կենդանի օրինակ մը կ'ընծայէ այդ մասին:

Քաղաքակիրթ աշխարհի մէջ բարեփոխուած է կրօնը եւ բարոյական արդի սկզբունքներ կը քարոզէ պիտի առարկէք: Լաւ բայց ի՞նչ բանի մէջ կը կայանայ կրօնի այդ բարձրացումն ու ազնուացումը, ի՞նչպիսի գորութեան մը ազդեցութեամբն է կրցած այդ բարձրութեան հասնիլ եւ ի՞նչ տեսակ անհատներու մէջն է որ կրնայ իր վեհութիւնը պահպանել: Կրնա՞ք ուրանալ թէ ճշմարտութեան, արդարութեան, բարութեան ու սրբութեան գաղափարականներուն աստիճանական զարգացմանը հետեւած է կրօնը իր վերելքին մէջ, թէ Տիեզերական սիրազեղ Հօր մը եւ մարդկային ընդհանուր եղբայրակցութեան գիտակցութեանէ ստացած է ան իր ամբողջ այլասիրական վեհ ներշնչումներն ու անձնութեան լայն գործնէութիւններ: Եւ կրնա՞ք չընդունիլ թէ իմացական զարգացման արդիւնք են միշտ անհատի մը ճշմարտութեան, արդարութեան, բարութեան ու սրբութեան մասին կազմած գաղափարականներուն ալ զարգացումները, թէ իր մտքի լայնութեան ու խորութեան աստիճանէն կախում ունի միշտ քրիստոնէին Տիեզերական Հօր մը եւ մարդկային սեռի եղբայրակցութեան մասին ունեցած գիտակցութեան ալ լայնութեան ու խորութեան աստիճանը: Այսպէս, կրօնական կենաց զարգացման նաեւ միակ ռակվիրան է մտաւոր զարգացումը: Իմացական տարրն է որ կը չափորոշէ ոեւէ կրօնի ունեցած բարոյական արժանիքն ու աստիճանը: Տարբերութիւն չընենր եթէ քրիստոնէական ճշմարիտ կրօնը դաւանի

մէկը, կրօնքով բարբարոս մըն է այն դարձեալ եթէ բարբարոս մըն է մտքով.— մոլորութեանց քաոս մը կը կազմեն անոր հաւատալիքները, նախապաշարմանց վրայ են հիմնուած անոր կրօնական համոզումները, մարդուս պատկերով շինուած հսկայ կուռք մըն է անոր պաշտած Աստուածը եւ բարոյական վերնագոյն սկզբանց դէմ պայքար մըն է անոր կեանքը: Միտքը, մշակուած միտքը, բանաւոր խորհուրդներ յըզանալու կարող միտքն է միակ ստեղծիչը եւ որդեգրողը բարոյական սկզբանց, միակ ազդակը ազնուագոյն ձգտումներու զօրացմանն ու հետեւապէս յոռեգոյններուն զսպմանը, միակ ուսուցիչը կեանքի ամեն կատարելագործմանց եւ առաջին անհրաժեշտ պայմանը “երկնից Թագաւորութեան” աստիճանական դալստեանը: Ժողովուրդին միտքը մշակել ջանացէք նախ առողջ գաղափարներով ու խորհուրդներով, եթէ անոր կեանքը բարեփոխել կը բաղձաք: Մտքէն կ’սկսի ամեն բարեփոխում: Ժողովուրդին իմացական կարողութիւնները զօրացնել թող ըլլայ ձեր առաջին մտահոգութիւնը: կեանքի կենդանի օրինակներով եւ լեզուի ու գրչի քարոզութիւններով բարոյական սկզբունքներ պարզեցէք անոր մտքին առջեւ, ճշմարտութեան, արդարութեան, բարութեան ու սրբութեան բարձր գաղափարականներ, տիեզերքի միութեան ու բանաւորութեան վրայ գիտական ներշնչող տեսութիւններ, ընկերական կեանքը կառավարող ու բնաշրջող օրէնքներուն վրայ անխախտ համոզումներ, բռնութեան եւ պատմութեան մէջ Աստուծոյ ներգոյութեան ու մշտական գործնէութեանը մասին

խորին գիտակցութիւն մը, մարդկային սեռի եղբայրակցութեանը ու վսեմ ճակատագրին վրայ հաստատուն հաւատք մը, գիտակցութիւն տուէք անհատին ու ժողովուրդին, եւ արդէն իսկ սկսած պիտի ըլլաք այդ ժողովուրդը բարոյական ամեն տեսակ շարեաց ճիրաններէն փրկելու եւ դէպի կատարեալ կեանքը առաջնորդելու մեծ ու փառաւոր գործին: Բարիին հասնիլ ու Բարին վայելել կը ճգնի կրօնը, իսկ Բարին ցոյց տալ կոչուած է գիտակցութիւնը: Գիտակցութեան ջահովը լուսաւորեցէք կրօնի շարժիչ ուժով յառաջացող մարդկութեան ճամբան: Գիտակցութիւնն է մարդկութեան միակ առաջնորդը կենաց այս վտանգալից ճամբորդութեան մէջ, կրօնի տեսութիւն պարզեւող միակ յարաճուն լոյսը, առաջին անհրաժեշտ պայմանը անհատին ու ընկերութեան մէջ Բարիին, ճշմարտին ու Գեղեցկին շարունակական ներմուծմանն ու մարմնացմանը, եւ հետեւապէս նաեւ անհրաժեշտ պայմանը օգտակար, երջանիկ ու կատարեալ կենաց:

Ինչ որ ըսինք մօր մ’ունեցած հաւատքին կամ կրօնի եւ անոր արտագրած գործնէութիւններուն մասին, կրնանք նոյն ճշմարտութեամբ ըսել նաև կղերի մը, ուսուցչի մը, բարեկարգիչի մը, հոգաբարձուի մը, մարդասէրի մը, եւ կամ ընկերական ոեւէ գործնէութեան մասնակցող անհատի մ’ունեցած հաւատքին ու անոր արտագրած գործնէութեանց մասին: Որչափ ալ զօրաւոր հաւատքի տէր ըլլայ մէկը եւ որչափ ալ անկեղծ ու անձնուէր ըլլան իր ջանքեր, դարձեալ անկարող պիտի ըլլայ այդպիսին օգտակարապէս ծառայել իր ստանձնած պաշտօնին մէջ,

եթէ չունի նաեւ անոր պահանջած գիտակցութիւնը: Ազնիւ զգացումներէ լոկ մղուելով հանրային ոեւէ բարենպատակ գործի մասնակցող անձանց խիստ շատերը իրենց անգիտակցութեան պատճառաւ օգնելէ աւելի կը վնասեն այդ գործին: Մեր ժողովուրդը շատ աւելի բարեկարգ վիճակ մը պիտի ունենար այսօր, շատ աւելի օգտակար արդիւնքներ յառաջ պիտի բերէին մեր դպրոցները, եւ շատ աւելի հաստատուն ու տեւական պիտի ըլլային մեր բարեսիրական կազմակերպութիւնները, եթէ իրենց պաշտօնին պահանջած գիտակցութենէն զուրկ եղող կղերներ, ուսուցիչներ, հոգաբարձուներ, հանրային գործիչներ, եւ մինչեւ անգամ ընկերութեան անդամակիցներ պակաս ըլլային մեր մէջ: Հաւատքը միայն չէ որ պիտի յարմարցնէ մէկը օգտակարապէս ծառայելու իր անձին կամ իր ժողովուրդին բարելաւութեանը ու ոչ ալ գործը, այլ մանաւանդ գիտակցութիւնը:

4

Բայց հաւատքի ու գործի նման մարդկային բնութենէն ինքնաբերաբար բղխող բան մը չէ գիտակցութիւնը: Մի՛ խարուիք անոնցմէ որ գիտակից կը կոչեն եռանդուն ատենաբանութեան մը կամ սիրտը խանդավառող ոեւէ ազդեցութեան տակ յուզուող եւ անձնագոհ գործնէութեանց սկսող անհատը կամ հասարակութիւնը: Գիտակցութեան նշան չէ բնաւ եռանդը կամ գործը: Գիտակից չենք կրնար կոչել մայր մը,

որովհետեւ կը գուրգուրայ իր զաւկին վրայ ու պատրաստ է անոր համար դահուելու: Գիտակից կը կոչենք այն մայրը միայն որ սորված է կենաց գոյութեանն ու աճման պայմաններուն մասին բնախօսութեան ու հոգեբանութեան յայտնած ճշմարտութիւնները, եւ անոնց համեմատ կ'աշխատի առողջ ու բարի չափահասութեան մը յառաջացնել իր զաւակը: Տարիներու խղճամիտ աշխատանքովը միայն գիտակցութիւն կրնայ ըստանալ մարդ: Իրենց կեանքը բնախօսական կամ հոգեբանական հետախուզութիւններու նուիրող գիտուններուն յայտնած ճշմարտութիւնները պարունակող գրքեր կամ՝ գրութիւններ կարգալով միայն կրնայ իր պաշտօնին պահանջած գիտակցութիւնը ստանալ մայր մը: Առանց իր կողմէն ջանքեր իգործ դնելու ոչ մէկ անհատ կրնայ զարգացնել իր գիտակցութիւնը: Հաստատուն օրէնքներով կը կառավարուի ամբողջ բնութիւնը, եւ բնութիւն ըսելով կը հասկնանք հոս այնչափ մարդկութիւնը՝ իր բոլոր անհատական եւ ընկերական գործնէութիւններով՝ որչափ Ֆիզիքական տիեզերքը: Անհատի մը կենաց մէջ չպատահիր բնաւ փոփոխութիւն մը, անոր հոգիէն չանցնիր զգացում մը կամ խորհուրդ մը, անոր մարմինէն չարտայայտուիր բնաւ գործ մը որ չունենայ իր պատճառը ու յառաջ գալուն օրէնքը: Ընկերութեան մէջ յառաջ չգար բնաւ շարժում մը, կազմակերպութիւն մը եւ կամ ժողովուրդներու ճակատագիրը վճռող յեղաշրջում մը որ արդիւնք եղած չըլլայ հաստատուն օրէնքներու համեմատ գործող Ֆիզիքական կամ հոգեկան ուժերու: Գի-

տակցութիւն ըսելով կը հասկնանք հոս ընդհանուր գաղափարներ ունենալ բնութեան բոլոր փոխակերպումները յառաջ բերող ուժերուն եւ անոնց գործնէութիւնները կառավարող օրէնքներուն մասին:

Գիտութիւնը միայն կրնայ տալ մարդուս այսպիսի գիտակցութիւն մը: Որովհետեւ ի՞նչ է գիտութիւնը եթէ ոչ դասակարգուած ծանօթութիւնը այն ամեն բաներուն որոնք տեղի կ'ունենան մեր մէջը ու մեր շուրջը, դասակարգուած ծանօթութիւնը՝ մեր զգացումներուն, մեր ձգտումներուն, մեր իտէալներուն, մեր հաւատքներուն, ու մեր կենաց ամբողջ գործնէութիւններուն, դասակարգուած ծանօթութիւնը՝ մեր կրօնական, ընտանեկան, կրթական, քաղաքական ու ընկերական ամեն տեսակ հաստատութեանց, անոնց միջոցաւ արտայայտուած մարդկային բոլոր գործնէութեանց, եւ անոնց աճումն ու զարգացումը կառավարող անխախտ օրէնքներուն: Ի՞նչ է գիտութիւնը եթէ ոչ դարերու փորձառութեան ու տքնաջան ուսումնասիրութեանց արդիւնքը եղող դասակարգուած ծանօթութիւնը այն կենսական ու շարունակական յարաբերութեանց զորս ունի մարդ իր միջավայրին հետ: Ով որ ընդհանուր գաղափար մը գտնէ չունի գիտութեան յայտնած այս ճշմարտութիւններուն վրայ, կենաց գիտակցութիւնն ալ չունի, և հետեւապէս չկրնար վարել առողջ, օգտակար ու զարգացուն կեանք մը: Կենաց գիտակցութիւն ժառանգելու միակ պայմանն է շարունակական հաղորդակցութիւն մ'ունենալ բնութեան ուսումնասիրութեանը

նուիրուած մեծ մտքերու արտայայտած խորհուրդներուն հետ:

5

Մեր հասարակութեան մէջ անծանօթ է գրեթէ ԱՇԽԱՏԱԼԻՑ ընթերցումը: Այն գրքերն ու գրութիւնները ամենէն աւելի կը կարդացուին, որոնք աշխատանք ու խորհուրդ չեն պահանջեր ընթերցողին կողմէն, որոնք հաճոյք միայն աւթելու կը ծառայեն: Այսպիսի հազարաւոր գրքերու կամ գրութիւններու ընթերցումներ չեն կրնար մէկու մը գիտակցութիւնը զարգացնել: Կենաց ուրիշ մէկ երեւութիւն խղճամիտ ուսումնասիրութեան արդիւնքը եղող գրքերու և գրութիւններու աշխատալից ընթերցումներովը միայն կրնայ մարդ զարգացնել իր գիտակցութիւնը: Առանց այսպիսի ԸՆՏՐՈՒԱԾ ընթերցման եւ առանց ընթերցողին կողմէն եղած շարունակական ԶԱՆՔԵՐՈՒ չկայ գիտակցութեան զարգացում:

Կը շեշտենք կրկին: Հաւատք պէտք է մեր ժողովուրդին ու ոչ ալ գործ, այլ գիտակցութիւն: Մարդուս մէջ բնազդօրէն կը ծնին արդէն հաւատքն ու գործը, բայց անհատին կողմէն եղած մասնաւոր ջանքերու միջոցաւ միայն կրնայ ծնանիլ ու զարգանալ գիտակցութիւնը: Գիտակցութիւն տուէք ժողովուրդին, եթէ կ'ուզէք որ բռնու և անկեղծ՝ բայց կոյր հաւատքներու աղքեցութեամբ չնետուի անիկա իր կենաց բարձրագոյն շահեկանութիւնները վտանգող կործանարար գործնէութեանց մէջ, եթէ կ'ուզէք որ բանաւոր

Հաւատքներու առաջնորդութեամբ յառաջանայ անիկա իր գոյութեանն ու զարգացմանը նպաստող օգտակար գործնէութիւններու մէջ: Գիտակցութիւն տուէք ժողովուրդին. այս է անոր առաջին պէտքը ամեն ժամանակ ու ամեն պարագայի տակ: Ստեղծեցէք ընտանիքի վրայ, կրօնքի վրայ, դպրոցի վրայ, կառավարութեան վրայ, բնութեան, կենաց ու ընկերութեան վրայ ժամանակիս գիտական տեսութիւնները պարզող գրականութիւն մը, տարածեցէք զանիկա ժողովրդեան բոլոր խաւերուն մէջ, գործածեցէք ամեն միջոց այսպիսի գրականութիւն մը կարդալու վարժեցնել հասարակութիւնը, և կատարած պիտի ըլլաք ձեր ամենէն նուիրական պարտականութիւններէն մին, եւ վայելած պիտի ըլլաք ձեր կենաց ամենէն թանկագին ու օրհնեալ առանձնաշնորհումներէն մին: Գիտակցութեան զարգացումն է ռահվիրան ամեն տեսակ յառաջդիմական և օգտակար գործնէութեանց: Իր անձին ու իր նըմաններուն ճշմարտապէս օգտակար ըլլալ փափաքող մէկու մը տեւական ջանքը ըլլալու է գիտակցութիւն ստանալ ու գիտակցութիւն տալ իր նմաններուն:

6

Եւ դպրոցին մէջն է որ պիտի կրնայ ընթերցման առողջ ճաշակ մ'ստանալ ամեն անհատ: Թերեւս հարցուի թէ ինչո՞ւ դպրոցին վրայ ձգել կ'ուզէք ժողովրդեան մը ընթերցանութեան ճաշակը զարգացնելու գործը. դպրոցին՝ որ հազիւ

հազ կրնայ ժամանակ գտնել քանի մը տարրական ծանօթութիւններ լոկ հազորդելու իր աշակերտներուն: Աւելի խնայողական չէ՞ միթէ հանրային գրադարանին յանձնել այս պաշտօնը: Դպրոցական շրջան մը աւարտող երիտասարդը չկրնա՞ր միթէ ինքնաբերաբար զարգացնել իր գրական ճաշակը, եթէ միայն պէտք եղած գրքերը հայթայթուին իրեն: Ժամանակի ու դրամի ահաբեկ շահ մը չպիտի՞ ըրած ըլլանք եթէ փոխանակ դպրոցական շրջանին կարեւոր մէկ մասը այս նպատակին յատկացնելու, միջոցներ գործածենք որ դպրոցի մը ընթացքը աւարտելէ յետոյ պատեհութիւն ունենան մեր երիտասարդները սնուցիչ գրքեր կարդալու: Ստիպուած ենք բացասական պատասխան մը տալ բոլոր այսպիսի հարցումներու: Ահաւասիկ մեր պատճառը:

Կենաց մանկական ու պատանեկան շրջաններուն մէջ միայն կ'ունենայ մարդ անշահախնդիր հետաքրքրութիւն մը, այսինքն ներքին բնագդային դրդում մը ամեն բան քննելու, ամեն բանի վրայ ծանօթութիւն ստանալու՝ առանց շահու ախնակութեան: Տարիներու ընթացքին մէջ հետզհետէ կը տկարանայ անշահախնդիր հետաքրքրութեան այս բնագդը, այնպէս որ չափահաս անձը կը դադրի այլեւս հետաքրքրուելէ այն առարկաներով կամ ծանօթութիւններով, որոնք ուղղակի կամ անուղղակի կապակցութիւն մը չունին իրեն անձնական շահերուն կամ զբաղմանցը հետ: Մարդու մը հետաքրքրութիւնն է որ կ'ուղղէ ու կը կառավարէ իր ընթերցումներուն ընթացքը. այն գիրքերն ու գրութիւնները միայն կարդալ կը փափաքինք, որոնք մեր հե-

տաքրքրութիւնը գոհացնող ծանօթութիւններ կը պարունակեն: Բայց բնագոյ մըն է անչափախնդիր հետաքրքրութիւնը, որ ալիքի մը նման կուգայ կ'անցնի մանկական ու պատանեկան շրջաններու վրայէն՝ անգամ, մըն ալ ետ չդառնալու պայմանաւ: Իր իմացական կարողութեանց զարգացմանը համեմատ ինքաբերաբար կը դրդուի պատանին կարգալ այդ զարգացմանց համապատասխան նիւթերու վրայ ճառող գրքեր, անոր հետաքրքրութիւնը յաջորդաբար կը դառնայ տարբեր տարբեր նիւթերու, այնպէս որ դիւրին է մեթոտաւոր վարժութեանց շնորհիւ յառաջ բերել անոր մէջ բազմակողմանի ընթերցանութեան մը թանկագին ունակութիւնը, որ կրնայ տեւել իր ամբողջ կենացը մէջ: Չափահասին համար յաւիտենապէս կորսուած կրնայ համարուիլ բազմակողմանի ընթերցանութեան մը ունակութիւնը ժառանգելու այս ոսկեղէն պատեհութիւնը: Հազարաւոր իմաստալից գրքեր թող գտնուին իր տըրամադրութեանը տակ, ներքին դրդում մը չը պիտի զգայ անիկա զանոնք կարդալու: Թերեւս տկար հետաքրքրութեան մը յագուրդ տալու համար ձեռք առնէ այդ գրքերէն մէկ քանին պարապութեան առթած ձանձրոյթը փարատելու համար թերեւս կարդալ իսկ սկսի զանոնք, բայց քիչ ատենէն պիտի ստիպուի դադարեցնել իր ընթերցումները, որովհետեւ անոնցմէ հաճոյք քաղելու ընդունակութիւնը չգտնուի իր մէջ, որովհետեւ յոգնութիւն եւ գլխու ցաւ մը կ'զգայ ամեն անգամ որ ջանայ իր ուշադրութիւնը կեդրոնացնել անոնց վրայ. այլեւս անհետացած է անոր մէջէն անչափախնդիր հետաքրքրութեան

այն զօրաւոր բնագոյն որ կրնայ տոկալ աշխատալից ընթերցմանց առթած անխուսափելի յոգնութիւններուն: Ոչ մէկ անհատ կրնայ իր ընթերցման ճաշակը զարգացնել առանց նախապէս աստիճան մը յոգնեցնելու իր միտքը: Չափաւոր բայց յաճախ կրկնուող ցաւերու մէջէն միայն կրնայ քայլ առ քայլ յառաջանալ մարդ իմացական հաճոյից: Չօրաւոր հետաքրքրութիւն մ'ունենալու է մարդ որ յօժարի այդ ցաւերուն տոկալով շարունակել իր աշխատալից ընթերցումները, եւ, հետեւապէս, աստիճանաբար զարգացնել իր ճաշակը: Պատանեկան շրջանին մէջն է որ իր զարգացման բարձրագոյն կէտին կը հասնի անչափախնդիր հետաքրքրութիւնը, ամեն տեսակ ծանօթութիւններ ամբարել ձգտող բազմակողմանի հետաքրքրութեան մը բնագոյնը. իսկ չափահասութեան շրջանին մէջ մեծապէս կը տկարանայ մարդու ընդհանուր հետաքրքրութիւնը, զօրաւոր կը մնայ միայն իր անձնական շահերուն կամ զբաղմանց հետ սերտ կապակցութիւն ունեցող խնդրոց մասին շատ նեղ ու միակողմանի հետաքրքրութիւն մը: Այս է ահա պատանին ու չափահասին միջեւ գտնուող անհուն տարբերութիւնը: Առաջինը ունի իր մէջ առողջ գրականութեան մը բազմակողմանի ընթերցումներէն հաճոյք քաղելու, եւ յաճախ կրկնուած ընթերցումներու միջոցաւ գրական զարգացեալ ճաշակ մը կամ կարդալու տեւական ունակութիւն մը կազմելու ներքին անհրաժեշտ պայմանը, իսկ երկրորդը զուրկ է անկէ: Արտաքին նպաստաւոր միջավայրը անկարող է առանձինն ունէ զարգացում շնորհել մեզ, եթէ չունինք անոր ազդե-

ցութեամբը գործելու պատրաստ ներքին դր-
դումներ կամ ընդունակութիւններ, կրնայ մարդ
մեծ գետի մը եզերքէն անցնիլ, բայց ջուր չպի-
տի խմէ անկէ եթէ ծարաւի ներքին դրդումը
գոյութիւն չունի իր մէջ այդ պահուն: Նոյնպէս
ալ կրնայ մարդ ճոխ գրադարանի մը հազարաւոր
գրքերը ունենալ իր առջեւ, բայց չպիտի կարդայ
զանոնք եթէ հետաքրքրութեան ներքին դրդում
մը չզգար իր մէջ: Ո՛չ. հանրային գրադա-
րաններու միջոցաւ չենք կրնար ժողովուրդի մը
մէջ բազմակողմանի ընթերցումներու զարգաց-
եալ ճաշակ մը յառաջ բերել, եթէ դպրոցին մէջ
արդէն իսկ չենք սկսած այդ գործին:

Գիտակցութիւն ժառանգելու միակ պայմանն
է շարունակական հաղորդակցութիւն մ'ունենալ
քաղաքակրթութեան հետ, եւ դպրոցն է այն
միակ հաստատութիւնը որ պիտի կրնայ այսպիսի
կենսական հաղորդակցութեան մը կարողութիւնը
յառաջ բերել անյատին մէջ:



ՀԱՄԵԿՐՈՒԹԵԱՆ ԵՂՈՒՄԸ

1

Երկու հակառակ տպաւորութիւններ կ'ստա-
նանք ուրիշ անձերու հետ ունեցած մեր յարա-
բերութիւններէն.—անոնցմէ ոմանք հաճոյք կ'առ-
թեն մեզ, իսկ ուրիշներ՝ ցաւ կամ տհաճութիւն:
Մեզի հաճոյք առթող անձանց ընկերակցութենէն
կ'ախորժինք բնականաբար, իսկ տհաճութիւն
պատճառողներէն կը խորշինք ընդհակառակը:
Այս երկու զգացումներն ալ անձնասիրական են
հաւասարապէս: Այս ինչ անձին ընկերակցութե-
նէն կ'ախորժիմ, եւ մինչեւ անգամ տեսակ մը
սէր կը տածեմ անոր վրայ, որովհետեւ իմ անձիս
գոհունակութիւն կամ երջանկութիւն կը պատ-
ճառէ ան: Ինծի համար նշանակութիւն չունին
այդ անձին հոգերն ու ցաւեր, յոյսերն ու երազ-
ներ. չեմ մասնակցիր ես անոր զգացումներուն,
այլ պարզապէս կը նկատեմ զանիկա իբր գործիք մը
հաճոյառիթ զգացումներ արթնցնելու իմ մէջս:
Այնչափ բացակայ է համակրութեան զգացումը
այսպիսի անձնակերպոն սէրէ մը, որչափ բացա-
կայ է տհաճութենէ կամ ատելութենէ: Այսպիսի
զուտ անձնասիրական բնոյթ մ'ունի բարեկամի,
ընտանիքի կամ ազգի սէր կոչուած զգացում-
ներուն մեծամասնութիւնը:

Ուրիշի մը տրտում դէմքը եւ կամ արցունք-
քի կաթիլը կրնայ ցաւ կամ տհաճութիւն յառաջ

բերել մեր սրտին մէջ, մինչդեռ անոր զուարթ ու ծիծաղկոտ դէմքը ուրախութիւն կրնայ տարածել ընդհակառակը: Ուստի կ'աշխատինք այդ «ուրիշին» ցաւը փարատել կամ զանհետեցնելու համար, ոչ թէ որովհետեւ անոր երջանկութիւնը ինքնին ունէ արժէք ունի մեզ համար, այլ որովհետեւ անոր ցաւը տհաճութիւն կը պատճառէ մեզի, իսկ երջանկութիւնը՝ հաճոյք: Ներկայ դրականութիւնը բազմաթիւ օրինակներ կ'ընծայէ մեզ այսպիսի անձնակերպոն—բարեսիրտ անձերու: Շատ գործովասիրտ է Թայթօ Մէլէման. զգուշութեամբ կը կոխէ իր քայլերը, որպէսզի չըլլայ թէ միջատ մը ճմլէ իր ոտքերուն տակ՝ ժամեր կը վատնէ պզտիկ գիւղացիի մը լացերը հանդարտեցնելու համար, որովհետեւ ամեն տեսակ ցաւի ծածկուելը կ'ուզէ իր աչքերէն: Բայց այդ նոյն գործովալից անձը՝ իր անասնական ցանկութեանց գոհացում տալ կարենալու համար՝ անխղճօրէն կը մատնէ իր կինը, իր հայրը ու իր հայրենիքը: Ուրիշի մը ցաւերը լոկ մեղմացնել ջանալով՝ անոր համակիր եղած չենք ըլլար բնաւ: Կրնայ մէկը ամեն տեսակ բարեսիրական գործնէութեանց մասնակցիլ, և նոյն ատեն զուրկ ըլլալ համակրութեան զգացումէն: Անձնասէրն ալ կրնայ մեծ բարեգործ մ'ըլլալ: Թշուառութեան առթած տհաճելի զգացումներէն իր անձը փրկելու շարժառիթով կրնայ մէկը ամեն տեսակ զոհողութիւններ ընել աշխարհի երեսէն չարիքը պակսեցնելու համար, և այսպիսի անձնասէրներու շարքին կը պատկանին ամեն ազգի մէջ երեւցող մարդասէրներուն բաւական մէկ մեծ մասը:

Ուրիշի մը համակիր ըլլալ կը նշանակէ բուն իսկ անոր սրտին մէջ յուզուող զգացումներուն մասնակցիլ, անոր երջանկութիւններուն ինչպէս վիշտերուն: Կ'ուզենք շեշտել հոս «երջանկութիւններուն» բառը, որովհետեւ իր նշանակութեան կէսը կորսնցուցած կ'ըլլայ «համակրութիւն» բառը, երբ ուրիշի մը ցաւակից ըլլալու իմաստով միայն գործածուի: Ուրախութիւն արտայայտելու համար հնարուած բառերէն թուով աւելի են ցաւ արտայայտող բառերը, կ'ըսէ Գերմանացի տաղանակարգ հոգեբանը Ունտթ, և լեզուի մէջ գոյութիւն ունեցող ցաւի նշանակներուն այս առաւելութիւնը ցոյց կ'ուտայ թէ մարդկային բնութեան մէջն ալ ընդարձակագոյն տեղ մը կը գըրաւէ ցաւի զգացումը, ու աւելի ճիւղաւորուած է: Անգլիերէն լեզուի մէջ խնդակցութիւն արտայայտող բառ մը չգտնուիր, կ'ըսէ Ամերիկացի օրիորդ հոգեբանը Քալքին, հետեւապէս Գերմաներէն բառ մը գործածել կ'ստիպուինք այդ գաղափարը արտայայտելու համար: Մարդկային բնութեան թերի մէկ կողմին պատկերացումն է Անգլիական լեզուի այս պակասը, կը յարէ նոյն հեղինակը. աւելի դիւրին է մեզ համար վշտակցիլ ուրիշին քան թէ խնդակցիլ, աւելի դիւրին՝ լալ բարեկամի մը թշուառութեանը վրայ քան թէ մասնակցիլ անոր երջանկութեանը, անհունապէս դիւրին է մխիթարել վշտացեալը քան թէ արձագանք տալ ուրախ սրտի մը յոյզերուն:

Ցաւի զանազան տեսակներուն աւելի փորձա-

ուս եղած է մարդկային սեռը իր դարաւոր կե-
նաց մէջ քան թէ ուրախութեան, և ճիշդ ասոր
համար է որ իր ընկերներուն խնդակից ըլլալէ
աւելի ցաւակից ըլլալ սորված է: Բայց դէպի
երջանկութիւն կը դիմէ մարդկութիւնը: Ստու-
գապէս կը բազմապատկուի աշխարհի երջանկու-
թեան քանակը հոգեկան բոլոր զարգացումներուն
հետ, և ապագային մէջ ուրիշին խնդակից ըլլալ
այնքան դիւրին պիտի ըլլայ, որչափ ցաւակից
ըլլալը եղած է անցելոյն մէջ: Երբ ուրիշի մը
վշտակից ըլլանք, բնականաբար ամեն ճիգ ի
գործ կը դնենք անոր այդ վիշտը մեղմացնելու
կամ փարատելու: Այսպիսի համակրութեան մը
չնորհիւ միայն աստիճանաբար պիտի կրնան ջն-
ջուիլ աշխարհի թշուառութիւններն ու չարիքներ:
Բայց երբ մեզմէ բարձր անձի մը երջանկութիւն-
ներուն, երազներուն ու ձգտումներուն համա-
կրինք, հարկաւորապէս մեր մէջն ալ պիտի ըզ-
գանք հոգեկան այդ յուզումները: Այսպիսի հա-
մակրութեան մը շնորհիւ միայն աստիճանաբար
պիտի քաշուի մարդկութիւնը դէպի ազնիւ, եր-
ջանիկ ու կատարեալ կեանքը: Հա՞րկ է հոս ըսել
թէ առանց համակրութեան երկրորդ տեսակին
չատ տկար պիտի մնայ համակրութեան առաջին
տեսակն ալ: Հա՞րկ է ըսել թէ մեծ մարդոց
համակրիլ չգիտցող անձը զրկուած է իր սիրան
ու հոգին, իր ձգտումներն ու նկարագիրը, իր
ամբողջ կեանքը վեր քաշող բոլոր օրհնեալ ազ-
դեցութիւններէն: Անյուսալի վիճակ մ'ունի ար-
դարեւ այն ժողովուրդը որ չէ սորված դեռ
համակրիլ իր մէջ ապրող ներկայացուցիչ հոգի-
ներուն:

Շատ դժուարութեամբ ու յամբօրէն կ'անի
համակրութեան զգացումը մարդկային անհատին
մէջ, ինչպէս շատ դժուարութեամբ ու յամբօ-
րէն անձ է մարդկային ցեղին մէջ: Անձնասի-
րական զօրաւոր զգացումներով կ'սկսի մարդ իր
կեանքը, որոնք դիւրաւ տեղի չեն տար իրենց
հակառակող ոեւէ զգացման առջեւ: Անձնասի-
րական զգացումներուն մէջէն աստիճանաբար ու
մաքառմամբ միայն դէպի այլասիրութիւն կը
յառաջանայ ամեն զարգացող անհատ կամ ժո-
ղովուրդ:

Մեծ անձնասէր մըն է մանուկը. իր հան-
գիստն ու շահը միայն կը փնտռէ. հոգ չունի
բնաւ ուրիշներուն վրայ. իր անձն է իր ամբողջ
աշխարհը, որուն դոհացում տալու համար միայն
կուլայ ու ճչէ: Բայց երկար ատեն փակուած
չկրնար մնալ ան իր անձին նեղ սահմաններուն
մէջ: Կենաց տարբեր շրջաններուն հետ նոր ազ-
դեցութիւններ յաջորդաբար կուգան լայնցնելու
համար անոր սիրտը, ընդարձակելու համար անոր
սիրոյ աշխարհը, և այսպէս դէպի այլասիրու-
թիւն առաջնորդելու համար զանիկա: Մնողքի,
եղբօր ու քրոջ, խաղընկերներու և բարեկամներու,
սիրուհիի ու վերջապէս զաւակներու սէրեր յա-
ջորդաբար կուգան այլասէր հակի մը փոխել այդ
խսկզբան անձնասէր մանուկը: Կղզիացած կեան-
քով մը չապրիր այլեւս այդ անհատը. ընտանե-
կան ու ընկերական շատ մը սիրազօղ յարաբե-
րութիւններով կապուած է ուրիշներուն հետ:

Ալ իր անձը լուկ չէ իր խորհուրդներուն ու սիրոյն առարկան, ուրիշ անձեր ալ կան իրմէ դուրս որոնց հանգստութեանն ու երջանկութեանը համար պատրաստ է իր հանգիստն ու երջանկութիւնը զոհելու: Եւ ընտանեկան ու ընկերական այս սէրեր կուգան պատրաստել մարդուս սիրտը աւելի մեծ սէրերու ընդունելութեան. — կուգան տեղ պատրաստել մարդուս սրտին մէջ համայնքին սիրոյն համար, կուգան ամբողջ մարդկութիւնը իր մէջ բովանդակելու աստիճան մեծ սիրտ մ'ստեղծել անհատին մէջ:

Մեծ սրտեր արտադրել, որոնց մէջ արձագանգ կարենան գտնել ուրիշներուն ցաւերն ու տենչեր, որոնց մէջ կարենայ բարախել Ամբողջին սիրտը իր բոլոր յոյգերովն ու տառապանքներով. համակիր մեծ սրտեր արտադրել՝ այս է մարդկային կենաց դարաւոր տառապանքներուն նպատակը: Որովհետեւ համակիր մեծ սրտերն են որ մեծ նկարագրեր պիտի արտադրեն եւ մեծ նկարագրերն են բնութեան գլուխ գործոցները:

Բայց ամեն անհատի մէջ անխտիր տեղի չունենար համակրութեան այս ընդլայնումը, եւ ուստի անձնակեդրոն անձէն սկսեալ ամեն տեսակ աստիճանաւորումներ կը գտնենք մարդոց մէջ՝ մինչեւ կը հասնինք ամբողջ մարդկութիւնը իր մէջ ամփոփելու չափ լայն համակրութեան մը բարձրագոյն կէտին: Երբտասարդ մը կրնայ իր սիրունչւոյն միայն համակրիլ, անտարբեր մնալով բոլորովին զինք շրջապատող ուրիշ բազմութիւնէն: Սկսած օրիորդին՝ ճակտին վրայէն անցնող արեւմտեան ամենամիտքը ամպն ինկ, բայց

անզգայ կը մնայ ուրիշներուն հանդէպ. ուրախութեամբ կը լեցուի այդ միակ պաշտելի արարածին երջանկալից մէկ ժպիտը տեսնելով, մինչդեռ ոչ մէկ արձագանգ կրնան գտնել իր սրտին մէջ ուրիշ բազմութիւնէն երջանկութիւններն, յոյսերն ու ակնկալութիւններ:

4

Համակրութիւնը կը բազմապատկէ մարդուս անձը, որովհետեւ ուրիշներուն անձերն ալ իրենց ցաւերովն ու խնդութիւններով՝ կ'ապրին իր հոգւոյն մէջ, որովհետեւ իբրեւ իրենը կ'զգայ ան ուրիշներուն երջանկութիւններն ու տեսիլքներ: Համակրութեան զգացումն է որ իրարու կը մօտեցնէ անհատներն ու ազգեր, գործակցութեան ոգի մը կ'ստեղծէ անոնց միջեւ, ու այսպէս կարելի կ'ընէ քաղաքակրթութեան ծագումն ու զարգացումը: Համակրական զգացմանց զօրացումովը եւ ընդլայնումովը միայն պիտի կրնայ մարդկութիւնը իրապէս փրկուիլ զինքը տանջող բոլոր թշուառութիւններէն ու շարիքներէն, ու պիտի կրնայ վայելել ճոխ ու կատարեալ կեանքի մը պարգեւած ամբողջ երջանկութիւնները: Արդարութեան, երջանկութեան ու սիրոյ թագաւորութիւնը, որ դարերու երազն է եղած, այն աստիճան միայն կրնայ հաստատուիլ, երկրի վրայ, ինչ աստիճան որ մարդկութիւնը տիրանայ լուսաւորուած խորհուրդներէ առաջնորդուող համակրական լայն զգացումներու, այսինքն ունենայ մեծ մտքի մը միացած մեծ սիրտ մը:

ԾԱՌԱՅՈՒԹԵԼՆ ՆՇՆՆԵԿՈՒԹՒՒՆԸ

1

Աշխարհի բոլոր մեծ մարդոց կեանքի իտէալն է եղած ծառայել իրենց ընկեր արարածներուն: Բացարձակապէս անկարելիութիւն մը պիտի ըլլար մեր ներկայ քաղաքակրթութիւնը, եթէ ծառայութեան այս փրկարար սկզբունքը, այս բնազդական դրոշմը չտիրէր մարդկային սրտին: Բարձրագոյնը վար իջնելու է իրեն հետ վեր բարձրացնելու համար ստորնագոյնը: Ահա այն միակ պայմանը որուն գործադրմանը համեմատ փրկուած է ու պիտի փրկուի մարդկութիւնը իր անասնական անցեալէն, իր գազանային բնութենէն, իր ապականութիւններէն ու թշուառութիւններէն, միակ պայմանը՝ որուն գործադրմանը համեմատ իրականացած է ու պիտի իրականանայ ընկերական կատարեալ ու երջանիկ կեանքը, այսինքն մարդկային գոյութեան բարձրագոյն իտէալը, բանաստեղծին վսեմագոյն երազն, եւ կամ Բրիտանոնէական կրօնի քարոզած Երկնից Թագաւորութիւնը:

Բարձրագոյնը վար իջնելու է՝ իրեն հետ վեր բարձրացնելու համար ստորնագոյնը: Ուսուցիչը վար խոնարհելու է դէպի մանկան իմացական մակարդակը, իմաստասէրը վար իջնելու է իր խորհրդոց վսեմ բարձրութիւններէն, վար՝ հա-

սարակութեան տարտամ ու անորոշ խորհուրդներու քառսին մէջ, եւ քաղաքակրթիւնը ձեռք երկնցնելու է դէպի բարբարոսութիւն: Ի՞նչ է արդիւնքը: Բանաստեղծ մը կ'ըլլայ այդ փոքրիկ մանուկը սրտերը խանդավառող կամ գիտնական մը տիեզերքի գաղտնիքները խուզարկող: Կը ներշնչուի այդ հասարակութիւնը նոր խորհուրդներով, կը թոթուէ կը նետէ իր վրայէն անցեալին նախապաշարունակներու փոշին, ու նոր թափով մը աւելի հաստատ քայլեր կ'առնէ յառաջդիմութեան պողոտային վրայէն: Կը պատուի կոշտ կեղեւը այդ բարբարոսութեան և ճշմարիտ մարդկութիւնը կը յայտնուի անոր մէջէն, ինչպէս կը յայտնուի ծաղիկը սերմին կամ կաղնին խոզակին մէջէն:

Այսպիսի հայեցակէտէ մըն է ընդհանրապէս որ մարդիկ կը նային ծառայութեան վրայ, ու անհրաժեշտ կը համարին զայն ընկերական կենաց բարեկարգմանը համար: Բայց կայ ուրիշ հայեցակէտ մըն ալ, որմէ գիտուելով շատ աւելի նշանակալից) շատ աւելի վսեմ ու յափշտակիչ բան մը կը դառնայ ծառայութիւնը: Այդ բարձրագոյն հայեցակէտէն ծառայութեան վրայ ընդհանուր տեսութիւն մ'ընել պիտի ըլլայ ներկայ գրութեանս նպատակը:

2

Իրմէ խոնարհագոյն աստիճաններու մէջ գտնուողները բարձրացնել ջանացող անձը ինքն է որ ամենէն աւելի կը բարձրանայ: Անձ մը որ

իր ազնուագոյն խորհուրդներն ու զգացումները դուրս կը թափէ կեանքի բոլոր գործնէութեանցը մէջէն՝ լուսաւորելու, սփոփելու ու երջանկացնելու համար ուրիշները, ինքն է որ ամենէն աւելի կը լուսաւորուի, կ'սփոփուի ու կ'երջանկանայ: Գեղեցկութեան նոր իտէալներ կը շողան արուեստագէտին յափշտակեալ աչքերուն առջեւ՝ երբ արդէն իսկ ունեցած իր իտէալները կը մարմնացնէ տաղի մը կամ արձանի մը մէջ ու կը նուիրէ մարդկութեան: Իր աշակերտին զարգացմանը համար ճշմարտապէս աշխատող ուսուցչին միտքն է որ ամենէն աւելի կը ճոխանայ ու կ'ընդլայնի: Խորհրդոյ նոր ովկիանոսներ կը ծփան իմաստասէրին մտացը մէջ՝ երբ արդէն իսկ ունեցած իր խորհուրդները կը տարածէ ընկերութեան մէջ: Ծառայութիւնը կրկնակի յառաջդիմութիւն մը կ'արտադրէ այսպէս. յառաջդիմութիւն մը՝ ծառայութեան առարկայ եղող ընկերական ստորնագոյն խաւերուն մէջ, եւ յառաջդիմութիւն մը նաեւ՝ ծառայողներու բարձրագոյն խաւերուն մէջ: Վերջինն է ամենէն օգտաւէտ յառաջդիմութիւնը, որովհետեւ ռազմիրան է անիկա բոլոր ուրիշ երկրորդական յառաջդիմութեանց, որովհետեւ բնութեան իմաստուն մէկ կարգադրութեանը համեմատ վերջինը չկրնար գոյութիւն ունենալ առանց արտադրելու նաեւ առաջինը:

Կատարելութեան իտէալը աստիճանաբար իրագործել է կեանքի նպատակը, ու ոչ թէ երջանիկ ըլլալ: Բայց ամեն տեսակ կատարելութեան երջանկութիւն մըն է կցուած անխղելօրէն: Երջանկութիւնը անխուսափելի հետեւանքն

է կատարելութեան: Աշխարհի վրայ ուրիշ ոչինչ կրնայ ամենադոյզն երջանկութիւն մ'իսկ առթել մարդկային սրտին. կեանքի արտայայտումին մէջ կը կայանայ անիկա, այսինքն կեանքի գործնէութիւններուն՝ որոնք կարապետներն են կատարելութեան: Գոհունակութիւն մը կ'զգայ ամեն կեանք երբ միջոցը կ'ունենայ իր մէջը գտնուած Փիզիքական, իմացական եւ բարոյական մէկ ոյժը արտայայտելու: Ապրիլ կը նշանակէ արտայայտուիլ, արտայայտուիլ կը նշանակէ գործել՝ մտքով ու մարմնով, եւ գործել կը նշանակէ կատարագործուիլ ու երջանիկ ըլլալ: Ծառայութիւնն է ճոխագոյն արտայայտումը եւ, հետեւապէս, միակ պայմանը երջանկագոյն կենաց: Այն ատեն միայն երջանիկ է բանաստեղծը երբ կրնայ իր յոյսերն ու երազները թուղթերու մէջ ծրարած ցրուել աշխարհիս չորս ծայրերը. այն ատեն միայն երջանիկ է ուսուցիչը երբ կրնայ իր միտքն ու հոգին զեղուլ աշակերտին հութեանը մէջ. այն ատեն միայն երջանիկ է գիտնականը երբ աստեղազարդ երկնից կամ ծաղկագեղ հովտին մէջ գտած իր մէկ ճշմարտութիւնը դուրս կրնայ ցոլացնել իր մտքէն ճառագայթաբազակ, եւ այն ատեն միայն երջանիկ է մարդ երբ իր մէջը գտնուած ռեւէ ազնիւ բան դուրս կրնայ թափել խօսքերու կամ գործերու մէջ մարմնացուցած, երբ իր ամենէն խանդավառ զգացումները, մանաւանդ իր սէրը կրնայ թափել զաւկի մը կամ ծնողքի մը, սիրուհիի մը կամ բարեկամի մը, մարդու մը կամ Աստուծոյ մը առջեւ: Բարձրագոյն երջանկութիւնը չեն ճաշակած բոլոր անոնք որ արտայայտելու արժանի ազնիւ բան մը

չունին իրենց մէջ, ինչպէս իծնէ կոյրը չկրնար ճաշակած ըլլալ գոյներու վեհաշուք գեղեցկութիւնը, կամ խուլը՝ ներդաշնակութեան զգլխիչ հրապոյրները:

3

Բանաստեղծական թռիչներ կ'առնէ Հէնրի Տրմընտ, երբ իր «Վերելք Մարդոյ» անուն գրքին ամենէն գեղեցիկ գլուխներէն մէկուն մէջ Մօր բնաշրջումը ներկայացնել կը փորձէ: Մեզմէ քիչեր խորհած են թէ ի՞նչ հզօր ազդեցութիւն մ'ունի զաւակը մօր մը նկարագրին կազմակերպմանը գործողութեանց մէջ: Անգլիացի Ուըրտսվըրտ բանաստեղծը Մանկութեան ուղղած իր սքանչելիօրէն գեղեցիկ ոտանաւորին մէջ երբ «Զաւակը հայրն է մարդուն» յայտարարեց, մեծ ճշմարտութիւն մըն էր որ երեւան կը բերէր իբր բանաստեղծական ներշնչում մը լոկ, ինչ որ ճոն Թիսք Ամերիկացւոյն թողուած էր հաստատել գիտական փաստերով: Սորհած էք երբէք թէ առանց մշտակայ հսկողութեան ու հոգատարութեան կարօտող մանկական այդ շրջանին՝ աշխարհի վրայ չպիտի երեւէր բնաւ Մայր կոչուած երկնային այն արարածը, սիրոյ ու գորովի, համբերութեան ու անձնուիրութեան այն մարմնացեալ հրեշտակը: Մանկութեան շրջանին բազմապիսի պէտքերն ու կարօտութիւններն, վտանգներն ու տկարութիւններն են որ ստիպած են մայրը հսկել միշտ իր զաւակին վրայ, համբերել անոր տուած նեղութիւններուն, զոհել իր քունն ու

հանգիստը անոր հանգստեանը համար եւ գուրգուրալ անոր վրայ միշտ: Համբերութեան ու անձնազոհութեան այս դարաւոր գործնէութիւններն են որ աստիճանաբար արմատանալով իր բնութեանը մէջ՝ յառաջ են բերած մայրական նկարագիրը, այսինքն բնութեան գլուխ գործոցը: Զաւակն է որ Մայրը կը ծնանի:

Որչափ արհամարական զգացումներով կը նայինք յաճախ մարդկութեան տկար ու անկեալ անդամներուն վրայ: Որչափ յաճախ ընկերութեան բեռները կը նկատենք աշխարհի հիւանդներն ու աղքատներ, տգէտներն ու զրկեալներ: Անիրաւ ենք բոլորովին մեր այս դատողութիւններուն մէջ. աշխարհի աւելի բան կուտան անոնք քան կ'ընդունին: Չենք կրնար շնորհակալ ըլլալ աշխարհի թշուառութիւններուն, զրկանքներուն կամ նախապաշարմանց համար. բայց ո՞վ կրնայ այնքան կոյր ըլլալ որ չտեսնէ թէ զանոնք բառնալու առանձնաշնորհումը ամենէն թանկագին օրհնութիւնն է որ կրնայ շնորհուիլ մարդկութեան: Վասնզի ի՞նչ բան է որ կ'արտադրէ կեանքի բարձրագոյն գործնէութիւնները, որ կը լայնցնէ ու կ'ազնուացնէ սիրտը, որ կ'ստեղծէ աշխարհի ամենէն զմայլելի նկարագիրները, եւ որ կենդանի ու զարգացուն կը պահէ ընկերութիւնը, եթէ ոչ մարդկութեան անկեալ մասին կանգմանը համար եղած ջանքը: Բարոյագիտութիւնը «պարտականութիւն» անուամբ մկրտած է մեզմէ նուազ բարեկեցիկ վիճակաց մէջ գտնուող անձանց օգնելը: Ո՛չ. պարտականութիւն մը լոկ չէ այն, առանձնաշնորհում մըն է, ամենէն թանկագինը որ կրնայ մարդ ունենալ իր

կեանքին մէջ: Պարտականութեան զգացումը կ'ստիպէ զմարդ բարիք գործելու ու այսպէս կը կապտէ զանիկա այդ բարի գործին արտադրելիք ամենէն քաղցր հաճոյքներէն: Առանձնաշնորհումը զգացումը հոգի կուտայ գործին. դուրսէն իր վրայ դրուած հարկ մը չզգար անհատը, այլ ինքնաշօթար ազատութեամբ կը գործէ, ու այսպէս ընդունակ կ'ըլլայ վայելելու այնպիսի հաճոյքներ որոնք չես գիտեր ո՛ր երկինքներէն կուգան: Ու՛ր պիտի մնային մարդկութեան փառքն ու պատիւը կազմող հոգեկան բոլոր վեհ ձիրքերն ու ընդունակութիւններ, սրտի այն փափկացում ու ազնուացում, նկարագրի այն բարձրութիւն, եթէ մեզի հետ չունենայինք տուրքէտն ու տկարը, հիւանդն ու թշուառը: Ո՛ւր պիտի մնար կրօնքը, հոգւոյ այդ գեղազմայլ բողբոջաւորումը, եթէ միջոցը չգտնուէր Աստուծոմէ դրկուած ներշնչումները մարմնացնել բարի ու առաքինի գործերու մէջ: Ծնորհապարտ զգանք զմեզ օգնութեան կարօտող մեր եղբայրներուն: Չեմ գիտեր ո՛ր գիտունն էր որ ըսաւ. ճշմարտութիւնը փնտռելն ու գտնելը նախընտիր կը համարիմ քան բուն ճշմարտութիւնը: Նոյնքան իրաւացի է ըսել թէ տգիտութենէ ու թշուառութենէ աստիճանաբար ազատուիլ եւ ուրիշները ազատել կը նախընտրեմ քան թէ բացակայութիւնը անոնց: Ա՛հ, անբացատրելի բան մը կայ այս չարիքները աշխարհէն բառնալու վսեմ գործին մէջ, որ նշանակութիւն ու արժանիք կուտայ մեր կեանքին: Երկինքներու հետ չպիտի ուզէինք փոխել այն հաճոյքը որ կ'ունենայ մարդ երբ տեսնէ տգիտութեան աստի-

ճանական անհետացումը, որ աղբիւրն է բոլոր սուրիչ չարիքներուն: Ընկերութեան հոգեկան բնաշրջումին փառաւոր տեսիլքը շատ աւելի յափշտակիչ է մեզ համար քան եթէ սկիզբէն անփոփոխ բան մը ստեղծուած ըլլար անիկա: Շատ աւելի հրապուրիչ տեսարան մըն է կոկոնին կամաց կամաց բացուիլն ու դէպի կատարելութիւն դիմելը քան թէ աճումէ դադարած կատարեալ ծաղիկը:

4

Գիտակցութեան աստիճանական զարգացումներուն կը հետեին մարդկային սեռին ու անհատին համակրական զգացմանց ընդլայնումները, եւ հետեւապէս նաեւ ծառայութեան յարաձուն գործնէութիւններ: Ուրիշ բան չէ հոգին եթէ ոչ ամբողջութիւնը մարդուս զգացումներուն եւ խորհուրդներուն, եւ ուրիշ բան չէ ծառայութիւնը եթէ ոչ կեանքի յարաբերութեանց մէջ մարմնացումը մարդուս այլասիրական զգացմանց ու խորհրդոց: Ծառայութեամբ իրապէս կը բազմապատկենք մեր կեանքը, ինչպէս համակրութեամբ կը բազմապատկենք մեր հոգին: Առանց ծառայութեան անկարելի է մարդկային կենաց ճոխացումն ու ազնուացում: Կ'արժէ ամեն օր կրկնել հոգեկան կենաց այս մեծ օրէնքը: Դուրս ելնելու է մարդ իր ԵՍ ին նեղ սահմաններէն, դուրս՝ ընտանեկան ու հանրային կենաց ռնդարձակ ասպարէզներուն մէջ, եւ համակրութեան ու ծառայութեան կապերով միանալու է

մարդկային Ամբողջին հետ: Իր անձին բոլորտի-
քը դառնալու չեն մարդուս զգացումները, այլ
տարածուելու են ուրիշներուն վրայ: Անհատա-
կան կենաց կատարելագործման ամենէն վստա-
հելի աստիճանացոյցն է գործօն համակրութեան
մը խորութիւնն ու լայնութիւնը, եւ իր մատու-
ցած ծառայութիւններուն մեծութիւնն ու ըն-
դարձակութիւնը:

Ով որ փրկիչ մը չէ եղած, չկրնար փրկուած
մէկը ըլլալ նաեւ: Ընկերաբան քարոզչէ մը
վերջերս լսած մեր այս նշանակալից խօսքը ար-
ձագանգն է միայն Գրիստոսի այն յայտարարու-
թեան թէ ով որ իր անձը կը կորսնցնէ պիտի
զտնէ զանիկա: Մարդկային կենաց ամբողջ
փիլիսոփայութիւնն է ամփոփուած այս կարճ
նախադասութիւններուն մէջ: Փրկութեան միակ
պայմանն է ծառայել ուրիշին, փրկել ուրիշը:
Փրկուելու համար աշխարհ եկած ենք ամենս
ալ.—փրկուելու անցեալ վայրենական կեանքէ մը
ժառանգած մեր ստորին միտումներէն ու ձգ-
տումներէն, փրկուելու մեր անասնական կիրքերէն
ու ցանկութիւններէն, փրկուելու մեր անձնասի-
րական նեղ խորհուրդներէն, զգացումներէն ու
գործերէն, փրկուելու՝ մէկ խօսքով՝ մեր մեղ-
քերէն: Անցելոյն անասնական կեանքէն դէպի
ապագայ աստուածային կեանքը յառաջանալու
համար աշխարհ եկած ենք ամենս ալ. անցեալէն
դէպի ապագան, ստորինէն դէպի բարձրագոյնը,
անասնականէն դէպի աստուածայինը եղած հոգե-
կան շարժումներն են որ աստիճանաբար կ'իրագոր-
ծեն մարդկային սեռին փրկագործութեան վսեմ
իտէալը: Բայց անկարելի է որ փրկագործութեան

այս մեծ հրաշքը կատարուի մեր կեանքին մէջ,
անկարելի է որ մեր մէջ գտնուող անձնասէր,
անիրաւ, ատող, նախանձոտ ու կռուասէր Մար-
դը, կիրքերով ու ցանկութեամբ լեցուն Անասուն
—Մարդը, փոխուի անձնուէր, արդար, սիրող ու
համակրող Մարդուն, ճշմարտին ու Բարւոյն
իտէալներովը յափշտակուող Աստուած — Մար-
դուն, եթէ չծառայէ ուրիշին, եթէ չնուիրուի
ուրիշը բարձրացնելու եւ ազնուացնելու, ուրիշը
փրկելու եւ աստուածացնելու վսեմ գործին:
Գործը միայն կրնայ փրկել զմեզ: Բաւական չէ
լայն խորհուրդներ ունենալ, բաւական չէ ազնիւ
զգացումներով լեցուիլ, գործերու մէջ մարմին
առնելու են այդ լայն խորհուրդներն ու ազնիւ
զգացումներ. ծառայութեամբ պտղաբերելու են
անոնք: Այն ատեն միայն մեր նկարագրին հաս-
տատուն մասերը կազմած կ'ըլլան մեր հոգւոյն
ներշնչումները, այն ատեն միայն մեր ջղային
դրութեան վրայ դրոշմուած կը մնան անոնք ու
կը կառավարեն մեր կեանքի ապագայ գործնէու-
թիւնները, երբ արտայայտուին, այսինքն երբ
դուրս ելլեն մեր ձեռքերէն կամ մարմնոյ ուրիշ
անդամներէն իբր գործ: Մեր ապահով ժառան-
գութիւնը չէ եղած տակաւին հոգեկան ոեւէ
ազնիւ յատկութիւն, ոեւէ խորհուրդ կամ զգա-
ցում.—արդարութիւն կամ գութ, համակրութիւն
կամ սէր.— եթէ պատեհութիւն չէ գտած
կրկին եւ կրկին յայտնուելու մեր կատարած
գործերուն մէջ: Գործն է որ նկարագրի պիտի
փոխէ մեր հոգեկան միջնորտին մէջ տարածուող
զեղեցիկ խորհուրդներն ու իտէալներ, ինչպէս

տերեւներուն գործնէութեամբը ծառի մը բունին ու ճիւղերուն կը փոխուին մթնադրարի մէջ սփռուած կազեղէն նուրբ մարմինները: Փրկուած ըլլալ եթէ կը նշանակէ Անասուն—Մարդէն Աստուած—Մարդուն փոխուած ըլլալ, եթէ կը նշանակէ արդարութիւն, համակրութիւն ու սէր մարմնացնող նկարագրի մը տիրացած ըլլալ, երկրի վրայ կամ երկնից մէջ ծառայութեանէն զատ չկայ փրկութեան ուրիշ ոեւէ միջոց: Անձը գտնելու միակ պայմանն է նուիրել զանիկա ուրիշներու: Կ'ուզե՞ս ունենալ գեղեցիկ նկարագիր մը, կ'ուզե՞ս իրագործել այն նպատակը որուն համար տշխարհ եկած ես, որուն համար ամբողջ բնութիւնը աշխատած է անհաշուելի դարերէ ի վեր, որուն իրագործմանը ձգտած են, կը ձգտին ու յաւիտենապէս պիտի ձգտին պատմութեան բոլոր յառաջդիմական շարժումները, կ'ուզե՞ս փրկուիլ, այսինքն աստիճանաբար բարձրանալ հոգևով, աստիճանաբար բնաշրջուիլ, աստիճանաբար աստուածանալ, կ'ուզե՞ս դէպի կատարեալ ու երջանիկ կեանքը յառաջանալ: Ծառայէ՛ ուրիշին: Նետուէ ընկերութեան մէջ, լուսաւորէ տգէտին միտքը, սրբէ վշտացեալին արցունքը, դարմանէ հիւանդն ու ախտաւորը, վերցուր ինկածը, պաշտպանէ տկարը, խնամէ որքն ու անօգնականը, եւ ուղիղ ճամբուն առաջնորդէ մոլորեալը: Բարի գործեր սփռէ չորս կողմդ, ինչպէս ճառագայթներ կը սփռէ արեւը: Եւ առաջին անգամ ջանքով ու դժուարութեամբ կատարուած այսպիսի գործեր բնութեանդ մէկ մասը պիտի կազմեն աստիճանաբար ունակու-

թիւներ դառնալով, ու անջնջելիօրէն քանդակուած պիտի մնան կազմութեանդ մէջ, եւ այն ատեն փրկուած ես այլեւս: Ծառայութեանէ զատ չկայ ուրիշ ոեւէ միջոց ազնիւ նկարագիր մը ժառանգելու: Ուրիշները փրկելէ զատ չկայ ուրիշ ոեւէ միջոց փրկութեան:



ԻՐԱԿԱՆՆԵՐ
ՈՒ
ԻՏԷԱԼԿԱՆՈՐ

1

Աչխարհի ամենամեծ բանաստեղծներէն
Կէօթէ, որ այնքան ճշմարտապէս կը վերաբերի
իտէալապաշտ դպրոցին որքան իրապաշտ, կը
սահմանէ իտէալը իբր կատարելութիւնը իրա-
կանին: Այս պարզ բայց լուսաւոր բացատրութիւ-
նը իր մէջ կ'ամփոփէ հաւատքն ու ներշնչումը
ոչ միայն ամեն դարու մեծագոյն արուեստագէտ-
ներուն, այլ նաեւ մեծագոյն խորհողներուն ու
մարդկութիւնը յառաջ շարժող մեծագոյն գոր-
ծիչներուն:

Իրականին կատարելութիւնն է իտէալը: Փոք-
րիկ սերմ մը կը գտնուի մեր առջեւ: Չնչին,
աննշանակ ու տգեղ առարկայ մըն է անիկա
երեւութապէս, բայց հրաշալիքներու ամբողջ աշ-
խարհի մը կարելիութիւնը ծածկուած կը գտնուի
այդ անշուք երեւութին տակ: Հոն ծածկուած
կը գտնուի ամբողջ ծառի մը կարելիութիւնը՝
իր բոլոր ճիւղերովն ու տերեւներով, իր բոլոր
ծաղիկներովն ու պտուղներով: Սերմին իտէալն
է այդ ծառը, իրագործումը անոր մէջ գոյու-
թիւնն ունեցող կարելիութեանց, եւ վախճանը
անոր ձգտումներուն ու գործնէութեանց: Չեւի,

կազմուածքի, ու մեծութեան անհուն տարբե-
րութիւններ կրնան գտնուիլ սերմին ու արտադր-
ուած ծառին միջեւ, բայց չկայ ճիւղ մը, չկայ
բողբոջ մը, չկայ պտուղ մը այս վերջնոյն վրայ
որ չըլլայ յայտնութիւնը առաջնոյն մէջ ծած-
կուած կարելիութեան մը: Ծառը՝ իր ամբողջ
հրաշակազմ յօրինուածութեամբն ու հրապուրիչ
գեղեցկութիւններով՝ կատարումն է լոկ սեր-
մին անկատար կազմուածքին վրայ գրուած մար-
գարէութեանց: Իրականին կատարելութիւնն է
լոկ իտէալը:

Կեանքի ներկայ իրականութեանց մէջ են
ծածկուած ապագային իտէալները, ինչպէս ներ-
կայ փոքրիկ սերմին մէջ են ծածկուած ապա-
գային ծաղիկներն ու պտուղներ: Ոչ մէկ խզում
կրնայ գտնուիլ իրականին ու իտէալականին մի-
ջեւ, այսինքն այն բաներուն որ կը գտնուին այսօր
մեր մէջն ու մեր շուրջը, և անոնց՝ որ գոյու-
թիւն պիտի կրնան առնել ամենէն հեռակայ ա-
պագային մէջն իսկ, որովհետեւ ներկային մէջ
գոյութիւնն ունեցող կարելիութեանց իրագոր-
ծումն է լոկ ապագան: Մանկան մէջն է ծած-
կուած չափահաս մարդը, ինչպէս խոզակին մէջ
կը ծածկուի հաստաբաւ կաղնին: Նախնական
ընկերութեան մը երեւութապէս անհրապոյր
ու քառասային վիճակէն ծնունդ առած է ներկայ
քաղաքակիրթ ընկերութիւնը՝ իր ամբողջ ընտա-
նեկան, կրօնական, քաղաքական, արուեստական,
գրական, ու գիտական հրաշալի գործնէութիւն-
ներովն ու արտադրութիւններով, ինչպէս փոք-
րիկ սաղմէն ծնունդ կ'առնէ այնքան հիանալի
յօրինուածութեամբ ու այնքան հրաշագործ

բնագրէներով օժտուած կենդանին : Անհուն տարբերութիւններ կրնան գտնուիլ մանկան ու չափահասին, և կամ վայրենիին ու քաղաքակիրթ անձին ունեցած նկարագրերուն միջեւ, բայց չը կրնար իրական հակասութիւն մը գտնուիլ անոնց միջեւ . վերջինը կատարելագործումն է լոկ առաջնոյն, աճումն ու զարգացումը՝ առաջնոյն մէջ գոյութիւն ունեցող կարելիութեանց, անխզելի ու շարունակական յայտնութիւնը առաջնոյն : Իրականին կատարելութիւնն է իտէալը :

Պէտք է ուժգնօրէն շեշտել այս ճշմարտութիւնը բոլոր անոնց որ իրականութեան մը խորը թափանցող մարգարէական տեսիլքներու հետ կը շփոթեն երեւակայութեան մէջ միայն գոյութիւն ունեցող անբանաւոր երազներն ու ցնորական տեսիլքներ : Բացարձակապէս վնասակար է ռեւէ իտէալ որ չէ հաստատուած ներկայ իրականութեանց հաստատուն հիման վրայ : Այսպիսի կեղծ իտէալներու ազդեցութեամբն է որ տեսակ մը արհամարանքով կը նայի հանրութիւնը իտէալապաշտներուն վրայ, ու կը նկատէ զանոնք գործնական աշխարհէն զատուած, և անիրական երազներով յափշտակուած ոգիներ, օղակառոյց դղեակներ շինելով իրենց կեանքը անցնող ծոյլ յիմարներ : Այսպիսի կեղծ իտէալներու պատճառաւ է որ արուեստի ամենէն հրաշալի արտագրութիւնները ստեղծող, աշխարհի բոլոր զմայելի նկարագրերուն ծնունդ տուող, և մարդկային ամեն տեսակ յառաջդիմական շարժումներուն քարոզողական ոյժը կազմող իտէալը նկատուած է յաճախ իբր մէկ զբօսանքը երեւակայութեան, իբր մէկ արտագրութիւնը մտացա-

ծին ցնորքներու : Անցեալ դարուն մէջ Իրապաշտ Դպրոցին գոյց տուած այնքան խանդոտ գործնէութիւնը հակազդեցութիւնն էր գլխաւորաբար այսպիսի կեղծ ու վնասակար իտէալապաշտութեան մը : Ներկայ իրականութեանց մէջ իբր մարգարէութիւն գոյութիւն չունեցող մտացածին երազներն ու տեսիլքներ երբ կուգան յստակ խորհուրդի ու լայն տեսութեան տեղը գրաւել, այն ատեն ոչ միայն անխուսափելի, այլ օգտակար իսկ է իրապաշտութիւնը : Լոկ երազատեսներ ըլլալէ պիտի արգիլուին մարդիկ, քրջափ ատեն որ բանական միտք մը կը գործէ իրենց մէջ : Իրականէն դուրս չկայ իտէալական :

2

Բացարձակապէս սխալ է, սակայն, իտէալականէն անջատել իրականը, ինչպէս կը փորձէ ընել ընթացիկ Իրապաշտութիւնը : Սերմին մէջ իր ներկայ փոքրկութենէն ու տգեղութենէն անդին ոչինչ տեսնել կ'ուզէ անիկա, մինչդեռ բանաւոր ու ճշմարիտ իտէալապաշտութիւնը՝ այս ամեն ակներեւ իրողութիւնները տեսնելէ զատ՝ կը նշմարէ նաեւ անմիջական տեսողութենէ ծածկուած կարելիութիւններու աշխարհը, եւ կամ կէօթէի ուրիշ մէկ խօսքով՝ կը տեսնէ ԱՄԲՈՂՁ ԱՌԱՐԿԱՆ : Իրականութեան ամբողջութիւնը չներկայացնէր բնաւ այդ փոքր ու կարծր սերմիկը . ամբողջին փոքրիկ մէկ մասն է անիկա : Ըճմարիտ իտէալապաշտը ծաղկաղարդ ու պտղալից ծառը կը տեսնէ այդ փոքրիկ ու կարծր սեր-

մին մէջ, ապագայ կատարելագործեալ վիճակը՝ ներկայ այդ անկատար կեանքին մէջ, իտէալը՝ այդ իրականութեան մէջ կամ ամբողջը՝ այդ մասին մէջ:

Իրողութեանց Ֆիզիքական կողմը ու ներկան միայն տեսնող իրապաշտը բնական է որ ըլլայ նաեւ յուսահատ յոռետես մը: Անասուն մը կը դառնայ մարդ այսպիսի նեղ տեսութեան մը առջեւ, և ընկերութիւնն ալ շեղջակոյտ մը ապականութեանց: Ո՛չ. ուէ իրականութեան ամբողջութիւնը չգտնուիր այնչափ ներկային մէջ որչափ ապագային, այնչափ Ֆիզիքականին որչափ հոգեկանին մէջ: Իրականութեանց մակերեսային ու խիստ սահմանափակ մէկ մասը կրնանք տեսնել աչքերով միայն. երեւակայութեան տուած լայն տեսողութեամբն է որ պիտի կրնանք նշմարել իրողութիւնները իրենց ամբողջութեամբը: Անասուն մը լոկ չէ մարդ, ինչպէս ցոյց կուտայ մեզ ներկան. անոր անասնական բնութեանը, բոլոր իր ունեցած կիրքերուն, ատելութեանց ու ամեն տեսակ զարշիւ յատկութիւններուն մէջ ծածկուած կը գտնուի կարելիութիւնը ապագայ Աստուած—Մարդուն. — սիրող ու համակրող, արդարութեան, ճշմարտութեան ու գեղեցկութեան պաշտամունքներուն նուիրուած իտէալ մարդուն, ինչպէս փափկագեղ ծաղիկը կը գտնուի չոր ու ցամաք սերմին մէջ: Ապականութեանց շեղջակոյտ մը լոկ չէ ընկերութիւնը. անոր պարունակած բոլոր ապականութեանց և անիրաւութեանց մէջ ծածկուած է իտէալ—Ընկերութիւնը, գեղծումներով լեցուն բոլոր այդ կազմակերպութեանց մէջ ծածկուած է երկնից

Քաղաքորութիւնը: Ներկային մէջ ապագան, Ֆիզիքականին մէջ հոգեկանը, մասին մէջ ամբողջը, և կամ իրականին մէջ իտէալը տեսնելու անընդունակ անձինք, անընդունակ են նաեւ ներշնչման ու յառաջդիմութեան:

Ոչ մէկ բանի այնքան կը կարօտի մարդ որքան իր մէջը ու իրմէ դուրս գտնուող գոյութեանց ամբողջութիւնը տեսնելու այս կարողութեան: Այսօրը երէկէն ու վաղուանէ անջատ տեսնելու դատապարտուած մարդը անխուսափելիօրէն պիտի ըլլար նաեւ ամենէն յուսահատ յոռետեսը աշխարհի վրայ, որովհետեւ ոչ կարգաւորութիւն, ոչ բանաւորութիւն, եւ ոչ ալ յառաջդիմական շարժումներ պիտի կրնար անիկա նշմարել կենաց մէջ: Եւ սակայն այն մարդը որ Այսօրը անխղելիօրէն կապուած կը տեսնէ երէկուան ու վաղուան, և երէկն ու վաղն ալ՝ անցեալ ու ապագայ դարերուն, այն մարդը որ ամբողջը կը տեսնէ ներկային պարունակած փոքրիկ մասերուն մէջ, որ հոգեկան կողմը կը նշմարէ իր աչքերուն տեսած Ֆիզիքական իրողութեանց ետին, կրնայ բանաւոր ակնկալութեամբ մը ներշնչուած աշխատիլ որպէսզի շուտ իրագործուին ներկայ տգեղութեանց եւ ապականութեանց մէջ ծածկուած իտէալները գեղեցկութեան, արդարութեան, սիրոյ ու մաքրութեան: Ամենախղճալի արարածն է արդարեւ այն անձը որ չտեսներ իտէալական մասը իր կամ ուրիշներուն ունեցած ներկայ իրական կեանքին: Զկայ յոյս ու ներշնչում, չկայ յառաջդիմութիւն ու զարգացում այսպիսի գործնականապէս իրապաշտ անձի մը համար: Ներկայ իրականութեանց պարունակած

Իտէալները տեսնել ու անոնցմէ ներշնչուիլն է միակ պայմանը ազնիւ նկարագրերու ստեղծման:

3

Իտէալն է մարդկութիւնը դէպի յառաջ շարժող ոյժը: Գեղեցկութեան իտէալներ կը տեսնէ արուեստագէտը ու կը պաշտէ դանոնք. այս պաշտամունքին արտադրութիւնն է Գեղարուեստը: Արդարութեան իտէալներ կը տեսնէ քաղաքագէտը եւ ընկերութեան մէջ անոնց մարմնացումին կը նուիրէ իր կեանքը. այս նուիրման արտադրութիւններն են քաղաքական դրութեանց աստիճանական բարեկարգումներ: Ճշմարտութեան իտէալներ կը մագնիսեն գիտնականին հոգին, որոնց կը հետապնդի իր մտաց ամբողջ կորովովն ու մարմնոյն ամբողջ ուժերովը. այս հետապնդումներէն կը ծնանի ու կ'աճի Գիտութիւնը: Եւ Սիրոյ իտէալը կը փայլի ամեն մեծ հոգիի վերեւ, որուն հասնելու եւ անհատական ու ընկերական կենաց մէջ մարմնացնելու անձնագոհ ջանքերէն կը ծնին ու կը զարգանան մարդասիրական ամեն տեսակ հաստատութիւններ: Իտէալին առաքեալներն են բոլոր ազգաց ու ժամանակաց մարդասէրներն, արուեստագէտներն, բարեկարգիչներն, գիտնականներն ու քաղաքագէտներ:

Աստիճանաբար իրականութեան վերածուելով է միայն որ կրնայ աճիլ ու կատարելագործուիլ ունէ իտէալ: Երբ գրիչը ձեռք կ'առնէ բանաստեղծը ոտանաւոր մը գրելու, ապագայ այդ ոտանաւորին կատարեալ ծրագիրը չունի բնաւ իր

մտքին մէջ: Ամեն մէկ արտայայտուած խորհուրդ ուրիշ մը կը թելադրէ, եւ այսպէս յաջորդաբար յայտնուող խորհուրդներ յաջորդաբար կը մարմնանան ոտանաւորին մէջ: Աստիճանաբար կ'ստեղծուի ոտանաւորը. իւրաքանչիւր նախընթաց տող ետեւէն կը քաշէ կարծես իր յաջորդը: Իտէալն է ստեղծիչ ոյժը տողերու այս յաջորդական շարքին. ան է որ կ'ուղղէ ու կը կառավարէ ամբողջ ոտանաւորին ընթացքը եւ միութիւն կուտայ անոր մասերուն: Աւարտած ոտանաւորին մէջն է միայն որ կը գաննէք իտէալին ամբողջական յայտնութիւնը: Այսպէս է գեղարուեստական ունէ արտադրութիւն: Իտէալն է անոնց ամենուն ալ պատճառն ու վախճանը: Մղիչ ուժերու միջոցաւ չկատարուի աշխարհի յառաջդիմութիւնը, այլ քարոզողական զօրութեանց միջոցաւ, եւ իտէալներն են իմացական աշխարհի այդ մեծ ուժեր, որոնց ետեւէն կը քաշուի ամբողջ քաղաքակրթութիւնը՝ իր կրօնքներովն ու գեղարուեստներով, իր գիտութիւններովն ու ընկերական կազմակերպութիւններով: Իտէալականին աստիճանական իրագործումներն են քաղաքակրթական բոլոր յառաջդիմութիւններ:

Այսպէս կը կազմուի ու կը զարգանայ նաեւ անհատական կամ հանրային նկարագիրը: Անզուսպ իղձ մը կայ ամեն առողջ անձի մէջ արտայայտուելու եւ ասով ինքզինքը կատարելագործելու: Ետեւէն եղած մղման մը ազդեցութեամբ չէ որ կը յառաջանայ անհատը հոգեկան կենաց մէջ, այլ առջևէն եղած քարոզողական զօրութեան մը ազդեցութեամբ: Դէպի կատարելութեան իտէալը կը դիմէ մարդկային ամեն

կեանք: Կատարեալ մարդուն պատկերը կը գտնուի պատանուոյն հոգիին մէջ, եւ կատարելութեան այդ իտէալականն է որ իր ետեւէն կը քաշէ պատանիին կեանքը, ինչպէս բանաստեղծին իտէալն էր որ իր ետեւէն կը քաշէր ամբողջ ոտանաւորը: Կեանքի իտէալն է որ աստիճանաբար կը յայտնուի պատանիին իրական կենացը մէջ եւ աստիճանաբար կ'ստեղծէ անոր նկարագիրը: Աւարտած կեանքին մէջն է որ կը գտնենք անձի մը ունեցած իտէալներուն իրականացումը: Այսպէս է նաեւ հանրային կեանքը: Ան ալ կը շարժի ոչ թէ ետեւէն եղող մղման մը միջոցաւ, այլ առջեւէն եղող քարշողական զօրութեամբ մը, եւ հանրային կենաց կատարելագործման իտէալն է այդ զօրութիւնը: Իտէալն է հանրային կենաց պատճառն ու վախճանը, ան է որ կ'ուղղէ պատմութեան ընթացքը, ան է որ միութիւն կուտայ պատմութեան եւ որ աստիճանաբար կը շինէ ազգերու ճակատագիրը: Ոչ մէկ ազգ կրնայ իր պատմութիւնը գուշակել առաջուց, ինչպէս ոչ մէկ անհատ իր ապագայ նկարագիրը եւ ոչ մէկ բանաստեղծ իր ոտանաւորը: Աստիճան առ աստիճան կը յայտնուի իտէալը ազգի մը կենաց մէջ եւ աստիճան առ աստիճան կը գրէ անոր պատմութիւնը: Ազգի մը աւարտած պատմութեանը մէջն է որ իր իտէալական կենաց յայտնութիւնը պիտի կրնանք գտնել: Իտէալ չունեցող բանաստեղծը չկրնար արժանաւոր տաղեր շինել, իտէալ չունեցող անհատը ազնիւ ու զարգացուն նկարագիր ալ չկրնար ունենալ, եւ իտէալ չունցող ազգը չունի նաեւ պատմութիւն: Իտէալներու աստիճանաւորումներն են որ աստիճանաւորումներ յա-

ռաջ կը բերեն անհատական կամ հանրային զանազան կեանքերու միջեւ: Բարձրագոյն իտէալներ ունենալ միակ պայմանն է յառաջդիմութեան, միակ պայմանը փրկութեան՝ իր լայն առումով:

4

Աստիճանաբար կատարուող մարգարէութիւն մըն է կեանքը, եւ այն է ճշմարիտ իրապաշտը որ չգոհանար այդ մարգարէութեան կատարմանը առաջնորդող վայրկենական մէկ վիճակը լոկ տեսնելով կամ նկարագրելով, այլ կը ջանայ մտնաւանդ ամբողջը տեսնել կամ նկարագրել, այնչափ եւ աւելի իբր մարգարէութիւն լոկ գոյութիւն ունեցող ծաղիկը՝ որչափ ներկայ սերմը, այնչափ եւ աւելի մարգարէական Աստուած-Մարդը՝ որչափ ներկայ Անասուն — Մարդը, այնչափ եւ աւելի երկնից Թագաւորութիւնը՝ որչափ ներկայ ապականեալ ընկերութիւնը: Բառին բուն նշանակութեամբը իտէալապաշտներն են, ուրեմն, ճշմարիտ իրապաշտները, որովհետեւ անոնք միայն կը ջանան տեսնել ամբողջ իրականութիւնը, մինչդեռ ինքզինքնին իրապաշտ կողմեր ներկան միայն կը տեսնեն ու կ'անտեսեն անկէ անհունապէս մեծ եղող ապագան, իրողութեանց Ֆիզիքական երեսը միայն կը տեսնեն եւ կ'անտեսեն անկէ անհունապէս նշանակալից եղող ներքնակողմը, առժամապէս գոյութիւն ունեցող իրագործուած մէկ փոքրիկ մասը կը տեսնեն ամբողջին, ու կ'անտեսեն անկէ ան-

Հուննապէս աւելի մեծարժէք եղող մարգարէական մասը: Իր անուան բացարձակապէս անարժան այսպիսի միակողմանի Իրապաշտութիւն մը մեծագոյն անէծքն է մարդկութեան, որովհետեւ Իտէալին քարչողական ուժովն է միայն որ դէպի բարի, երջանիկ ու կատարեալ կեանքը պիտի կրնայ յառաջանալ մարդկութիւնը իր անասնական պժգալի վիճակէն, եւ Իտէալին ուրացումը կը նշանակէ նաեւ անհետացումը քարչողական այս ուժին: Աշխարհի մեծագոյն օրհնութիւնն է Իտէալապաշտութիւնը, որովհետեւ ներկային եւ Ֆիզիքականին նեղ սահմաններէն անդին գտնուող իրականութիւնները, կեանքի մարգարէութեանց փառալից տեսիլքները, ամբողջին պսակը կազմող ամենէն թանկագին մասերը, Իրականին կատարելութիւնը եղող Իտէալը կը պարզէ մարդկութեան առջեւ:



Մ Ի Ջ Ա Վ Ա Յ Ր Ե Ի Ն Կ Ա Ր Ա Յ Ի Ր

1

Տասնեւիններորդ դարուն մէջ կիստարուած գիտական բազմաշխատ ուսումնասիրութիւններ շատ խորհրդաւոր իմաստ մըն են տուած «միջավայր» բառին: Անվիճելի իրողութիւն մըն է այսօր թէ տարբեր կլիմաներ, աշխարհագրական տարբեր դիրքեր, ջերմութեան ու լոյսի տարբեր աստիճաններ, սնունդի տարբեր տեսակներ ու քանակութիւններ մեծապէս կ'ազդեն բոլոր բոյսերուն ու կենդանիներուն վրայ և աստիճանաբար յառաջ կը բերեն անոնց մէջ տարբեր գործարաններ ու անդամներ, սեռեր ու տեսակներ, գոյներ ու ձևեր, և բնազդներ ու սովորութիւններ: Նոյնքան անվիճելի իրողութիւն մըն է նաեւ թէ տարբեր երկիրներ իրենց աշխարհագրական դրից, իրենց արտադրած հանքային, բուսական ու կենդանական զանազանութեանց, իրենց բնական տեսարաններու եւ կլիմայական փոփոխութեանց միջոցաւ մեծապէս կ'ազդեն ազգերու կենացը եւ յառաջ կը բերեն անոնց մէջ տարբեր զբաղումներ ու արհեստներ, տարբեր սովորութիւններ, Ֆիզիքական ու Հոգեկան տարբեր առանձնայատկութիւններ, որոնցմէ կը ծնանին գեղարուեստի, գրական-

նութեան, կրօնի եւ քաղաքական կաղմակերպութեանց բոլոր զանազանութիւնները:

Ըստեւած է թէ ծալլուած պատմութիւն մըն է աշխարհագրութիւնը. ամբողջ կէս դարու իմացական խանդոտ աշխատութիւններէն արտադրուած մեծ խորհուրդ մը կ'ամփոփէ իր մէջ այդ կարճ նախադասութիւնը: Ազգի մը բնակավայրն է որ կ'որոշէ անոր զգացմանց ու խորհրդոց միտումները, որ կը կառավարէ անոր ընկերական ու քաղաքական գործնէութիւնները, որ կ'ուղղէ անոր պատմական ընթացքը, եւ այսպէս կը վճռէ անոր ճակատագիրը: Ժամանակիս գիտական և իմաստասիրական խորհրդոյն բոլորովին անտեղեակ ըլլալու է մարդ, որպէսզի համարձակի այս ճշմարտութեան հակառակը պնդել:

Բաղդին մէկ քմահաճոյքը չէր որ զրկեց Միպերիան կամ Ափրիկէն քաղաքակրթութեան որորաններն ըլլալու փառքէն եւ շնորհեց զայն Միլազէտքի ու Եգիպտոսի նման երկիրներու: Ուէ քաղաքակրթութիւն չէր կրնար ծնանիլ Միպերիոյ հիւսիսային գաւառներուն նման անբերրի երկրի մը մէջ, ուր մարդիկ ստիպուած էին իրենց ոյժն սպառել օրապահիկ մը լոկ ճարելու համար, ուր ժամանակ չէին կրնար ունենալ անոնք իրենց մտքի պէտքերուն վրայ եւս խորհելու, եւ ուր՝ հողին անբաւական արտադրութեանց պատճառաւ՝ իրարու մօտ չէին կրնար հաստատել իրենց բնակութիւնները գիւղեր կամ քաղաքներ կազմելու համար, որոնց մէջ միայն քաղաքակրթութիւնը կրնայ բոյն դնել: Ուէ քաղաքակրթութիւն չէր կրնար ծնանիլ Ափրիկէի կեդրոնական մասերուն նման արեւադարձային երկիրներու մէջ, ուր բնութիւնը

այնքան առատ բուսականութեամբ մը կը հայթայթէ մարդու մարմնական բոլոր պէտքերը և աշխատութեան չստիպեր զայն: Բաղդին մէկ քմահաճոյքը չէր որ Միլերկրականն ըրաւ կեդրոնը անցեալ քաղաքակրթութեանց: Պատմութեան համար նուիրական այդ ծովը հական մէկ պայմանն էր յառաջդիմութեան. — անոր ալիքներն էին որ արկածախնդրութեան ոգին զօրացնելով իր եզերացը վրայ ապրող ազգերուն մէջ՝ խիզախ ու կորովի սիրտ մը տուին անոնց. անոր այդ ծիփանուտ տարածութիւնն էր որ ընդարձակ վաճառականութեան մը ստեղծումը կարելի ըրաւ զանազան առեւտրական ժողովուրդներու միջեւ, իրարու միացուց զանոնք յարաբերութեանց բիւր կապերով, ու լայնցուց անոնց սրտերը համաշխարհային համակրութեան մը վեհ զգացումովը: Այդ համատարած ծովն էր որ իրարու փոխանցեց տարբեր ազգերու սովորութիւններն ու արհեստներ, եւ քաղաքական ու ընկերական հաստատութիւններ, անիկա էր որ Արեւելքի ժողովրդոց երկար դարերու աշխատութեամբ արտադրած քաղաքակրթութիւնը փոխատնկեց Արեւմուտքի բարբարոս ցեղերուն մէջ: Ազգի մը բնական միջավայրին մէջ փնտռելու ենք իր պատմութեան նախնական տարրերը: Եգիպտոսն էր որ Եգիպտական պատմութիւնն արտադրեց, եւ Յունաստանն էր որ Յունական պանծալի քաղաքակրթութիւնը ծաղկեցուց իր վրայ:

Վերը արտայայտուած ճշմարտութենէն շլացած՝ անտես առնելու չենք, սակայն, աւելի կարեւոր սա ճշմարտութիւնը թէ բնական միջավայրի ազդեցութեանց հակազդող էակ մըն է մարդս, եւ թէ այս հակազդեցութիւններն են որ կը կազմեն իր կեանքը, կը գրեն իր պատմութիւնը ու կը վճռեն իր ճակատագիրը: Կրաւորական դիրք մը լոկ չգրաւեր մարդս բնական ազդեցութեանց առջեւ, այլ փոխադարձաբար ներգործող դիրք մը: Միջավայրը չկրնար դըրողմուկի մարդկային կենաց վրայ ճիշդ ինչպէս կնիք մը կը դրոշմուի մեղրամոմին վրայ, Հոգի մ'ունի մարդս, զանազան բնազդային միտումներով ու դրդումներով օժտուած Հոգի մը, որ իր այս ներքին ժառանգական յատկութեանց համաձայն զանազանութիւններ կը հաստատէ բնական միջավայրի գործնականապէս անթիւ ազդեցութեանց միջեւ ու ըստ այնմ ընտրութիւններ կը կատարէ, որ ներս կ'ընդունի իր այս բնածին փափաքներուն գոհացում տալու յարմար ազդեցութիւններն՝ իսկ կը մերժէ անյարմարները: Եւ որչափ ալ ընդհանուր նմանութիւն մը գտնուի մարդկային տարբեր ցեղերու հոգեկան բնածին յատկութեանց միջեւ, դարձեալ տարբերութեանց գործնականապէս անթիւ շարք մը կը ծածկուի միշտ այդ ընդհանուր նմանութեանց ետին: Տարբեր ցեղերու՝ ինչպէս տարբեր անհատներու՝ միջեւ գտնուող հոգեկան այս տար-

բերութիւններն են ահա որ իրենց համապատասխան կերպերով կը հակազդեն միջավայրի ազդեցութեանց, եւ այսպէս իրարմէ բոլորովին տարբեր պատմութիւններ կրնան արտադրել՝ թէեւ արտաքին նման պարագայից տակ իսկ գտնուին: Ճշմարիտ է թէ հոգեկան ամենաընտիր ձիրքերով օժտուած ցեղն իսկ չպիտի կրնայ արժանաւոր պատմութիւն մ'արտադրել բոլորովին աննպաստ միջավայրի մը ազդեցութեանց տակ, որովհետեւ Գոյութիւն չունին հոն իր հոգեկան այդ ընդունակութեանց գործնեցութեանն որ զարգացմանը համար անհրաժեշտ եղող արտաքին պայմաններն կամ յարմար ազդեցութիւններ: Բայց նոյնքան եւ աւելի ճշմարիտ է նաեւ թէ բնական ամենէն նպաստաւոր միջավայրի մը ազդեցութիւններն իսկ վայելելու առանձնաշնորհուած ցեղը չպիտի կրնայ բնաւ փառաւոր պատմութիւն մ'ունենալ եթէ զուրկ է ժառանգական ընտիր ձիրքերէ կամ ընդունակութիւններէ, որովհետեւ արտաքին այդ նպաստաւոր ազդեցութեանց յարմար եղանակաւ մը հակազդելու կարողութիւնը կը պակսի իր մէջ: Յունաստանի աշխարհագրական դիրքը միայն չէր որ Յունական պանծալի քաղաքակրթութեան ծնունդ տուաւ, այլ մանաւանդ Յունական ցեղը՝ իր հոգեկան բնորոշիչ յատկութիւններովն ու ձգտումներով: Յոյնէն զատ մարդկային ուրիշ եւ ոչ մէկ ցեղ պիտի կրնար նման քաղաքակրթութիւն մը ծաղկեցնել Յունաստանի վրայ սեւէ ատեն: Իր հոգեկան բնորոշիչ յատկութեանց մէջն է ծալուած ցեղի մը պատմութիւնը եւ ոչ թէ իր ապրած բնական միջավայրին մէջ, ինչպէս գիտական մակերեսային տեսութիւն

մը կարծել տուաւ մեզ քիչ առաջ: “Աշխարհա-
գրութիւնը ծալլուած պատմութիւն մըն է” ըսե-
լու տեղ՝ “Հոգին ծալլուած պատմութիւն մըն
է” ըսելու ենք, որովհետեւ այս վերջին նախադասու-
թեամբ արտայայտուած ճշմարտութեան մէջ կը-
նայ բովանդակուիլ նաեւ առաջին նախադասու-
թեամբ արտայայտուած ճշմարտութիւնը: Պատ-
մութիւն չստեղծեր միջավայրը, այլ նպաստաւոր
ազդեցութեանց միջոցաւ կը յայտնէ միայն ինչ
որ իբրեւ կարելիութիւն արդէն իսկ ամփոփուած
է ցեղային յատկութեանց մէջ, և կամ աննպաստ
ազդեցութեանց միջոցաւ մշտնջենապէս կ'արգիլէ
անոր արտայայտումը: Հոգին է որ կ'ստեղծէ
ամեն պատմութիւն ու կը վճռէ ամեն ճակատա-
գիր՝ անհատական թէ հանրային:

Ծանօթ օրինակով մը լուսաբանենք այս
կէտը:

3

Հաստարմատ ծառ մը կը բարձրանայ հովտին
մէջ, որուն վրայ կը թառին երկնից թռչուննե-
րը եւ ստուերացը տակ կ'ապաստանին վաստակա-
բեկ կենդանիք: Ի՞նչպէս յառաջ եկաւ այդ ծա-
ռին հրաշալի կազմուածքը: Ո՞ւսկից ստացաւ ան
իր կանաչ տերեւները, իր գունագեղ ու բու-
րումնաւէտ ծաղիկները, և ո՞ւսկից իր պտուղները
քաղցրահամ: Փոքրիկ սերմ մըն էր ժամանակաւ
այդ ծառը առանց արմատի կամ բունի, ճիւղի
կամ տերեւի. ո՞ւսկից, ուրեմն, գոյութիւն առին
այսքան բարդ յօրինուածութիւններ:

Ի՞ր միջավայրին մէջ գտաւ սերմը գոյութեան
եւ աճման բոլոր տարրերը. հողէն ու ջուրէն,
օդէն ու ճառագայթէն ստացաւ ան իր կազմու-
թեան բոլոր նիւթերն և ուժեր, կը պատասխանէ
մեզ գիտութիւնը: Որչափ ալ գոհացուցիչ երևի
այս պատասխանը առաջին տեսութեամբ, ամբող-
ջական պատասխան մը չէ բնաւ. ճշմարտութեան
կէսը միայն կը յայտնէ այն: Հողն ու ջուրը,
օդն ու ճառագայթը ոչ մէկ տեսն կրցած են
ինքնիրենց ծառ մը յառաջ բերել, եւ ոչ մէկ
ատեն ալ պիտի կրնան: Հո՞ն, սերմին այդ
գաղտնածածուկ խորութեանց մէջ ամփոփուած
ներքին ոյժ մը կայ, անտեսանելի մոգ մը՝ որ
ծառին այդ դիւթական փոխակերպումները յառաջ
կը բերէ, հրաշագործ արուեստագէտ մը՝ որ գոյ-
նի, բոյրի, ձեւի ու համի կը փոխէ հողի այդ
կոշտ կտորները, ջուրի այդ անձեւ կաթիլները
և օդին այդ անտեսանելի կազեղէնները: ԿեԱնՔ
կը կոչուի բնութեան այդ մոգը, գործարանաւո-
րաց աշխարհին այդ մեծ արուեստագէտը:

Եւ ի՞նչ է կեանքը: — Հողին մէջ դրուած
այդ սերմը ուրիշ ծառէ մը յառաջ եկաւ, և այդ
ծառն ալ նախընթաց սերմէ մը. այսպէս բիրա-
ւոր ծառեր ծաղկեցան յաջորդաբար, բիրաւոր
սերունդներ եկան ու գացին, մինչեւ որ այսօր
հովտին մէջ բարձրացող այդ ծառը արտադրուե-
ցաւ: Բայց անցելոյն մէջ ապրող ամեն մէկ
ծառ ինքնածին Զանաղանութիւնների ունեցած
է, այսինքն յօրինուածութեան այնպիսի տարբե-
րութիւններ իր նախորդէն՝ որոնց ծնունդ տուող
պատճառները ո՛չ միջավայրի ու ոչ ալ ժառան-
գական ազդեցութեանց մէջ կը գտնուին, այլ

բնախօսական ու տարրաբանական գաղտնածածուկ գործողութեանց մէջ: Ինքնածին զանազանութեամբ յառաջ եկած այսպիսի կազմական փոխակերպումներ աճած ու զարգացած են միջավայրի նպաստաւոր ազդեցութեանց միջոցաւ եւ ժառանգականութեամբ փոխանցուած են սերնդէ սերունդ: Այսպէս ամեն նոր սերունդ սերմին միջոցաւ կը ժառանգէ անցելոյն մէջ ինքնածին զանազանութեամբ յանկարծ երեւան եկող ու նպաստաւոր միջավայրի մը տակ աճող կատարելագործումները, եւ նոր բան մըն ալ աւելցնելով անոնց վրայ՝ դարձեալ սերմին միջոցաւ կը յանձնէ զանոնք ապագայ սերունդներուն: Բիւր սերունդներու այս դարաւոր գործնէութեանց միջոցաւ յառաջ եկած են բուսական թագաւորութեան այսքան ճոխութիւնները, այսքան բարդ յօրինուածութիւններն ու այսքան հիանալի զանազանութիւններ: Այսօրուան սերմը, ուրեմն, իր մէջ կը պարունակէ իրմէ առաջ եկող ու գացող բիւր սերունդներու ստացած ու պահպանած կատարելագործումները: Անհուն նրշանակութիւն մ'ունի այդ միակ սերմը. օդակ մըն է որ կեանքի անցեալ յաւիտենականութիւնը ասլագայ յաւիտենականութեան հետ կը միացնէ, աւանդարան մը՝ որուն մէջ ամփոփուած են բիւր սերունդներու դարաւոր կենաց մէջ ինքնածին զանազանութեամբ ծնունդ առնող, միջավայրի միլիոնաւոր տարիներու ազդեցութիւններով աճող եւ ժառանգականութեամբ փոխանցուող կատարելագործմանց ամբողջութիւնը: Ո՛չ. միջավայրը չէ այդ ծառին ճիւղերու, տերեւներու, ծաղիկներու, պտուղներու, ձեւի ու գոյնի եւ ու-

րիւ բազմաթիւ առանձնայատկութեանց ծնունդ տուող միակ ազդակը, ոչ իսկ զլիաւոր ազդակը: Կեանքն է բոլոր այս զարմանալի արտադրութեանց ներքին պատճառը, բուն պատճառը. կեանքը՝ այսինքն միջավայրի ազդեցութեանց ինքնայատուկ եզանակներով հակազդելու կարող այն ոյժը որ կը բնակի սերմին հրաշալի յօրինուածութեանը մէջ: Կեանքն է ստեղծիչը ծառին, եւ ոչ թէ միջավայրը: Սերմին կեանքն է որ կ'որոշէ թէ ինչպիսի ծառ մը յառաջ պիտի գայ իրմէն, ինչպիսի շարքով մը պիտի ձգեստեղուիս անոր ճիւղերն, ինչ ընդհանուր ձեւ պիտի ունենան անոր տերեւներն, ինչ գոյն եւ ինչ բոյր պիտի ունենան անոր ծաղիկներն եւ ինչ համ պիտի ունենան անոր պտուղներ: Միջավայրը կրնայ միայն նպաստաւոր ազդեցութեանց միջոցաւ յայտնել սերմին մէջ ծածկուած կարելիութիւնները եւ կամ աննպաստ ազդեցութեանց միջոցաւ արգելել անոնցմէ ոմանց կամ ամբողջին արտայայտումը, կրնայ Ը՛՝ՏԲԵ՛Լ զանոնք: Կեանքն է ծառին յօրինուածութիւնը արտադրող արուեստագէտը. այդ շինութեան համար անհրաժեշտ եղող նիւթերը միայն հայթայթելու Պաշտօնն ունի միջավայրը: Հարկաւ, կեանքը ոչինչ կրնայ արտադրել առանց միջավայրի օժանդակութեան, ինչպէս արուեստագէտը ոչինչ կրնայ արտադրել առանց նիւթեղինաց, բայց ասով միջավայրը եզած շԸԼԼար ծառի մը արտադրիչը, ինչպէս թուղթի մէկ կտորը եւ քանի մը ներկեր չեն ԸԼԼար պատկերի մը արտադրիչները: Գործնականապէս անթիւ տարրերութիւններ պիտի գտնուին նոյն սեռին վերաբերող տարրեր սերմե-

րէ յառաջ եկած ծառերու միջեւ, եթէ նոյն իսկ կարելի ըլլայ միջավայրի նման ազդեցութեանց ենթարկել զանոնք, որովհետեւ իրենց ներքին յօրինուածութիւններուն միջեւ գտնուող տարբերութեանց համաձայն տարբեր կերպերով պիտի հակազդեն անոնք միջավայրի նման ազդեցութեանց, եւ հետեւաբար տարբեր արդիւնքներ յառաջ բերեն: Լաւ սերմը անեցուն ու բեղմնաւոր տունկ մը կրնայ արտադրել ճիշդ նոյն այն հողին վրայ, ուր հազիւ տկար ու անպտուղ ընձիւղներ կրնայ արձակել աւրուած սերմը: Նոյն հողէն, ջուրէն, օդէն եւ ճառագայթէն ցորեն կրնայ շինել այսինչ սերմը, իսկ որոմ՝ ուրիշ մը: Սերմին մէջ գտնուող կեանքիւ տեսակն է որ կ'որոշէ նաեւ իր հակազդեցութեանց միջոցու գոյացող տունկին տեսակը:

4

Վերի լուսաբանութենէն օգտուելով կրնանք այժմ աւելի որոշակի զանազանել միջավայրի ու հոգւոյ ունեցած բաժինները ազգի սը պատմութիւնը շինելու գործին մէջ:

Քաղաքակիրթ ազգ մը կ'ապրի աշխարհի գեղեցիկ մէկ մասին վրայ: Բարեկեզ մ'կառավարութիւն մը արդարութեան սկզբունքները գործադրել կը ճգնի անոր անդամներուն բազմատեսակ յարաբերութեանցը մէջ, եւ կենդանի կրթօնք մը սիրոյ ու սրբութեան իտէալները աստիճանաբար մարմնացնել կ'աշխատի անոր ամեն խաւերուն մէջ. Հոն Գեղարուեստը կ'երազէ եւ իր տեսիլքները կը պատկերացնէ արձանի կամ

կտուի, դաշնակի կամ թուզթի մը վրայ: Հոն Գիտութիւնը կը խոկայ, եւ ահա ճշմարտութեան ճառագայթներ կը տարածուին լուսասփիռ: Հանրային կեանքն է որ կ'ապրի ու կ'աճի, կը գործէ ու կը յառաջդիմէ ընկերական այս բարդ յարաբերութիւններով: Ի՞նչպէս յառաջ եկաւ ընկերական այս հրաշալի կազմակերպութիւնը: Ո՞ւսկից ստացաւ ան իր արդարութեան սկզբունքները, իր սիրոյ ու սրբութեան իտէալները, իր փափուկ թրթռումները գեղեցկութեան եւ իր ճառագայթարձակ յայտնութիւնները ճշմարտութեան: Վայրենիներու վնասակ մըն էին ժամանակաւ այդ ազգին նախահայրերը, առանց որոշ կազմակերպութեան, առանց արդարութեան ըսկզբանց, առանց կրօնի վեհ ներշնչմանց, առանց գեղարուեստի ու գիտութեան վսեմ իտէալներուն: Ո՞ւսկից, ուրեմն, գոյութիւն առին այսքան ճոխ արտադրութիւններ, այսքան բարդ կազմակերպութիւններ:

Իր միջավայրին մէջ գտաւ այդ ազգը իր գոյութեան եւ աճման բոլոր տարրերը, կ'ըսեն ոմանք: Իր բնակավայրին հողերն ու անտառներ, լեռներն ու ծովեր տունն անոր արհեստ եւ զբաղում. իր զանազան թշնամիները տունին անոր միութիւն եւ այդ միութենէն ծնան զանազան գործակցութիւններ: Իր գործակցութեան ստիպողականութիւնը եւ անկէ ծնած դժուարութիւններ տունին անոր կառավարութիւն եւ օրէնք: Իր բնակավայրին հովիտներն ու ծործորներ, լճակներն ու պուրակներ, զեփուռներն ու թռչնիկներ, եւ ընկերական կենաց բիւր սիրալի յարաբերութիւններ տունին անոր բանաստեղծու-

թիւնն ու երաժշտութիւն: Իր երկնքին աստղերն ու միգամածներ, իր հովիտներուն բոյսերն ու կենդանիներ եւ իր լեռներուն ապառաժեայ կողերն ու ծովուն խորութիւններն տուին անոր գիտութիւնն ու իմաստասիրութիւն: Իր երազներն ու մեռած նախահայրեր տուին անոր գերբնականին գաղափարն ու կրօնք:

Որչափ ալ գոհացուցիչ երևի այս պատասխանը հարեւանցի խորհողի մը համար, ամբողջական պատասխան մը չկրնար համարուիլ բնավերի հարցումներուն: Ճշմարտութեան մէկ մասը միայն կը յայտնէ ան, եւ այն ալ աւելի խորին ճշմարտութեան մը մակերեսային մասը: Բլբրակն ու լճակ, ծովն ու լեռ, հողն ու բոյս, օդն ու կլիմայ ինքնին ոչ մէկ ատեն կրցած են ազգ մը կազմակերպել, կենդանի ու աճեցուն, եւ ոչ մէկ ատեն ալ պիտի կրնան: Հո'ն, այդ ազգին անդամները կազմող անձանց ներսի կողմը ուրիշ ոյժ մըն ալ կայ, հրաշագործ ոյժ մը՝ որ ընկերական կենաց այդ խանդոտ գործնէութիւններն ու դիւթական երեւոյթները կ'արտադրէ. ճարտար արուեստագէտ մը՝ որ արդարութեան ու սիրոյ, գեղեցկութեան ու ճշմարտութեան հոգեզմայլ հրաշակերաններու կը փոխակերպէ բնական միջավայրէն ստացած իր ազդեցութիւնները: ՀՈԳԻ կը կոչուի մարդկային աշխարհի այդ մեծ արուեստագէտը, պատմութեան այդ ստեղծիչը:

5

Մարդկային հոգին բնական միջավայրի ազդեցութեանց հակազդելով պատմական դարաշրջանի ընթացքին մէջ արտադրած է արուեստա-

կան միջավայր մը, որ կը կոչուի Քաղաքակրթութիւն: Քաղաքակրթութեան մը մէջ կը ծընանի զարգացեալ ազգերու ամեն յաջորդական սերունդ. — ընկերական բարքերու եւ սովորութեանց, գիտութեան ու գրականութեան, արուեստական բազմատեսակ արտադրութեանց, կրօնական հաւատալիքներու եւ պաշտամանց, քաղաքական օրէնքներու, բարոյական սկզբունքներու եւ կեանքի իտէայներու մէջ: Նմանողաբար կ'իւրացնէ ամեն անհատ այն քաղաքակրթութիւնը որուն մէջ կ'ապրի, Կրօնն ազդեցութիւնները կը կրէ եւ որուն մանաւանդ կը հակազդէ: Այսպիսի բիւր ազդեցութեանց եւ հակազդեցութեանց միջոցաւ աստիճանաբար իր մարդկայնութեանը կը տիրանայ ամեն անհատ. — իր կեանքի ձգտումներուն, իր իմացական զարգացումներուն, իր բարոյական առաջնորդող ըսկզբունքներուն, իր իտէալներուն եւ գործնէութեանց ունակական եղանակներուն. մէկ խօսքով՝ իր նկարագրին: Իրեն համապատասխան նկարագրերու ծնունդ կուտայ ամեն քաղաքակրթութիւն, եւ կազմուած նկարագրին ալ՝ իր կարգին՝ կը գրէ ազգի մը պատմութիւնը ու կը վճռէ անոր ճակատագիրը: Նկարագրին է որ օրհնութիւններու պիտի վերածէ բնութեան եւ ընկերութեան զանազան ազդեցութիւններն եւ կամ անէժքներու: Յոռի նկարագիրը յոռի պատմութիւն մը պիտի արտադրէ անխուսափելիօրէն՝ թէեւ ենթարկուի բնութեան եւ ընկերութեան լաւագոյն ազդեցութեանց, իսկ լաւ նկարագիրը պիտի կրնայ լաւ պատմութիւն մ'ստեղծել բնական եւ ընկերական բազդատարար աննպաստ

Հանգամանաց մէջն իսկ: Ո՛չ. բնական միջա-
վայրը չէ ազգի մը գոյութեանն ու յառաջդի-
մութեան միակ կամ նոյն իսկ գլխաւոր պայմա-
նը, այլ մանաւանդ իր ցեղային յատկութիւն-
ներն եւ այն քաղաքակրթութիւնը որուն ազդե-
ցութեանց կը հակադդեն իր ունեցած այս յատ-
կութիւններն ու այսպէս կ'արտադրեն համապա-
տասխան նկարագիր մը: Լաւ նկարագիրն է
վերջնական պայմանը ամեն ժողովուրդի յառաջ-
դիմութեանն ու երջանկութեանը: Որովհետեւ
նկարագիրն է որ կենսատու յարաբերութեան մը
մէջ պիտի գնէ անհատը կամ ընկերութիւնը
բնական միջավայրի առաւելութեանց, անցեալ
ու ժամանակակից դրականութեան, կրօնական ու
քաղաքական կազմակերպութեանց, պատմական
անցեալին կտակած ամենէն թանկագին ժառան-
գութիւններուն հետ: Նկարագիրն է որ պիտի
կարողացնէ զայն՝ այս տեսակ ներշնչող յարաբե-
րութեանց միջոցաւ՝ ստեղծել աւելի գերազանց
գրականութիւն մը, աւելի իտէալական գեղար-
ուեստ մը, աւելի արդար կառավարութիւն մը,
աւելի երջանիկ ընտանիք մը եւ աւելի երկնազ-
դեցիկ կրօնք մը: Նկարագիրն է որ իրարու հետ
պիտի միացնէ ժողովուրդի մը անդամները հա-
մակրութեանն ու գործակցութեան անտեսանելի
բայց անխզելի կապերով, որ ամբողջական կեան-
քով մը պիտի ապրեցնէ զանոնք՝ ընկերական կա-
տարելագործման վսեմ նպատակն իրագործելու
սահմանուած: Աշխարհագրութիւնը ծալլուած
պատմութիւն մըն է ըսելէ աւելի հաստատապէս
կրնան ըսել. «Նկարագիրն է ազգի մը ծալլուած
պատմութիւնը»:

ՆԿԱՐԱԳՐԻ

1

Մարդկային կենաց միակ նպատակն է նկարա-
գիր արտադրել ու անեցնել: Աննշանակ խօսք
մը կրնայ երեւիլ այս բոլոր անոնց համար որ
ընդհանուր գաղափար մը գոնէ կազմած չեն
մարդուս հոգեկան բնութեանը մասին: Զանազ
բացատրել նշանակութիւնը վերի նախադասու-
թեամբ արտայայտուած ճշմարտութեան:

Մեծ քաղաք մը կը տարածուի մեր առջեւ,
ուր ընկերութիւնը կ'ապրի ու կը շարժի: Հոս
մայրը փափկասուն մանկան մը վրայ կը հսկէ,
հոն հայրը կ'աշխատի տքնաշան: Ասդին կոյսը
իւր նորափթիթ սիրոյն գեղերփինած երկինքներուն
մէջը կը թափառի, անդին պատանին իր սիրուհին
կ'երազէ: Հոս վշտաբեկ հոգին իր սեւ բաղդը
կ'ողբայ, հոն քինախնդիրը թակարդներ կը լարէ
իւր թշնամիին համար: Ասդին արուեստագէ-
տը իր տեսիլքները կը պատկերացնէ,
իմաստասէրը իր խոկերը կը մարմնացնէ ու
գիտնականը իր գտած ճշմարտութիւնները կը
տարածէ, անդին պերճախօսը սրտեր կը հրահրէ,
օրէնսագէտը՝ արգարութեան սկզբունքները կը
գործնականացնէ եւ բարեկարգիչը ընկերութեան
մեծ զանգուածը շարժել կը ջանայ: Ընկերական
կենաց բոլոր այս երեւոյթներն ուրիշ բան
չեն եթէ ոչ արտադրութիւնները զգացումներու:

Զգացմանց մեծ հոսանքն է որ կ'անցնի մարդկային սրտէն իբրեւ վախ կամ բարկութիւն, սէր կամ համակրութիւն ու կ'արտադրէ ընկերական կենաց բոլոր գործնէութիւնները: Եւ խորհուրդը կուգայ ուղղել ու կառավարել զգացումներու այս հոսանքին ընթացքը: Զգացումներու եւ խորհուրդներու ամբողջութիւնը կը կոչուի «Հոգի», եւ այս հոգիին գործի մէջ արտայայտումը կը կոչուի «Նկարագիր»:

Երկար դարեր հարկ են եղած մարդկային հոգին ազնուացնելու, հետեւապէս նաեւ անոր նկարագիրը կատարելագործելու: Սխալ է բոլորովին այն կարծիքը թէ հապէս անփոփոխ գոյութիւն մըն է մարդկային հոգին: Աճող կեանք մըն է հոգին: Ամեն կեանք պարզագունէն կ'սկսի ու դէպի բազադրեալը կ'ընթանայ. ամեն կեանք սաղմնային վիճակէ մը կ'սկսի եւ աստիճանաբար կը զարգանայ ու կը ճիւղաւորի: Այսպէս է Ֆիզիքական կեանքը եւ այսպէս հոգեկան կեանքը, այսպէս է անհատական կեանքը եւ այսպէս ընդհանրական կեանքը: Նախնական ընկերութեան մը մէջ չենք կրնար բնաւ գտնել հոգեկան այն բարձրագոյն ստորագելիքները, որոնք ներկայ մարդկութեան փառքն ու պարծանքը կը կազմեն ու կը դնեն անտեսանելի հիմքերը ապագայ փառաւորագոյն քաղաքակրթութեան մը:

Կռուիլ էր նախնական մարդուն ամբողջ կեանքը, կողոպտել ու սպաննել: Առանց սարսուռ մ'զգալու կրնար անիկա արիւնը խմել իր սպաննած մարդուն եւ միսը ուտել, կրնար առանց քստմնելու իր գերի բռնած մարդիկը զրկել իր ազգականներուն, իր ընտանիքին, իր գա-

ւակներուն որպէսզի անոնց մտովը խորտիկներ պատրաստեն ու տօնախմբութիւններ ընեն. կրնար մարդ որսալ՝ պարզապէս անոնց զանկերովը իր տան պատերը զարդարելու համար: Նախանձի, ատելութեան ու վրէժխնդրութեան զգացումներն էին նախնական մարդուն բնորոշիչ յատկութիւնները: Այս զգացումները տիրող դիրք մը կը գրաւէին անոր հոգւոյն մէջ. այս զգացմանց սպասարկուներն էին գլխաւորաբար անոր իմացական կարողութիւնները ու մարմնական ոյժերը: Իրաւ է թէ ընտանեկան ու ցեղային նեղ շրջանակի մը մէջ սիրոյ եւ համակրութեան զգացումներն ալ կրնային գործնէութեան ասպարէզ մը գտնել, բայց արշալուսային ցուքերու կը նմանէին անոնք, տկար ու դողդոջ. գազանային բնութեան գիշերը կը տիրէր նախնական մարդուն հոգեկան աշխարհին մէջ:

Եթէ հոգին ամբողջութիւնն է անհատի մը զգացումներուն ու խորհուրդներուն, կոյր ըլլալու է մարդ պնդելու համար թէ աճող ու զարգացող կեանք մը չէ այն: Մեծ անջրպետ մը կայ նախնական մարդու մը եւ քաղաքակիրթ մարդու մը հոգիներուն, հետեւապէս նաև անոնց նկարագրերուն միջեւ: Իբր սերունդներու տքնաջան աշխատութեանց շնորհիւ միայն յառաջ եկած է նկարագրի այս փոփոխութիւնը: Ընկերական բոլոր ազդեցութիւնները եկած են այս փառաւոր գործին իրականացմանը համար գործակցելու: Ընտանիքը եկած է սիրոյ ու համակրութեան զգացումները խորունկցնելու մարդկային սրտին մէջ, ցեղը կամ ազգը եկած է զանոնք ընդլայնելու, կրօնը եկած է զանոնք սրբագոր-

ծելու և պաշտաման ու ձգտման իտէալներ դարձնելու, կառավարութիւնը եկած է արդարութեան եւ իրաւունքի դադարափարները զօրացնելու, գեղարուեստը եկած է սրտի փափկագոյն յոյզերը ստեղծելու, գիտութիւնը եկած է ճշմարտութեան սէրը ներշնչելու, եւ ընկերական ամեն տեսակ կազմակերպութիւններ եկած են ասպարէզներ բանալու այս զգացումներուն գործնէութեանցը համար: Քաղաքակրթութիւն մը ստեղծուած է այսպէս մարդկային ընկերութեան այս դարաւոր գործնէութիւններէն, որուն մէջ կը ծնի ու կը մեծնայ ամեն սերունդ, եւ որուն ազդեցութեանց համաձայն կը կաղապարուի իր նըկարագիրը: Մարդկային կենաց բոլոր գործնէութիւններուն միակ նպատակն է եղած, ուրեմն, նկարագիր կազմել ու նկարագիր ճոխացնել:

2

Հոգեկան մեծ ճշմարտութիւններու վրայ հաստատուած են կրօնի բոլոր հիմնական վարդապետութիւններ, թէեւ ժամանակիս խորհրդոյն համապատասխան ձեւերով ներկայացուած չըլլան անոնք: Իմաստակը միայն կրնայ ծաղրել հոգեկան դարաւոր փորձառութեանց այս թանկագին արտադրութիւնները: Կրօնը ներկայացուցած է մարդկային հոգին իբրեւ ճակատամարտի դաշտ մը, ուր դէմ առ դէմ կը գտնուին «Հին Մարդը» ու «Նոր Մարդը»: Եւ բնաշրջման վարդապետութեան լուսով գիտութիւնը կրնայ այսօր ըմբռնել կրօնի յայտնած այդ ահաւոր ճշ-

մարտութեան նշանակութիւնը: Երկար ու տաժանելի ճամբորդութենէ մը վերջ միայն կրցած է մարդկային հոգին: Հասնել իր ներկայ վիճակին. մութ անցեալ մը թողուցած է անկա իր ետին: Տասը քսան տարիներու անցեալ մը լոկ շունի այդ «Հին Մարդը», այլ հազարաւոր, միլիոնաւոր տարիներու պատկառելի անցեալ մը: Անձնասէր է այդ Հին Մարդը, նախանձոտ ու վրէժխնդիր: Անասնական շատ զօրաւոր ցանկութիւններ ունի ան, եւ զանոնք գոհացնել է իր կենաց գլխաւոր շարժառիթը: Այլասէր է Նոր Մարդը, համակիր ու գթոտ. եւ սրտի ազնուագոյն յոյզերը գոհացնել է իր կենաց բարձրագոյն ձգտումը: Այս երկու անասանելի Մարդերուն կռուոյ դաշտն է ահա հոգին, կռիւ մը՝ որուն ելքէն կախեալ է ընդհանուր մարդկութեան ճակատագիրը:

Ժառանգականութիւնն է Հին Մարդուն ոյժը: Կենսաբանական հաստատուն ճշմարտութիւն մըն է թէ ծնողաց ժառանգական յատկութիւնները կը փոխանցուին իրենց զաւակաց: Երկար դարերու կեանք մ'ունեցած է մարդուս ստորնագոյն բնութիւնը, հետեւապէս ամենէն արմատական մասը կը կազմէ անոր հոգեկան կենաց: Ասոր համար է որ էապէս չար է մարդկային բնութիւնը՝ բարոյական բարձրագոյն տեսակէտներէ դիտուելով: Այս տեսակէտով ընտանեցած կենդանիներու կը նմանին մարդիկ: Որչափ ալ ընտանեցած ըլլայ կատուն, դարձեալ բնազդօրէն ճանկել կ'ուզէ իրեն երկնցող ձեռքը, անցեալին ձայնը շատ զօրաւոր է անոր բնութեան մէջ: Մարդուս ընտա-

նեցուցիչ ազդեցութենէն թող հեռի գտնուի այն եւ վազրի նման վայրագ սերունդ մը պիտի արտադրէ կրկին: Բանի մը հազար տարիներու ընտանեցումը չէ կրցած բնաւ հետաջինջ ընել անոր գազանային բնութիւնը: Մարդկային անհատին հոգեկան բնութիւնն ալ քաղաքակրթութեան ազդեցութեանց տակ որքան ալ ազնուացած ըլլայ, դարձեալ կը կրէ իր խորքերուն մէջ հին անասնական բնութիւնը. դարձեալ իր ներսէն կը բարձրանայ անցելոյն ձայնը:

Իտէալն է նոր Մարդուն ոյժը. — Գեղեցկին, ճշմարտին ու Բարիին իտէալը: Իտէալն է որ պիտի մաքառի ժառանգականութեան հնամի հսկային դէմ ու փրկէ մարդկութիւնը անոր մահացու ճիրաններէն: Մէկ պայման կայ սակայն փրկութեան, այն է պաշտել իտէալը. — պաշտել ճշմարիտը, Գեղեցիկը ու Բարին: Քաղաքակրթութիւնը պաշտամունքն է մարդկային հոգիին, ու պատմութիւնն ալ արձանագրութիւնը մարդկային սեռին փրկագործութեանը: Որովհետեւ ի՞նչ է Գեղարուեստը եթէ ոչ պաշտամունքը Գեղեցկին. ի՞նչ է Գիտութիւնը եթէ ոչ պաշտամունքը ճշմարտին. ի՞նչ է կրօնը եթէ ոչ պաշտամունքը Բարիին: Գեղեցկին, ճշմարտին ու Բարւոյն այս շարունակական պաշտամունքն է ահա որ աստիճանաբար պիտի փրկէ մարդկային անհատը անցելոյն վայրաքարչ ազդեցութիւններէն, որ պիտի պարզէ անոր առջեւ գործնէութեան շատ լայն ասպարէզներ, որ դուրս պիտի հանէ անհատը իր անասնական բնութենէն, դուրս իր ՆՍ ին նեղ բանտէն ու պիտի առաջնորդէ զայն հոգեկան կեանքի ճոխութեանց:

Ամենէն մեծ սխալն էր որ գործեց մարդ երբ իրարու թշնամի համարեց Գեղարուեստը, • Գիտութիւնն ու կրօնը: Մարդկային հոգւոյն հաղորդակցութիւններն են ասոնք՝ երեքն ալ անխտիր՝ Աստուծոյ հետ, այսինքն Գեղեցկին, ճշմարտին ու Բարւոյն Անձնաւորութեանը:

Ճշմարտութիւնը զձեզ պիտի փրկէ, ըսաւ Քրիստոս: Այո՛, ճշմարտութիւնը պիտի փրկէ զմեզ. ճշմարտութիւնը որ կը շողչողայ այնքան երկնից աստղերուն որքան անբիծ հոգիի մը մէջ: Գեղեցկութիւնը պիտի փրկէ զմեզ. Գեղեցկութիւնը որ կը ժպտի այնքան վարդի մը թերթիկներէն որքան առաքինի մարդու մը աչքերէն: Սէրը պիտի փրկէ զմեզ. Սէրը որ կը կաթկթի մօր մը դէմքէն, որ կը ցոլանայ կոյսի մը աչքերէն, որ կը խօսի առաքեալի մը շրթներէն եւ որ կը բղխի անձուէրի մը կեանքէն, Սէրը պիտի փրկէ զմեզ: Գեղեցկութիւն, ճշմարտութիւն, Արդարութիւն, Սրբութիւն ու Սէր՝ ասոնք են մարդկութեան իտէալները որ աստիճանաբար կ'իրագործուին գրականութեան, ընտանիքի եւ ընկերական բազմատեսակ կազմակերպութեանց մէջ. ասոնք են որ աստիճանաբար կ'ազնուացնեն մարդկային անհատին սիրտը ու կը լայնցնեն անոր միտքը. ասոնք են որ մարմին կ'առնեն զիրենք պաշտող բոլոր անհատից կենացը մէջ ու կ'ստեղծեն այսպէս ազնիւ նկարագիրը, եւ կը պահպանեն զայն ու կ'աճեցնեն:

Քաղաքակրթութեան բոլոր ազդեցութեանց վերջնական նպատակն է փրկել մարդկային անհատը իր անասնական բնաւորութեան կապանքներէն, ստեղծել, պահպանել ու կատարելագործել

անոր մէջ ազնիւ նկարագիր մը. Աստուած-Մար-
գուն փոխել Անասուն-Մարգը. գործ մը՝ որուն
համար երկունք քաշած է մարդկութիւնը ան-
հաշունելի դարեր ու պիտի քաշէ դեռ:


Կատարեալ նկարագիրը գլուխ գործոցն է
բնութեան, փառապանծ գմբեթն է տիեզերքի
տաճարին, նպատակակէտը մարդկային կենաց եւ
միակ վախճանը ամեն իտէալի:

ՎԵՐՁ




ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

	Երես
1. ԻՏԷԱԼԻՆ ԾՆՈՒՆԴԸ	1
2. ԻՏԷԱԼԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ	32
3. ԻՏԷԱԼ ԵՒ ԴՐԴՈՒՄ	47
4. ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ	57
5. ԱԽՏԱՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ	74
6. ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՉՐԱՑՈՒՄԸ	91
7. ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԸ	103
8. ՃՈՆ ԿԵԱՆՔԸ	113
9. ԿԵՆԱՑ ՃՈՆԱՑՈՒՄԸ	124
10. ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԷՏՔԸ	134
11. ՀԱՄԱԿՐՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՄԸ	155
12. ԾԱՌԱՑՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ	162
13. ԻՐԱԿԱՆՆ ՈՒ ԻՏԷԱԼԱԿԱՆԸ	174
14. ՄԻՋԱՎԱՅՐ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ	184
15. ՆԿԱՐԱԳԻՐ	199



38



ՀՀ Ազգային գրադարան

NL0146272

15

U-71